По своему содержанию эта гарантия более высокого уровня по сравнению с общими конституционными гарантиями неприкосновенности личности. Она не является личной привилегией, а имеет публично-правовой характер, призвана служить публичным интересам, обеспечивая повышенную охрану законом личности парламентария в силу осуществляемых им государственных функций, ограждая его от необоснованных преследований, способствуя беспрепятственной деятельности парламентария и тем самым – парламента, его самостоятельности и независимости.

Вопрос о том, приводит ли наличие иммунитета к определенным злоупотреблениям со стороны парламентариев, является наиболее дискуссионным. На современном этапе сложилась неоднозначная ситуация, когда, с одной стороны, парламентский иммунитет во всех государствах мира воспринимается как гарант безопасности многих политических свобод, но, с другой стороны, возникают злоупотребления данным правом со стороны парламентариев.

Конституционный Суд РА отметил, что необходимо обратить внимание на возможные опасности, в частности, опасности злоупотребления депутатским иммунитетом и его превращения в привилегию отдельного человека. Кроме того, именно с учетом этих рисков в настоящее время в ряде стран с развитой демократической системой наблюдается явная тенденция к полному отказу или резкому сужению неприкосновенности депутата. Это обосновывается главным образом тем, что цели, обеспечиваемые указанным институтом, в действующих правовых системах могут быть достигнуты иными средствами. Однако вышеизложенное не означает, что институт депутатской неприкосновенности в целом потерял свою актуальность. Если в устоявшихся демократических государствах можно добиться преследуемой цели иммунитета депутата за счет устоявшихся систем, то в развивающихся или новых демократиях, где системы еще окончательно не состоялись, дело обстоит совсем иначе, и не исключено, что уголовное преследование используется как инструмент подавления политических оппонентов. В такой ситуации, согласно заключению Конституционного Суда, возникают следующие ключевые вопросы:

- с одной стороны, за счет института неприкосновенности депутата необходимо обеспечить независимость депутата, а также непрерывное функционирование парламента (поскольку иные системы, которые



могли бы служить средством для достижения данной цели, в полной мере не состоялись);

- с другой стороны, необходимо это осуществить с таким взвешенным подходом, чтобы неприкосновенность самого депутата не нарушала права других лиц и не становилась фактором, подрывающим авторитет того же парламента<sup>1</sup>.

По данному поводу Европейская комиссия за демократию через право (Венецианская комиссия) в своем докладе отметила, что в некоторых странах, которые все еще находятся в процессе перехода к реальной демократии или где демократия еще относительно хрупка, есть практика использования полномочий полиции или прокуратуры для дискредитации, наказания или уничтожения политических оппонентов, в том числе членов парламента. Не в каждой стране есть доверие к судебной власти в том, что она действует независимо и не подвергается чрезмерному влиянию со стороны исполнительной власти. Члены парламента, и особенно представители оппозиции, могут в некоторых странах подвергаться политическому преследованию в форме необоснованных юридических обвинений, в отличие от обычных граждан<sup>2</sup>.

Таким образом, парламентский иммунитет – один из основных элементов статуса парламентария, важнейшая правовая гарантия его профессиональной деятельности. Однако в связи с данным институтом возникают некоторые проблемные вопросы:

- невозможно сделать однозначный вывод относительно того, означает ли неприкосновенность парламентария его освобождение также от ответственности за совершенное правонарушение, в том числе уголовное или административное, если такое правонарушение совершено не в связи с осуществлением собственно депутатской деятельности;

- вопрос о наличии у парламентариев иммунитета от гражданских исков не урегулирован на законодательном уровне;

- разве наличие такой привилегии у парламентариев не противоречит принципу равенства всех граждан перед законом или это

<sup>1</sup> Постановление Конституционного Суда РА от 7 декабря 2021 года ПКС-1619/  
[https://www.concourt.am/decision/decisions/6357d066b4629\\_sdv-1619.pdf](https://www.concourt.am/decision/decisions/6357d066b4629_sdv-1619.pdf)

<sup>2</sup> Report on the scope and lifting of parliamentary immunities adopted by the Venice Commission at its 98th plenary session / CDL-AD(2014)011/ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e)

скорее исключение из общего правила, сделанное в силу осуществляемых им государственных функций, ограждая его от необоснованных преследований;

- приводит ли наличие иммунитета к определенным злоупотреблениям со стороны парламентариев и как бороться с данным явлением.

По нашему мнению, для разрешения вышеизложенных проблем, нужен системный анализ разных сфер правовой системы страны и сложившейся практики правоприменения, включая улучшение избирательной системы, разработку и реализацию политики, направленной на повышение профессионализма парламентариев. Также на законодательном уровне необходимо закрепить правило о том, что неприкосновенность депутатов, в отличие от индемнитета, прекращается с истечением срока их полномочий (речь идет также о деяниях, совершенных в течение срока исполнения полномочий депутата), кроме того, на практике нужно применять узкое толкование неприкосновенности и свести его только к действиям, связанным с профессиональной деятельностью депутата.

### **Список использованных нормативно-правовых актов и литературы**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 06.12.2015 թ. հանրաքվեով, փոփոխվել է 22.06.2020 թ. Ազգային ժողովի կողմից)  
<https://www.concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra>
2. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունվել է 16.12.2016 թ., ուժի մեջ մտել՝ 18.05.2017 թ.)  
<http://www.parliament.am/parliament.php?id=bylaw&lang=arm>
3. ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թ. սեպտեմբերի 13-ի ՍԴՈ-1476 որոշում <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1476.pdf>
4. ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թ. դեկտեմբերի 7-ի ՍԴՈ-1619 որոշում/ [https://www.concourt.am/decision/decisions/6357d066b4629\\_sdv-1619.pdf](https://www.concourt.am/decision/decisions/6357d066b4629_sdv-1619.pdf)

5. ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թ. փետրվարի 1-ի ՍԴՈ-1627 որոշում/ [https://www.concourt.am/decision/decisions/61fd6ab45617e\\_sdv-1627.pdf](https://www.concourt.am/decision/decisions/61fd6ab45617e_sdv-1627.pdf)

6. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. – Москва: Издательство “НОРМА”, 2007.

7. **Сухарев А.Я.** Большой юридический словарь. – Москва: ИНФРА-М, 2008.

8. **Чиркин В.Е.** Конституционное право России. – Москва, 2004.

9. **Чудаков М.Ф.** Конституционное государственное право зарубежных стран. - Москва, 1998.

10. Доклад “О роли оппозиции в демократическом парламенте” Европейская комиссия за демократию через право (Венецианская комиссия) / Исследование № 497/2008 /CDL-AD(2010)025/ Страсбург, 15 ноября 2010 года/

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)025-rus](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)025-rus)

11. “Профессиональные и этические стандарты для парламентариев: Анализ существующей ситуации”/ Опубликовано Бюро ОБСЕ по демократическим институтам и правам человека/ (БДИПЧ ОБСЕ)/ 2013/

<https://www.osce.org/files/f/documents/b/5/99694.pdf>

12. Журнал “Коммерсантъ Власть”, №18 от 11.05.2009,

<https://www.kommersant.ru/vlast/2009-05-11>

13. Report on the scope and lifting of parliamentary immunities adopted by the Venice Commission at its 98th plenary session /CDL-AD(2014)011/

[https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2014\)011-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2014)011-e)

**ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ՝ ՈՐՊԵՍ ՎԵՐՋԻՆԻՍ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԵՐԱՇԽԻՔԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ**

**Ամփոփագիր**

Պատգամավորի կարգավիճակին վերաբերող հարցերը քննարկման առարկա են հանդիսանում թե՛ հասարակության մեջ, թե՛ իրավագիտության ոլորտում: Մասնավորապես, սուր քննարկումների տեղիք է

տալիս պատգամավորի կարգավիճակի այնպիսի կարևոր տարրը, ինչպիսին է պատգամավորական անձեռնմխելիությունը:

Սահմանադրությունը կարևորագույն սահմանադրական գործառույթներ իրականացնող մի շարք պաշտոնատար անձանց օժտել է անձեռնմխելիությամբ, որի նպատակը նախևառաջ այդ անձանց բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելն է, ինչպես նաև այդ անձանց պաշտպանելն է նրանց լիազորություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից: Մասնավորապես, սահմանադրորեն ամրագրված է, որ պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար: Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

Պատգամավորի անձեռնմխելիությունը պատգամավորի կարգավիճակի հիմնական տարրերից է, նրա գործունեության իրավական կարևորագույն երաշխիքը: Այնուամենայնիվ, առկա են որոշ հիմնախնդիրներ՝ կապված այս ինստիտուտի հետ:

Սույն հոդվածում քննարկվում են պատգամավորի անձեռնմխելիության ծավալը և բովանդակությունը՝ որպես վերջինիս մասնագիտական գործունեության կարևորագույն իրավական երաշխիք: Համակարգային վերլուծության հիման վրա բացահայտվել են որոշ հիմնախնդիրներ և մշակվել առաջարկներ՝ այս ոլորտում օրենսդրական կարգավորումը բարելավելու համար:

**Հիմնաբառեր.** պատգամավորի կարգավիճակ, անձեռնմխելիություն, քրեական հետապնդում, ինդեմնիտետ:

## SOME ISSUES OF IMMUNITY OF DEPUTIES AS CONSTITUTIONAL GUARANTEE OF THEIR PROFESSIONAL ACTIVITY

### Annotation

Questions regarding the parliamentary status are among the debatable both in society and in jurisprudence. In particular, such an important element of the status of a parliamentarian as the scope and content of parliamentary immunity causes a sharp controversy.

The Constitution has endowed a number of officials exercising important constitutional functions with immunity, the purpose of which is primarily to guarantee the normal and effective activities of these persons, as well as their protection from unlawful interference with their powers and unjustified prosecution. In particular, the Constitution of the Republic of Armenia establishes a rule according to which, a Deputy may not, during his or her term of powers or thereafter, be prosecuted or held liable for an opinion expressed or voting within the framework of parliamentary activities. Criminal prosecution may be initiated against a Deputy only upon the consent of the National Assembly. A Deputy may not be deprived of liberty without the consent of the National Assembly, except for the case of having been caught at the time of committing a criminal offence or immediately thereafter.

Parliamentary immunity is one of the main elements of the status of a parliamentarian, the most important legal guarantee of his activity. However, there are some problematic issues associated with this institution.

This article discusses the scope and content of parliamentary immunity as the most important legal guarantee of the professional activity of deputies. Based on a system analysis some problems have been identified and proposals have been developed to improve legislative regulation in this area.

**Keywords:** parliamentary status, personal immunity, criminal prosecution, indemnity.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 17.03.2023, փրվել է գրախոսության 20.03.2023, ընդունվել է փապագրության 05.04.2023:*



**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*«Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, Հայ-ռուսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, իրավունքի մագիստրոս, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ»*

DOI: 10.59560/18291155-2023.1-61

**ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ<sup>1</sup>**

**Ամփոփագիր**

Հոդվածը նվիրված է անձեռնմխելիության ինստիտուտի կայացման հիմնախնդիրների և դրա էության հետազոտմանը:

Ուսումնասիրելով անձեռնմխելիության ինստիտուտի ծագումնաբանությունը՝ հետազոտության ընթացքում առանձին ուշադրություն է դարձվել ժամանակակից պայմաններում անձեռնմխելիության ինստիտուտի դերի, նշանակության և ապահովման առանձնահատկություններին: Վերլուծելով առկա իրավակարգավորումները՝ փաստվել է, որ անձեռնմխելիության ինստիտուտը ոչ թե անձնական արտոնություն է, այլ պաշտոնեական լիազորությունները անխափան և անխոչընդոտ կատարելու համար հավելյալ երաշխիք:

**Հիմնաբառեր.** անձեռնմխելիություն, իմունիտետ, պատգամավոր, ընտրական իրավունք, իրավական կարգավիճակ:

Անձեռնմխելիություն հասկացությունը, որպես կանոն, օգտագործվում է անձնական իրավական կարգավիճակի սահմանման համար<sup>1</sup>: Համաձայն

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է «Վերլուծության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR-5E006):

1(109)2023  
◆ ՍԵՆԵԿԻՆԻՍԻ  
◆ ՍՏԵՆԻՍԻՆԻՍԻ  
61

Հ. Աճառյանի Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի, անձեռնմխելիությունն այն է՝ ինչի որ չի կարելի ձեռք տալ, փոփոխել, օգտագործել և այլն<sup>2</sup>: Անձեռնմխելիության գաղափարը ձևավորվել է դեռևս Հին Հռոմում, երբ տրիբունաների անդամներն իրենց գործառույթների անխափան կատարման համար սկսեցին օգտվել հատուկ պաշտպանությունից<sup>3</sup>: Ինչ վերաբերում է պատգամավորական անձեռնմխելիությանը, որը մասնագիտական գրականության մեջ սովորաբար կիրառվում է որպես պատգամավորական իմունիտետ, սկիզբ է առել անգլիական խորհրդարանից, 14-րդ դարի վերջին: Դեռևս անտիկ շրջանում ձևավորված և հարյուրամյակներ գիտական հետազոտությունների առարկա հանդիսացած անձեռնմխելիության ինստիտուտն ամբողջապես, և դրա իրագործման մեխանիզմներն ու ծավալները մասնավորապես, դուրզն անգամ չեն կորցրել իրենց արդիականությունը: Ավելին, անձեռնմխելիության ինստիտուտի կայացման և անխափան գործարկման հիմնախնդիրները Ժամանակակից պայմաններում էլ ավելի մեծ նշանակություն ունեն՝ հատկապես Ժողովրդի քաղաքական իրավունքների և քաղաքական կամքի իրացման տեսանկյունից:

Չնայած այն հանգամանքին, որ առ այսօր չկան սահմանված միջազգային կանոններ, համաձայն որոնց պետությունները պարտավորված են նմանօրինակ կարգավիճակով օժտել որոշակի պաշտոնատար անձանց, այդուհանդերձ, պետությունները սահմանադրական կամ օրենսդրական մակարդակում սահմանում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց իմունիտետի այս կամ այն մոդելը: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ պատգամավորական անձեռնմխելիության կամ իմունիտետի սահմանման հիմք է հանդիսացել Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի Օրինավարչական (ներկայիս

<sup>1</sup> Юридическая энциклопедия <https://yuridicheskaya-entsiklopediya.slovaronline.com/1029-%D0%BD%D0%B5%D0%BF%D1%80%D0%B8%D0%BA%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>

<sup>2</sup> Հ. Աճառյանի Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, էջ 114 [http://www.nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY\\_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B4%D5%AD%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6](http://www.nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B4%D5%AD%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6)

<sup>3</sup> Использование института неприкосновенности в странах Евросоюза, էջ 5 <https://transparency.org.ru/wp-content/themes/transparency-child/special/greco/docs/neprikosnovennost.pdf>

Պետական-իրավական) հանձնաժողովին դեռևս 1920 թ.-ի մարտի 24-ին պատգամավորական անձեռնմխելիության վերաբերյալ օրինագիծ մշակելու հանձնարարականը<sup>1</sup>:

Հաշվի առնելով որոշակի թվով պաշտոնատար անձանց կողմից իրականացվող գործառույթների կարևորությունն ու նշանակությունը՝ սահմանադրական բարձր մակարդակով օժտվել են անձեռնմխելիությամբ, որն առաջին հերթին կոչված է երաշխավորելու վերջինների բնականոն և արդյունավետ գործունեությունը՝ ապահովագրելով լիազորությունների իրացման ընթացքում հնարավոր տարատեսակ ճնշումներից և հետապնդումներից: Ընդ որում, կախված պաշտոնատար անձանց կարգավիճակից և գործունեության առանձնահատկությունից՝ Սահմանադրությունն ամրագրել է անձեռնմխելիության տարբեր ծավալներ և հաղթահարման ընթացակարգեր՝ այդպիսով չնույնացնելով օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի ներկայացուցիչների կարգավիճակային առանձնահատկությունները:

Մանավորապես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն<sup>2</sup> Ազգային ժողովի պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և, մասնավորապես, պատգամավորներին հավելյալ սահմանադրական պաշտպանության տրամադրումը պայմանավորված է նրանց սահմանադրական հատուկ կարգավիճակով և կարգավիճակից բխող գործառույթների նշանակությամբ:

Միևնույն ժամանակ, Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ նկարագրում է, թե միայն որ դեպքում և ինչ ընթացակարգերով է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվում և երբ է հնարավոր պատգամավորին զրկել ազատությունից և անգամ նշվում է կոնկրետ ժամանակահատված: Մասնավորապես, համաձայն Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատգամավորի նկատմամբ

<sup>1</sup> «Խորհրդարան 1918-1920». պատգամավորի իմունիտետի հիմքը [http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13913&year={\\$Year}&month={\\$Month}&day={\\$Day}](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13913&year={$Year}&month={$Month}&day={$Day})

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 96, մաս 1-ին <https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra>



քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուններկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

Այսինքն՝ Ազգային ժողովի պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարելի է հարուցել և նրան կարելի է ազատությունից զրկել բացառապես Սահմանադրության 96-րդ հոդվածում մատնանշված պայմանների պահպանմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով ամրագրված պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտը պատգամավորի կարգավիճակի հիմնաքարային նշանակություն ունեցող հատկանիշ է, որով ապահովվում է պատգամավորի գործունեության իրավական երաշխիքը: Հետևաբար, իր բնույթով և բովանդակությամբ, պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտն էլ ավելի բարձր մակարդակի երաշխիք է, որը տարբերվում է նաև Սահմանադրության 25-րդ և 27-րդ հոդվածներով ամրագրված ընդհանուր ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքից և անձնական ազատության երաշխիքներից: Սակայն, պատգամավորական անձեռնմխելիությունը ոչ թե արտոնություն է, այլ պատգամավորի գործունեությամբ պայմանավորված, հանրային-իրավական բնույթ ունեցող ինստիտուտ, որի նպատակը հանրային շահն անխոչընդոտ սպասարկելն է: Այս է պատճառը, որ Սահմանադրության 96-րդ հոդվածը կարծեք թե որոշակի բացառություն է սահմանում Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքից:

Այսինքն՝ Սահմանադրությունը, հաշվի առնելով Ազգային ժողովի պատգամավորի՝ ժողովրդի ուղղակի ձայների միջոցով ընտրվելու հանգամանքը, Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասում ներկայացված պայմաններում որպես պատգամավորին ազատությունից զրկելու կամ նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլատրող, այն է՝ պատգամավորական անձեռնմխելիությունը հաղթահարելու իրավասություն ունեցող հանրային իշխանության մարմին է

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(109)2023

նախանշում բացառապես Ազգային ժողովը: Հետևաբար, բացի Ազգային ժողովից, որևէ այլ ինստիտուտ պատգամավորական անձեռնմխելիությունը հաղթահարելու լիազորությամբ օժտված չէ:

Հարկ է նաև փաստել, որ Սահմանադրության 96-րդ հոդվածը, ընդհանուր առմամբ, ամրագրում է միայն պատգամավորական անձեռնմխելիության ընդհանուր ուղղվածությունը և դրա կիրառման պայմանները: Միևնույն ժամանակ, զարգացնելով և մասնավորեցնելով Սահմանադրության 96-րդ հոդվածի պահանջները, Սահմանադրության 97-րդ հոդվածն ամրագրում է, որ գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով: Այսինքն՝ Սահմանադրության 97-րդ հոդվածի երկրորդ մասն ուղղակիորեն պարտադրում է, որ պատգամավորի գործունեության այլ երաշխիքների մեխանիզմներն սահմանվեն օրենքով:

Բացի այդ, շարունակելով պատգամավորական լիազորությունների անխոչընդոտ իրականացման երաշխիքների սահմանադրական նորմերի տրամաբանությունը՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածը, հաշվի առնելով նաև պատգամավորի թեկնածուի գործունեության առանձնահատկությունները, անխոչընդոտ նախընտրական քարոզարշավ կազմակերպելու համար հավելյալ երաշխիքներ է ապահովել նաև պատգամավորի թեկնածուների համար<sup>1</sup>: Մասնավորապես՝ ՀՀ ԸՕ 90-րդ հոդվածն ամրագրում է. Պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Սույն մասով սահմանված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք, հոդված 90, մաս 5 <https://www.arlis.am/documentview.aspx?docid=107373>

երկարաձգելու դեպքերի վրա: Այսինքն՝ պատգամավորի թեկնածուի կարգավիճակ ստանալու պահից սկսած՝ վերջինիս ազատությունից կարելի է զրկել բացառապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Բացի այս, 90-րդ հոդվածը, հաշվի առնելով, որ պատգամավորի գործունեությունն արդեն իսկ երաշխավորված է Սահմանադրության 96-րդ և 97-րդ հոդվածներով և ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքով<sup>1</sup>, ամրագրել է, որ այս պահանջը գործում է մինչև պատգամավորի լիազորությունների ստանձնումը: Միևնույն ժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մասը վկայակոչում է, որ պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը չի կարող հիմք հանդիսանալ թեկնածուի՝ իր ընտրվելու իրավունքի իրացումն արգելելու համար: Այսինքն՝ շարունակելով Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասում շարադրված սկզբունքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 3-րդ մասն ամրագրում է, որ քրեական հետապնդման մեջ լինելով՝ պատգամավորի թեկնածուն՝ ժողովրդի՝ քվեների տեսքով աջակցությունն ունենալու դեպքում, կարող է ստանձնել պատգամավորի լիազորությունները:

Միևնույն ժամանակ, ի կատարումն Սահմանադրության 96-րդ և 97-րդ հոդվածների պահանջների՝ ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածը *պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու համաձայնություն տալու հատուկ կարգ է սահմանում*, համաձայն որի՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Նույն հոդվածի երկրորդ մասի առաջին, երկրորդ և երրորդ կետերով սահմանված կարգի համաձայն՝ առաջիկա հերթական նիստերում գլխավոր դատախազի ներկայացված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագրի քննարկման ընթացքում միջնորդագրում նշված պատգամավորը և գլխավոր դատախազը հանդես են գալիս մինչև 20 րոպե տևողությամբ ելույթներով, որոնց կարող են նաև

<sup>1</sup> ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենք, հոդված 9 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=38&lang=arm#1>

ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(109)2023

հարցեր տրվել: Բացի այդ, ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետը նախատեսում է նաև միջնորդագրի շուրջ մտքերի փոխանակություն, որից հետո նույն հոդվածի երկրորդ մասի երրորդ կետով սահմանված կարգով՝ միջնորդագրում նշված պատգամավորը և գլխավոր դատախազը հանդես են գալիս մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթներով: Վերոնշյալից բխում է, որ զարգացնելով Սահմանադրության 96-րդ և 97-րդ հոդվածներով նախանշված պահանջները՝ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքը պատգամավորի անձեռնմխելիությունն ապահովելու ուղղությամբ սահմանում է հավելյալ երաշխիքներ՝ մինչ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագրի քվեարկությունը՝ միջնորդագրում նշված պատգամավորին օժտելով իր գործընկերների առջև երկու անգամ 20-ական րոպե ելույթ ունենալու իրավունքով:

Վերլուծելով Ազգային Ժողովի պատգամավորի անձեռնմխելիությունը երաշխավորող սահմանադրական նորմերի ամբողջությունը և հաշվի առնելով ՍԴՈ-1476 որոշմամբ<sup>1</sup> արտահայտած դիրքորոշումն առ այն, որ Ազգային Ժողովի պատգամավորը, իր լիազորությունների ժամկետում օգտվում է ինչպես գործառության, այնպես էլ անձնական անձեռնմխելիությունից, իսկ այդ ժամկետից հետո՝ միայն գործառության անձեռնմխելիությունից, կարելի է եզրահանգել, որ պատգամավորական անձեռնմխելիությունն իրենից ներկայացնում է ոչ թե պատասխանատվության ինստիտուտի բացարձակ բացակայություն, այլ՝ լրացուցիչ երաշխիք է սահմանում սահմանադրական պարտականությունների անխցընդոտ կատարելու համար: Այսինքն, պատգամավորական մանդատով օժտված քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու համար սահմանում է հատուկ ընթացակարգ՝ Ազգային Ժողովի համաձայնություն: Այսինքն՝ սահմանադիրը պատգամավորական մանդատով օժտված քաղաքացիներին առանց ԱԺ համաձայնության ազատությունից զրկելու, ձերբակալելու կամ այլ տեսակի քրեաիրավական պատասխանատվության վրա արգելք է դնում՝ պատգամավորներին գործունեության ընթացքում գործա-

<sup>1</sup> ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1476.pdf>

դիր և դատական մարմինների և/կամ առանձին անհատների կողմից հնարավոր ճնշումներից պաշտպանելու համար միայն: Հետևաբար, պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտը ոչ թե պատասխանատվությունից ազատվելու, այլ առանց Ազգային ժողովի թույլտվության և համաձայնության՝ այլ անձանց կամ իշխանության այլ ճյուղերի կողմից հնարավոր հետապնդումներից և ձերբակալություններից խուսափելու միջոց է: Անձեռնմխելիության ինստիտուտի ողջ փիլիսոփայությունը հարկավոր է դիտարկել իշխանության ճյուղերի տարանջատման և փոխադարձ ճնշումների բացառման գաղափարի և տրամաբանության մեջ: Ընդ որում, հարկավոր է հաշվի առնել, որ անկախ այն հանգամանքից, թե մինչ պատգամավորի լիազորությունների ստանձման պահը ինչ քրեադատավարական կամ այլ կարգավիճակ է ունեցել պատգամավորը՝ պատգամավորական անձեռնմխելիության ինստիտուտը վրա է հասնում Սահմանադրության 90-րդ հոդվածում ամրագրված՝ վերջինի կողմից լիազորությունների ստանձման և ավարտվում դրանց դադարման պահին:

### Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն <https://concourt.am/normative-legal-bases/constitution-of-ra>
2. ՀՀ ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենք, հոդված 9 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=38&lang=arm#1>
3. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք, հոդված 90, մաս 5 <https://www.arlis.am/documentview.aspx?docid=107373>
4. Հանուն Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1476.pdf>
5. Юридическая энциклопедия <https://yuridicheskaya-entsiklopediya.slovaronline.com/1029-%D0%BD%D0%B5%D0%BF%D1%80%D0%B8%D0%BA%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C>

6. Հ. Աճառյանի ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, էջ 114

[http://www.nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY\\_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B4%D5%AD%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6](http://www.nayiri.com/imagelDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%B4%D5%AD%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6)

7. Использование института неприкосновенности в странах Евросоюза, էջ 5

<https://transparency.org.ru/wp-content/themes/transparency-child/special/greco/docs/neprikosnovennost.pdf>

8. «Խորհրդարան 1918-1920». պատգամավորի իմունիտետի հիմքը  
[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13913&year={\\$Year}&month={\\$Month}&day={\\$Day}](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13913&year={$Year}&month={$Month}&day={$Day})

## ПРОБЛЕМЫ СТАНОВЛЕНИЯ ИНСТИТУТА НЕПРИКОСНОВЕННОСТИ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

### Аннотация

Статья посвящена исследованию проблем становления института иммунитета и его сущности.

Изучая генезис Института иммунитета, в ходе исследования особое внимание уделялось особенностям роли, значения и обеспечения Института иммунитета в современных условиях. Анализируя существующие правовые регулирования, было констатировано, что институт неприкосновенности является не личной привилегией, а дополнительной гарантией бесперебойного и беспрепятственного исполнения должностных полномочий.

**Ключевые слова.** иммунитет, неприкосновенность, депутат, избирательное право, правовой статус.

## PROBLEMS OF FORMATION OF THE INSTITUTE OF IMMUNITY IN MODERN CONDITIONS

### Annotation

The article is devoted to the study of the problems of the formation of the institute of immunity and its essence.

Studying the genesis of the Institute of Immunity, during the study, special attention was paid to the peculiarities of the role, significance and provision of the Institute of Immunity in modern conditions. Analyzing the existing legal regulations, it was stated that the institution of inviolability is not a personal privilege, but an additional guarantee of uninterrupted and unhindered execution of official powers.

**Keywords:** immunity, deputy, suffrage, legal status.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.03.2023թ., պրվել է գրախոսության 20.03.2023թ., ընդունվել է տպագրության 30.03.2023թ.:*





**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ Սահմանադրական դատարանի  
նախագահի խորհրդական,  
իրավունքի մագիստրոս,  
քաղաքական գիտությունների  
թեկնածու,  
դոցենտ*



**ՇՈՂԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության  
կադրերի վարչության հրահանգիչ,  
իրավագիտության մագիստրոս*

DOI: 10.59560/18291155-2023.1-71

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**Ամփոփագիր**

Տեղեկատվական ոլորտը, ունենալով հասարակական կյանքը համակարգող և կարգավորող կարևոր գործառույթ, ակտիվորեն ազդում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անվտանգության քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բաղադրիչների վրա: ՀՀ ազգային անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և այդ կախվածությունը մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին համընթաց: Այսօր տեղեկատվական

1(109)2023  
◆ ՍԵՂԵԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
71



հոսքերը նոր բնույթի սպառնալիքներ և մարտահրավերներ են ներկայացնում պետություններին, ինչը պահանջում է տեղեկատվական դաշտում գործել այնպիսի կանոններով, որոնց մեջ վճռորոշ են տեղեկատվական հոսքերի համակարգումը, վերահսկումը և անվտանգությունը, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման և հավաստի տեղեկատվության արգելափակման միջոցով հասարակական կարծիքի խեղաթյուրման կանխարգելումը և այլն:

Այսօրինակ իրողությունների պայմաններում պետությունների անվտանգության համակարգում ռազմավարական նշանակություն է ստանում նաև պետության անվտանգության ապահովումը տեղեկատվական ոլորտում:

Սույն հոդվածը նվիրված է արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման հիմնահարցերի ուսումնասիրությանը: Ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել, որ արտակարգ իրավիճակներում ՀՀ տեղեկատվական անվտանգության նորմատիվ իրավական ապահովումը՝ որպես տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերի սպառնալիքներին դիմակայելու իրավական կարգավորման միասնական համակարգ, բավարար չափով զարգացած չէ: Վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնց կարգավորումը հնարավոր կդառնա օրենսդրական բարեփոխումների արդյունքում:

**Հիմնաբաներ.** ազգային շահեր, տեղեկատվական անվտանգություն, արտակարգ իրավիճակներ, տեղեկատվական սպառնալիքներ, իրավական ապահովում, հիմնահարցեր, ռազմավարություն:

Տեղեկատվական անվտանգությունն ազգային անվտանգության անբաժանելի մասն է կազմում: Դա պայմանավորված է նրանով, որ տեղեկատվությունը բոլոր ժամանակներում առանցքային դեր է ունեցել պետության կայունության և անվտանգության ապահովման հարցում:

Անվտանգություն հասկացությունը, թվացյալ պարզության հետ մեկտեղ, խիստ ընդգրկուն է և գործնականորեն ներառում է հասարակության ու առանձին անհատների կենսագործունեության բոլոր ոլորտները:

Անվտանգության փիլիսոփայության ստեղծման գործում մեծ ավանդ ունի անգլիացի պատմաբան, փիլիսոփա Առնոլդ Թոյնբին: Եթե ուսում-

1(109)2023  
ՏԵՂԵԿԱՎԱԿԱՆ ՈՒՍՏԱՆԱՆՈՒՄ

նասիրենք և ընդհանրացնենք Թոյնբիի դասական մոտեցումները, ձևակերպումները անվտանգության վերաբերյալ, ապա կարող ենք ասել, որ քաղաքակրթությունների, պետությունների, հասարակությունների և անգամ անհատների անվտանգությունն ապահովվում է նրանց՝ մարտահրավերների և դրանց տրվող պատասխանների բարդ համակարգում գործելու ունակությամբ: Հայտնի է Թոյնբիի ասույթը, թե քաղաքակրթությունների կործանման պատճառը եղել է նրանց անկարողությունը՝ ադեկվատ արձագանքելու իրենց նետված մարտահրավերներին: Նկատենք, սակայն, որ մարտահրավերները որոշ իրադրություններում կարող են ընկալվել նաև որպես դրական հանգամանք, քանի որ դրանք ստուգում, փորձաքննում են անվտանգության համակարգի հուսալիությունը և, մարտահրավերներին արժանիորեն դիմագրավելու նպատակով, մոբիլիզացնում են հանրության հոգևոր, մտավոր, ռազմաքաղաքական ու նյութական ռեսուրսները: Թոյնբիի վերոնշյալ դատողությունները կիրառելի են նաև տեղեկատվական անվտանգության ոլորտում<sup>1</sup>:

Տեղեկատվական անվտանգության ապահովումն առավել քան կարևոր նշանակություն է ձեռք բերում արտակարգ իրավիճակներում, որտեղ տեղեկատվական ազդեցությունը կարող է ֆիզիկական, նյութական և բարոյական վնաս հասցնել անհատին, հասարակությանը, պետությանը, առաջացնել մարդկանց կամ անհատների տարբեր խմբերի ոչ համարժեք սոցիալական կամ հանցավոր վարք և բացահայտել պետության ենթակառուցվածքների թույլ ու խոցելի կետերը:

Ժամանակակից պայմաններում, արտակարգ իրավիճակներում ՀՀ ազգային անվտանգության, ազգային շահերի անվտանգության ապահովումը տեղեկատվական ոլորտում ենթադրում է հարաբերությունների իրավական կարգավորման համակարգի առաջնահերթ զարգացում, սպառնալիքներին հակազդելու և դրանք կարգավորելու նպատակով համապատասխան օրինաստեղծ գործընթաց:

Վերոնշյալ գործընթացն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ իրավական պետության և քաղաքացիական հասարակության կառուցման պայմաններում ազգային անվտանգության համար պատասխանատու պետական մարմինների գործունեությունը պետք է կարգավորվի որո-

<sup>1</sup> Տե՛ս **Հարությունյան Գ.Ա.**, Տեղեկատվական անվտանգություն: Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2017, էջ 102:

շակի իրավական նորմերով, որոնք ապահովում են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացումը:

Երկրորդ՝ ոլորտում օրենսդրության ընդունումն ուղղված է ՀՀ ազգային անվտանգությանն սպառնացող վտանգների հակազդելու նպատակների նորմատիվային ամրագրմանը, դրանց հասնելու միջոցներին և մեթոդներին, իշխանությունների համակարգված գործունեության ապահովմանը:

Երրորդ՝ ՀՀ ինտեգրումը միջազգային հանրությանը զգալիորեն ընդլայնում է երկրի տեղեկատվական անվտանգության ամրապնդման հնարավորությունները՝ միջազգային իրավունքի մշակմանը մասնակցության, տեղեկատվական ոլորտի անվտանգության ապահովման միջազգային համակարգի ստեղծման միջոցով:

Արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության իրավական ապահովումն ստեղծվում է արտակարգ իրավիճակներում ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման իրավական կարգավորման համակարգի և այս համակարգի ձևավորման գործընթացի համադրությամբ: Արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության իրավական կարգավորման համակարգն իր հերթին ներառում է ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը և դրանց կիրառումից բխող իրավահարաբերությունները:

Իրավական նորմերը հիմք են հանդիսանում արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության ապահովման համար և մեծապես որոշում են պետության, հասարակության և առանձին քաղաքացիների գործունեության արդյունավետությունը տեղեկատվական ոլորտում պետության ազգային շահերը պաշտպանելու գործում<sup>1</sup>:

Մինևույն ժամանակ, օրինաստեղծ գործընթաց իրականացնելու համար նախ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ տեղեկատվական անվտանգության մարտահրավերները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման հիմնահարցերը:

<sup>1</sup> Чеботарева А.А. Информационное право: учебное пособие. - М.: Юридический институт МИИТ, 2014. - С .160.

«Վ ազգային անվտանգության խորհրդի կողմից 2020 թվականի հուլիսի 10-ին ընդունված «Վ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ներդրված են «Վ տեղեկատվական անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրները:

-տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականության անկատարությունը,

-կենսական նշանակության տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանությունն ապահովող օրենսդրության բացակայությունը,

-համակարգչային պատահարների արձագանքման կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների ոչ բավարար մակարդակը,

-կիբեռանվտանգության ոլորտը համակարգող կառույցի բացակայությունը<sup>1</sup>:

Ռազմավարության մեջ տեղ չեն գտել 2009 թվականի «Վ տեղեկատվական անվտանգության հայեցակարգում ամրագրված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, տեղեկատվական տիրույթում միջազգային համագործակցության ոչ բավարար մակարդակը, «Վ տեղեկատվական անվտանգության ապահովման իրավական նորմատիվային բազայի բարելավումը, ներառյալ՝ տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքների իրականացման մեխանիզմների և զանգվածային լրատվամիջոցների հետ պետության փոխհարաբերությունը կարգավորող իրավական նորմերի կատարելագործումը, տեղեկատվական անվտանգության պահանջների պահպանման գործում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների պատասխանատվության սահմանումը, «Վ տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակային պետական ծրագրերի մշակումը, տեղեկատվության պաշտպանության և պետական գաղտնիքի պաշտպանության պետական համակարգերի զարգացումը և կատարելագործումը, տեղեկատվության պաշտպանության ժամանակակից մեթոդների և միջոցների մշակումը, տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության ապահովումն առաջին հերթին զինված ուժերի, բնապահպանական տեսանկյունից վտանգավոր և հատուկ կարևորություն ունեցող արտադրությունների կառավար-

<sup>1</sup> Տե՛ս «Վ ազգային անվտանգության ռազմավարություն, «Վ ազգային անվտանգության խորհրդի 10.07.2020թ. որոշում:

ման համակարգերում, խաղաղ պայմաններում, արտակարգ իրավիճակներում և պատերազմական ժամանակ պետության կառավարման ժամանակակից պաշտպանված տեխնոլոգիական հիմքերի ստեղծումը ու զարգացումը և մի շարք այլ հիմնախնդիրներ<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ վերոնշյալ հիմնախնդիրները շարունակում են դեռևս արդիական մնալ:

Ներկայումս, արտակարգ իրավիճակներում ՀՀ տեղեկատվական անվտանգության նորմատիվ իրավական ապահովումը՝ որպես տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերի սպառնալիքներին դիմակայելու իրավական կարգավորման միասնական համակարգ, բավարար չափով զարգացած չէ:

Օրինաստեղծ գործընթացում կան որոշակի բացթողումներ: Օրենսդրությունն այս ոլորտում բնութագրվում է քառսային և մասնատված նախաձեռնություններով:

Դիտարկենք իրավական ապահովման առանցքային հիմնահարցերից մի քանիսը:

Արտակարգ իրադրությունների, ճգնաժամային իրավիճակների, պատերազմական գործողությունների ընթացքում ապատեղեկատվության ծավալները կտրուկ աճում են, ինչը դժվարեցնում է հանրության շրջանում խուճապային տրամադրությունների, կեղծ տեղեկատվական հոսքերի կառավարելիությունը:

Չնայած ապատեղեկատվության լայն տարածվածությանը՝ ՀՀ-ում դեռևս հաստատված չէ ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարական որևէ փաստաթուղթ: Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության բացակայության պատճառով ՀՀ հասարակությունը մնում է անտեղյակ և խոցելի տեղեկատվական վակուումը լրացնող կեղծ պատմույթների հանդեպ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի ՆԿ-97-Ն կարգադրություն (26.06.2009 թ. ուժի մեջ է մտել 25.07.2009 ՀՀՊՏ 2009.07.15/35(701) Հոդ.820):

<sup>2</sup> Տե՛ս Freedom House, Disinformation and misinformation in Armenia confronting the power of false narratives, 2021թ., [Disinformation-in-Armenia\\_Am-final.pdf \(freedomhouse.org\)](https://www.freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf), էջ 14:

Ապատեղեկատվության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկը կառավարման համակարգում պրոակտիվ հրապարակայնության մակարդակի բարելավումն է և բազմակողմ հաղորդակցությունը<sup>1</sup>:

Պրոակտիվ հրապարակայնության էությունն այն է, որ պետական մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց գործունեությանն առնչվող տեղեկատվություն՝ մատչելիության, արդիակայնության և ամբողջականության սկզբունքների հիման վրա<sup>2</sup>:

Պետական գերատեսչությունները պետք է միջոցառումներ ձեռնարկեն հանրային հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը լիարժեք հանրայնացնելու ուղղությամբ ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ հարցման հիման վրա, որպեսզի նպաստեն բաց և արդյունավետ կառավարմանը և կանխեն կեղծ տեղեկությունների ի հայտ գալը:

Այս համատեքստում օրենսդրական դաշտի բացերից է նաև հանրային իրազեկման ոլորտը կարգավորող օրենսդրության բացակայությունը, ինչը նույնպես խթանում է ապատեղեկատվության տարածմանը:

Ոլորտը կարգավորող օրենսդրության մյուս խնդիրներից է տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պետության պաշտոնական մոտեցումները ներկայացնող փաստաթղթի՝ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի բացակայությունը:

2017 թվականին ՀՀ նախագահի ՆԿ-145-Ն կարգադրությամբ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգն ուժը կորցրած ճանաչվեց, ինչը պայմանավորված էր նրանով, որ Կառավարությունը նախապատրաստվում էր մշակել և հաստատել ոլորտի նոր ռազմավարություն: Ինչպես և նախորդ հայեցակարգը, ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության ռազմավարության նախագիծը ներառում էր նաև հանրային կենսագործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական ուղղությունները և

<sup>1</sup> Տե՛ս Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության նախագիծ 2023-2025, [http://www.foi.am/u\\_files/file/DOCS%202022/Strategy-against-Disinformation-Final-ARM-2023-2025.pdf](http://www.foi.am/u_files/file/DOCS%202022/Strategy-against-Disinformation-Final-ARM-2023-2025.pdf)

<sup>2</sup> Տե՛ս Պրոակտիվ հրապարակման ապահովումը պաշտոնական ինտերնետային կայքերում, [http://www.foi.am/u\\_files/file/E-FOI\\_monitoring.pdf](http://www.foi.am/u_files/file/E-FOI_monitoring.pdf)

ակնկալվող գործողությունները<sup>1</sup>: Նույն թվականին մշակվեց նաև ՀՀ կիբեռանվտանգության ռազմավարության նախագիծը, որը նախատեսում էր Կիբեռանվտանգության կենտրոնի ստեղծում<sup>2</sup>:

Թեև երկու ռազմավարություններն էլ առանցքային նշանակություն ունեն ոլորտում օրենսդրության բարելավման և արդիականացման համար, սակայն դրանք առ այսօր չեն հաստատվել:

Մյուս կարևոր հիմնահարցերից է մեդիագրագիտությունը: Մեդիագրագիտության տարածման աշխատանքը համակարգելու համար եվրոպական մի շարք երկրներ (Ֆինլանդիա, Մեծ Բրիտանիա<sup>3</sup>, Շվեդիա), կարևորելով մեդիագրագիտության դերը, ներդրել են մեդիագրագիտության ապահովման կառույց, որը նաև հետևում է մեդիայի աշխատանքին և համապատասխան օրենսդրության պահպանությանը լրատվամիջոցներում:

Մեդիագրագիտության տարածման միջազգային լավագույն փորձը հուշում է նաև, որ այս գործընթացը պետք է հիմնված լինի խորը հետազոտությունների ու տվյալների վրա, ունենա մանրամասն մշակված ռազմավարություն և գործողությունների ծրագիր, լինի համընդգրկուն, համակարգային և շարունակական<sup>4</sup>:

Տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման վերոնշյալ հիմնահարցերը զգալիորեն նվազեցնում են տեղեկատվական ոլորտում ՀՀ ազգային շահերի պաշտպանությունը:

Նշված թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է նպատակաուղղված գործունեություն ծավալել երկրի տեղեկատվական անվտանգության իրավական ապահովման բարելավման ուղղությամբ:

Մինևնույն ժամանակ, տեղեկատվական անվտանգության ապահովման իրավական մեխանիզմների համակարգը պետք է խարսխված լինի

<sup>1</sup> Տե՛ս Նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել է Ազգային անվտանգության խորհրդի նիստ

<https://www.president.am/hy/press-release/item/2017/09/27/President-convened-National-Security-Council-meeting/>

<sup>2</sup> Տե՛ս Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ <https://www.e-draft.am/projects/581/about>

<sup>3</sup> Տե՛ս Department for Digital, Culture, Media and Sport, UK, Online Media Literacy Strategy, 2021, [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/1004233/DCMS\\_Media\\_Literacy\\_Report\\_Roll\\_Out\\_Accessible\\_PDF.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1004233/DCMS_Media_Literacy_Report_Roll_Out_Accessible_PDF.pdf)

<sup>4</sup> Տե՛ս Finnish Ministry of Education and Culture, Media Literacy in Finland: national media education policy, 2019, <https://medialukutaitosuomessa.fi/mediaeducationpolicy.pdf>

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

անհատի, հասարակության և պետության շահերի համադրման սկզբունքով: Անհատի, հասարակության և պետության շահերի հավասարակշռությունը որոշելիս անհրաժեշտ է ելնել նաև այն հանգամանքից, որ ՀՀ-ն հանդիսանում է ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն, որի պարտականությունն է մարդու իրավունքների և ազատությունների ճանաչումը, դրանց պահպանության, ապահովման և պաշտպանության համար երաշխիքների ստեղծումը, մարդու (քաղաքացու) արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման պայմանների ստեղծումը և ապահովումը, ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների չեզոքացումը:

## **Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

1. «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի ՆԿ-97-Ն կարգադրություն (26.06.2009 թ. ուժի մեջ է մտել 25.07.2009 ՀՀ ՊՏ 2009.07.15/35(701) հոդվ.820):
2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի 10.07.2020 թ. որոշում:
3. Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության նախագիծ 2023-2025 [http://www.foi.am/u\\_files/file/DOCs%202022/Strategy-against\\_Disinformation-Final-ARM-2023-2025.pdf](http://www.foi.am/u_files/file/DOCs%202022/Strategy-against_Disinformation-Final-ARM-2023-2025.pdf)
4. Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ <https://www.e-draft.am/projects/581/about>
5. **Հարությունյան Գ.Ա.**, Տեղեկատվական անվտանգություն, Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2017, 320 էջ:
6. **Чеботарева А.А.** Информационное право: учебное пособие. - М.: Юридический институт МИИТ, 2014. - С. 160.
7. Նախագահ Սերժ Սարգսյանը հրավիրել է Ազգային անվտանգության խորհրդի նիստ <https://www.president.am/hy/press-release/item/2017/09/27/President-convened-National-Security-Council-meeting/>
8. Պրոակտիվ հրապարակման ապահովումը պաշտոնական ինտերնետային կայքերում [http://www.foi.am/u\\_files/file/E-FOI\\_monitoring.pdf](http://www.foi.am/u_files/file/E-FOI_monitoring.pdf)



9. Freedom House, Disinformation and misinformation in Armenia confronting the power of false narratives, 2021թ., [Disinformation-in-Armenia Am-final.pdf \(freedomhouse.org\)](#), p. 14.

10. Department for Digital, Culture, Media and Sport, UK, Online Media Literacy Strategy, 2021, [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/1004233/DCMS Media Literacy Report Roll Out Accessible PDF.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1004233/DCMS_Media_Literacy_Report_Roll_Out_Accessible_PDF.pdf)

11. Finnish Ministry of Education and Culture, Media Literacy in Finland: national media education policy, 2019, <https://medialukutaitosuomessa.fi/mediaeducationpolicy.pdf>

## ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

### Аннотация

Информационная сфера, выполняя важную функцию координации и регулирования общественной жизни, активно влияет на политическую, экономическую, военную и другие составляющие безопасности Республики Армения (РА). Национальная безопасность РА в значительной степени зависит от обеспечения информационной безопасности, и эта зависимость возрастает вместе с научно-техническим прогрессом. Сегодня информационные потоки представляют угрозы и вызовы нового характера для государств, что требует действовать в информационном поле по таким правилам, при которых обеспечивается координация, контроль и безопасность информационных потоков, а также недопущение искажения общественного мнения путем распространения ложной информации и блокирования достоверной информации и т. д.

В условиях таких реалий в системе безопасности государств стратегическое значение приобретает и обеспечение безопасности государства в информационной сфере.



Данная статья посвящена исследованию проблемных вопросов правового обеспечения информационной безопасности в чрезвычайных ситуациях.

Изучение законодательства, регулирующего отрасль, позволило выявить, что нормативное правовое обеспечение информационной безопасности РА в условиях чрезвычайных ситуаций как единая система согласованных норм правового регулирования отношений в области противодействия угрозам национальных интересов РА в информационной сфере развито недостаточно. Были подняты вопросы, решение которых заключается в совершенствовании законодательства.

**Ключевые слова.** национальные интересы, информационная безопасность, чрезвычайные ситуации, информационные угрозы, правовое обеспечение, основные вопросы, стратегия.

## THE PROBLEMS OF LEGAL PROVISION OF INFORMATION SECURITY IN EMERGENCY SITUATIONS

### Annotation

Information sphere, performing an important function of coordination and regulation of public life, actively influences the political, economic, military and other components of the security of the Republic of Armenia (RA). The national security of the Republic of Armenia largely depends on the provision of information security, and this dependence is increasing along with scientific and technical progress. Today, information flows pose threats and challenges of a new nature for states, which requires action in the information field with such rules that ensure coordination, control and security of information flows, as well as prevention of distortion of public opinion by spreading false information and blocking reliable information and etc.

In such realities information security acquires strategic importance in the security system of the state.

This article is devoted to the study of issues of legal provision of information security in emergency situations.

The study of the legislation regulating the sector allowed to reveal, that the normative legal provision of the information security in emergency situations

Այս առնչությամբ կարևոր է երաշխիքներ ունենալ առ այն, որ դատավորի լիազորությունները գնահատման արդյունքների հիման վրա չդադարեցվեն, քանի որ լիազորությունների դադարումը կարող է վրա հասնել կարգապահական և քրեական օրենսդրությամբ սահմանված կանոնների լուրջ խախտումների դեպքում և պետք է իրականացվի պատշաճ ընթացակարգի համաձայն՝ հենվելով վստահելի ապացույցների վրա:

«Ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գնահատման արդյունքներն օգտագործվում են չորս հիմնական ուղղությամբ և նպատակով՝

- տրամադրվում են ուսումնական հարցերի հանձնաժողովին՝ դատավորների վերապատրաստման ուղղություններն ընտրելու համար,
- գնահատվող դատավորին՝ իր աշխատանքի արդյունավետությունը բարելավելու և ինքնակատարելագործվելու համար,
- օրենքով նախատեսված դեպքերում տրամադրվում է նաև էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար,
- տրամադրվում է նաև դատարանի նախագահին՝ դատարանի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Այս առումով նույնպես գործող կարգավորումները խնդրահարույց չեն:

Ինչպես և ներկայացվեց՝ դատավորների գործունեության անհատական գնահատմանն առնչվող առավել կարևոր հարցերից են գնահատող մարմնի ընտրությունն ու ձևավորումը, գնահատման ժամկետները, գնահատման հիմքում դրվող չափանիշներն ու գնահատման հետևանքները: Այս հարցերի առնչությամբ «Ներպետական կարգավորումները հիմնականում համահունչ են ընդունված միջազգային չափանիշներին: Թերևս, առավել խնդրահարույց հարցը կապված է գնահատման հիմքում դրվող չափանիշների հետ, որոնք վերանայման և առավել հստակեցման կարիք ունեն, որպեսզի պրակտիկայում դրանց հիման վրա գործունեության գնահատման իրականացումն իրապես ծառայի այդ գործընթացի նպատակներին: Պետք է նշել նաև, որ դատավորների գործունեության գնահատումը պրակտիկայում մշտապես պետք է

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

կազմակերպել այնպես, որ լավագույնս ապահովվի դատավորների անկախությունը:

## **Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

1. «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, ընդունվել է ուժի մեջ է մտել 2018 թվականին:
2. Consultative Council of European Judges, Opinion n 17 on the evaluation of judges work, the quality of justice and respect for judicial independence, 2014.
3. Consultative Council of European Judges, Opinion N 1 n standards concerning the independence of the judiciary and the irremovability of judges, 2001, Opinion N 3 on ethics and liability of judges, 2002.
4. European Commission for Democracy through law, Venice Commission, Compilation of Venice Commission opinions and reports concerning courts and judges, Strasbourg, 11 December 2019.
5. European Networks of Councils of the Judiciary, Distillation of ENCJ Guidelines, Recommendations and Principles, Report 2012-2013, 2013.
6. Kyiv recommendations on judicial independence in eastern Europe, South Caucasus and central Asia, OSCE Office for Democratic Institutions Max Planck Minerva Research Group and Human Rights, Kyiv, 23-25 June 2010.
7. Individual Assessment of Judges in Albania, A General Overview and Comparative Analysis of Career Advancement and Reward Systems Based on Performance Evaluation, MSc. Alaudin Malaj, PhD Candidate, President of the Court of Appeals in Tirana, Academicus International Scientific Journal, 2015.
8. Individual Evaluation of Judges in Germany, Johannes Riedel, Onati Socio-legal Series, 2014.
9. Performance indicators and evaluation for judges and courts, Dr. Pim Albers, Special advisor of the CEPEJ, Council of Europe, 2013.

## ЦЕЛЬ И ПОСЛЕДСТВИЯ ИНДИВИДУАЛЬНОЙ ОЦЕНКИ ДЕЯТЕЛЬНОСТИ СУДЕЙ

### Аннотация

Один из вопросов, имеющих существенное значение для нормального и эффективного функционирования судебной системы, связан с институтом оценки индивидуальной деятельности судей. Последнее, в свою очередь, напрямую связано с двумя важнейшими принципами-требованиями: с одной стороны, защита независимости судей, а с другой стороны, повышение качества правосудия.

Соответственно, в каждой системе, в которой реализована оценка индивидуальной работы судей, параллельно большое внимание следует уделять обеспечению независимости судей, что в основном связано со следующими важными вопросами: критерии оценки, периодичность оценки, полномочия по оценке и влияние последствий оценки на судью.

В Республике Армения индивидуальная аттестация судей является новым институтом, который был вновь урегулирован Конституционным законом «Судебный кодекс» 2018 г. и введен в действие только с 2020 г., после образования органа, компетентного осуществлять оценку.

Целью данной статьи является исследование целей, методов и критериев индивидуальной оценки деятельности судей, а также ее практической значимости в контексте сравнительного анализа принятых международных стандартов и национальных законодательных норм Республики Армения. На основании вышеизложенного можно выделить возможные проблемные нормы отечественного законодательства и вызовы практики, способные, с одной стороны, создать препятствия для независимости судей, а с другой - снизить эффективность оценки.

**Ключевые слова:** судебная власть, индивидуальная оценка деятельности судьи, обеспечение независимости судебной власти и судей, цель и последствия оценки, критерии, на которых основывается оценка.

## THE PURPOSE AND CONSEQUENCES OF INDIVIDUAL ASSESSMENT OF JUDGES PERFORMANCE

### Annotation

One of the most important questions for the normal and effective functioning of the judiciary is related to the institution of evaluating the individual performance of judges. The latter, in turn, is directly related to the two most important principles-requirements: on the one hand, protection of the independence of judges, and on the other hand, improvement of the quality of justice.

Accordingly, in every system where the evaluation of the individual performance of judges is implemented, great attention should be paid in parallel to guaranteeing the independence of judges. Which is mainly related to the following important issues: evaluation criteria, periodicity of evaluation authority and impact of evaluation consequences on the judge.

The individual evaluation of judges is a new institution in the Republic of Armenia, which was newly regulated by the 2018 "Judicial Code" Constitutional Law and has been put into practice only since 2020, after the formation of the competent body that carries out the evaluation. The purpose of this article is to study the goals, methods and criteria of the individual evaluation of judges' activities, as well as its operational significance, in the context of a comparative analysis of accepted international standards and the domestic legislative regulations of the Republic of Armenia. On the basis of which it will be possible to highlight possible problematic regulations of domestic legislation and challenges of practice, which are able to create obstacles for the independence of judges on the one hand, and reduce the effectiveness of evaluation on the other hand.

**Keywords:** judicial authority, individual assessment of the judge's activity, ensuring the independence of the judiciary and judges, the purpose and consequence of the assessment, the criteria on which the assessment is based.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 20.03.2023թ., փրվել է գրախոսության 23.03.2023թ., ընդունվել է փրկագրության 29.03.2023թ.:*



**ՆՈՐԻԿ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փրկիստփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
ԵՀՀ միջազգային հարաբերությունների և  
իրավագիտության ինստիտուտի դասախոս,  
ՀՀ ՋՈՒ № զորամասի օպերատիվ  
բաժանմունքի  
ավագ սպա, կապիտան

DOI: 10.59560/18291155-2023.1-140

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**Ամփոփագիր**

**Հոդվածի նպատակն է** բացահայտել և հստակեցնել սահմանադրական արժեքանության հասկացության և նշանակության հետ կապված հիմնահարցերը համակողմանի և իրավահամեմատական վերլուծության միջոցով:

**Հոդվածի խնդիրն է** բացահայտել սահմանադրական արժեքանության էությունը, ներկայացնել վերջինիս բնորոշումը, հստակեցնել դրա դերը սահմանադրականության հաստատման գործում:

**Հետազոտության առարկան են** հաղիսացել սահմանադրության էությունն ու բովանդակությունը:

Արդի սահմանադրական զարգացումներում, ինչպես նաև բարեփոխումների գործընթացում առանձնահատուկ կարևորվում է սահմանադրության և նրանում ամրագրված սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների բովանդակության բացահայտումը, ընկալումը և իրական կյանքի վարքագծի կանոն դարձնելը, որը վերջնարդյունքում պետք է նպաստի երկրում սահմանադրականության հաստատմանը և կայացմանը:

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական արժեքանությունը երիտասարդ, ինքնուրույն գիտական ուղղություն է և ենթադրելի է, որ բազմաթիվ հիմնարար ուսումնասիրություններ պետք է կատարված լինեն դրա՝ իբրև նոր և հետազոտություն կատարելու մեծ մասշտաբներ ունեցող ոլորտի վերաբերյալ, պարզվում է, որ հիմնականում թեկնածուական աստենախոսությունների ու գիտական հոդվածների շրջանակներում են անդրադառնում իրավական ու սահմանադրական տարբեր արժեքների, որոնցում չեն կոնկրետացվում սահմանադրական արժեքանության բովանդակությունն ու վերջինիս առանձին տարրերը: Այդ առումով պետք է փաստել, որ սահմանադրական արժեքների նկատմամբ առկա հետաքրքրությունը չի սպառվում, այլ տարեցտարի ավելանում է՝ ինչն էլ հիմնավորում է **հողվածի արդիականությունը**:

**Հիմնաբառեր.** սահմանադրական արժեք, բարիք, սահմանադրական արժեքանություն, սահմանադրականություն, իրավաբանական գիտա-  
ճյուղ, իրավական համակարգ, իրավունքի գերակայություն:

## Ներածություն

Իրավագիտության մեջ արժեքանությունը ձևավորվել ու զարգացել է որպես իրավական արժեքանություն, որի առարկայական բնագավառն ու հիմնական թեմատիկան իրավունքի՝ որպես արժեքի ընկալման ու մեկնաբանման հիմնախնդիրներն են: Սահմանադրությունը և նրանում բովանդակվող հիմնարար սկզբունքները որպես արժեք որակելը հիմք հանդիսացավ, որպեսզի սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում, իբրև ինքնուրույն գիտական ուղղություն, ձևավորվի **սահմանադրական արժեքանությունը**:

Սահմանադրական արժեքանության գոյությունը նախ և առաջ պայմանավորված է սահմանադրության առկայությամբ, որոնք գտնվում են անքակտելի կապի մեջ, ուստի սահմանադրական արժեքանությունը չի կարող գոյություն ունենալ վերացական ձևով, այլ պետք է լինի հստակ ու առարկայական: Ջուզահեռաբար կարիք կա հստակեցնելու վերջինիս գիտաճյուղային պատկանելության հարցը: Այդ առումով կարծում ենք, որ վերջինս համալիր իրավաբանական գիտաճյուղ է, քանի որ արժեքների ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ արժեքանությունը, որը

փիլիսոփայության բաժիններից է, սահմանադրական իրավունքի բնագավառում զբաղվում է զուտ սահմանադրական արժեքների բովանդակության բացահայտմամբ, իրացման հնարավորությունների հստակեցմամբ ու հասարակական հարաբերությունների վրա ունեցած ազդեցության գնահատմամբ:

Արժեքի տակ սովորաբար ընկալում են որոշակի բարիք, որին տրվում է նախապատվություն այլ բարիքների շարքում: Ըստ Կ. Մանխեյմի նշման, «առանց արժեքային հայեցակարգերի, առանց որևէ՝ թեկուզ նվազագույն նպատակի իմաստավորման մենք որևէ բան ձեռք չենք բերում ոչ սոցիալական, ոչ հոգեբանական ոլորտներում»<sup>1</sup>: Արժեքները ձևավորվում են մարդկային գործունեության ընթացքում, այդ իսկ պատճառով, հանդիսանալով մշակութային համատեքստից դուրս անհնարին մարդկային փորձի արդյունք, արժեքները սահմանում են մշակույթի վիճակը և միաժամանակ ազդում դրա հետագա զարգացման վրա: Բնականաբար, զբաղեցնելով ընդհանրապես մշակույթներում զգալի տեղ, արժեքները էական դեր են խաղում մշակույթի առանձնահատուկ դրսևորումներում, մասնավորապես քաղաքական և իրավական մշակույթներում:

Կարծում ենք, որ սահմանադրությունը արժեքային չափման մեջ կարելի է դիտարկել տարբեր դիրքորոշումներից: Օրինակ, կարելի է դիտարկել սահմանադրությունում առկա ձևակերպումների էսթետիկ արժեքավորությունը, սահմանադրության տեքստի բառապաշարի և քերականական կառույցների իմաստաբանական և բանասիրական, դատողությունների և այլ հիմնարար դրույթների գաղափարական արժեքավորությունը և այլն<sup>2</sup>: Մասնավորապես ըստ Ս. Ա. Ավագյանի կարծիքի, սահմանադրությունն ուղղակի գաղափարախոսական՝ աշխարհընկալումային փաստաթուղթ հանդիսանալ չի կարող, ընդ որում նրանում առկա յուրաքանչյուր դրույթը, սահմանադրական ինստիտուտում բոլոր ամրագրումներն արտահայտում են երկրի ցանկալի սոցիալ-տնտեսական համակարգի դրույթները, ինչպես նաև յուրաքանչյուր սահմանադրություն ամրագրում է հասարակական արժեքների իր համակարգը, ինչը բացատրվում է նրանով, որ

<sup>1</sup> Garcia et Enterría E. La Constitución Española de 1978 como pacto social y como norma jurídica. Boletín Mexicano de derecho comparado. Vol 123. №5. P.371-398.

<sup>2</sup> **Манхейм К.** Идеология и утопия // Манхейм К. Диагноз нашего времени. - М., 1994. - С. 23.

սահմանադրության հիման վրա պետք է ձևավորվեն հասարակության յուրաքանչյուր անդամի համապատասխան տեսանկյունները<sup>1</sup>: Արժեքները՝ որպես գիտակցության ձևեր, ուղղակի չեն նկարագրում ինչ-որ գործողություններ կամ երևակայական երևույթներ, այլ տալիս են դրանց գնահատականը, դրանով իսկ դատապարտելով կամ հաստատելով վերջիններիս, պահանջում դրանց իրականացում կամ կասեցում, այսինքն ըստ իրենց բնույթի հանդիսանում են նորմատիվային: Այս տեսանկյունից է անհրաժեշտ մոտենալ նաև սահմանադրության արժեքավորությանը: Հողվածում մենք կքննարկենք միայն սահմանադրության իրավական արժեքավորության հարցերը և միայն հակիրճ կանգ կառնենք վերջինիս քաղաքական արժեքավորության վրա:

Սահմանադրության արժեքների ձևավորումը տեղի է ունենում սահմանադրության և պետության իրավական համակարգում դրա դերի վերաբերալ վերլուծության հետ համատեղ: Որպես իրավունքի կայունության վերաբերյալ տեսանկյունների համակարգ, առաջացել և սկսել է զարգանալ նախնական սահմանադրությունը, հետագայում, որպես պետության նորմատիվային համակարգի կառուցման և գործառնության իրավական եղանակ՝ ապահովելով սահմանադրության գերակայությունը: Պետության իրավական համակարգի վերաբերյալ պատկերացումները, որոնցում նորմատիվային ակտերը ներկառուցված են որոշակի հիերարխիաներում, կարևորություն տալով սահմանադրությանը, XVII-XVIII դարերում ամենից առաջ ծագում են եվրոպական պետություններում, այնուհետև փոխադրվում Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ (այդ երկու երկրամասերի այն տարածքներ, որտեղ բնակվում են եվրոպացի գաղթյալները կամ առնվազն բնակչություն, ովքեր ընդունում են եվրոպական մշակութային ավանդույթները որպես ազգային ավանդույթներ)<sup>2</sup> աստիճանական ձեռք բերելով կողմնակիցների մեծ թիվ<sup>2</sup>:

Ժամանակակից պայմաններում սահմանադրությունը ներկայացնում է արժեք: Երկրագնդի վրա գրեթե պետություն չի մնացել, որում առկա չէ սահմանադրություն, չնայած սահմանադրությունը որպես այդպիսին

<sup>1</sup> Конституционные ценности. Содержание и проблемы реализации // Материалы международ. науч.-теор. конфер. (Москва, 4-6 декабря 2008 г.). Т. 1-2. - М., 2010.

<sup>2</sup> Ценностей теория, аксиология // Философский энциклопедический словарь / Гл. редакция Г.Ф. Ильичев, П.Н. Федосеев, С.М. Ковалев, В.Г. Панов. - М.: Сов. Энциклопедия, 1983. - С. 664.



կարող է անվանվել տարբեր կերպ և ունենալ տարբեր կառուցվածք: Սահմանադրության ընկալումը արժեքի որակով հաստատվում է նաև այն փաստով, որ փաստաթուղթը, որը կոչվում կամ հայտարարվում է սահմանադրություն, առկա է նույնիսկ պետություններում, որոնք չեն հետևում և մի շարք դեպքերում չեն պատրաստվում հետևել հոչակված համապատասխան սահմանադրական սկզբունքերին:

XXI դարի սկզբում առանձին պետություններում (օրինակ, Սաուդյան Արաբիա, Օման) բացակայում է սահմանադրությունը բառիս ժամանակակից ընկալումներում, սակայն սահմանադրության համաշխարհային մասշտաբներում արժեքավորության ընդունմանն աջակցում են այդ երկրներում սկիզբ առած շարժումները սահմանադրականության ուղղությամբ (նշված պետություններում նման քայլեր կարելի է համարել, օրինակ, հիմնական նիզամների ընդունումը): Սահմանադրության արժեքի համաշխարհային ընդունումը նպաստել է նաև այն երկրներում սահմանադրության ընդունմանը, որտեղ հասարակությունը պատրաստ չէ համարժեք ընկալել և կյանքում ներդնել սահմանադրականությունը:

Մինևնույն ժամանակ, ժամանակակից պայմաններում ցանկացած սահմանադրություն հանդիսանում է արժեք կամ առնվազն ընկալվում որպես արժեք<sup>1</sup>: Եվ բոլոր դեպքերում յուրաքանչյուր սահմանադրություն ինքն է հանդես գալիս արժեքի որակով միայն այն ուժով, թե ինչ են արտահայտում կոնկրետ պատմական պայմաններում տվյալ հասարակությունում գերակայող արժեքները և ներկայացնում այդ արժեքների իրականացման համար իրավաբանական հենքը: Սակայն, եթե սահմանադրությունում հստակ հոչակված են կանխադրյալներ, որոնք չեն ընկալվում որպես արժեքներ համապատասխան երկրի բնակչության մեծամասնության կողմից, ապա նման սահմանադրությունը ևս արժեք հանդիսանալ չի կարող: Նույն կերպ նաև սահմանադրությունը, որը պարունակում է արժեքներ ներկայացնող դրույթներ, որոնք չեն իրականացվում գործնականում պետական մարմինների դիրքորոշումների և գործողությունների արդյունքում, չի կարող հանդիսանալ արժեք բնակչության համար:

Սահմանադրության արժեքավորության հաստատման գործում այն համեմատվում է որոշակի իդեալի հետ, վերջինիս որակով հանդես է

<sup>1</sup> Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 43:

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

գալիս առհասարակ սահմանադրությունը: Առկա օբյեկտների իմացության և գնահատման համար իդեալների նշանակության վրա ուշադրություն է դարձրել Ի. Կանտը: «Չնայած արգելվում է ենթադրել այդ իդեալների օբյեկտիվ իրականությունը (գոյությունը), - գրում է նա, - բոլոր դեպքերում չի կարելի այդ հիմունքներով դրանք համարել խիմերաներ. դրանք գիտակցությանը տրամադրում են անհրաժեշտ չափանիշ, որն ունի նրա ընկալման կարիք, ինչը իրականում կատարյալ է, որպեսզի վերջինս օգնությամբ գնահատի և չափի անկատարյալի թերությունները և աստիճանները»<sup>1</sup>: Ինչպես հայտնի է, Ի. Կանտը առաջիններից մեկն է, ով ուշադրություն է դարձրել մարդու գործունեության մեջ արժեքների դերի ազատության և անհրաժեշտության հարաբերակցության քննարկմանը: Սակայն առավել հիմնավոր արժեքների խնդրայնությունը վերջինիս գաղափարների հիման վրա մշակել է Ռ.Գ. Լոտցը, հետագայում նեոկանտները (մասավորապես, Վ. Վինդելը, Գ. Ռիկկերտը), ինչպես նաև տարատեսակ փիլիսոփայական դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչներ, իսկ ներկայումս տվյալ խնդրայնությունը կայուն զբաղեցրել է բազմաթիվ գիտական ոլորտների զինանոցում արժանի տեղ: Եվ այսպես, կոնկրետ սահմանադրության արժեքի բացահայտման համար ըստ որոշ չափորոշիչների իրականացվում է դրա համեմատություն սահմանադրության հետ երկրագնդի քաղաքական ակտիվ բնակչության մեծամասնության կողմից ընդունվող արժեքի որակով: Համեմատության հիշատակված սկզբունքներն ընտրվում են այնպես, որ դրանցում արտացոլվեն որպես այդպիսին սահմանադրության հիմնական բնութագրիչները: Արժեքաբանության տարբեր ուղղությունների շրջանակներում արժեքներն ավանդաբար դիտարկվել են և դիտարկվում են նորմերի (էթետիկ, էթնիկ և այլն) հետ սերտ կապերում: Միևնույն ժամանակ, նշված փոխկապվածությունն այնքան նեղ է, որ XX դարի սկզբում Գ. Ռիկկերտն արժեքների նեոկանտյան տեսության քննադատությանն ի պատասխան անհրաժեշտ համարեց որոշ աշխատանքներում վեր հանել տարբերությունները «նորմ» և «արժեքներ» հասկացությունների միջև: Միևնույն ժամանակ, նորմերի և արժեքների փոխկապվածությունը ենթադրում է արժեքների որոշակի հավաքածուի առկայություն ցանկացած նորմատիվային համակարգում: Իրավունքը՝ որպես նորմատիվային

<sup>1</sup> Кант И. Критика чистого разума. - М., 1994. - С. 347.

համակարգ, բնականաբար, պարունակում է որոշակի արժեքներ (դրանց վրա է հենվում իրավական մշակույթը): Իր հերթին, սահմանադրությունը, հանդես գալով իրավունքի նորմատիվային հիմքի որակով, նույնպես չի կարող գործել առանց իրեն բնորոշ արժեքների: Խոսքը գնում է ոչ թե այն իրավական արժեքների վերաբերյալ, որոնք ստացել են ամրագրում սահմանադրության տեքստում և վերաբերում են իրավունքի տարբեր ոլորտներին, այլ այն արժեքների վերաբերյալ, որոնք բնորոշ են հենց սահմանադրությանը<sup>1</sup>:

Պետության իրավական համակարգում սահմանադրության գերակայությունը հիմնավորում է վերջինիս արժեքը Եվրոպայի և Ամերիկայի քաղաքական ակտիվ բնակչության համար սահմանադրության դարաշրջանի ամենակարգից (այդ բառի ժամանակակից ընկալումներով), ընդ որում բացարձակման կողմնակիցների համար սահմանադրությունը, որն անխուսափելիորեն սահմանափակում է միապետի իշխանությունը, ընկալվում էր ոչ թե որպես բարիք, այլ չարիք: Պետության իրավական համակարգում սահմանադրության գերակայման ընդունումը պահանջեց նման գերակայման ապահովման մեխանիզմի ստեղծում: Ժամանակի ընթացքում ծագեցին սահմանադրական հսկողության և վերահսկման մարմիններ, ինչն էլ հանդիսացավ գերակայման հատկության օրինաչափ արդյունք: Սահմանադրության կարևորության ապահովման մեխանիզմի անհրաժեշտությունն ընդունվեց աստիճանաբար (առաջին մարմինը, որին լիազորվեց նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության ստուգումը (ԱՄՆ Գերագույն դատարան), չէր հանդիսանում մարմին, որը գերադրապես մասնագիտանում էր սահմանադրական վերահսկողության մեջ, իսկ XIX դարում իրավական ակտերի սահմանադրականության անկախ վերահսկողության կիրառության օրինակները միավորական էին): Միայն XX հարյուրամյակում ծագեցին մասնագիտացված սահմանադրական դատական մարմիններ, որոնք մարմնավորում էին Գ. Կելզենի աշխատանքներում շարադրված գաղափարները, ընդ որում XX դարի վերջում սահմանադրական հսկողության մարմինները վերածվեցին գործնական սահմանադրականության անբաժանելի հատկանիշի (դատա-

<sup>1</sup> Մանայան Ա., Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության գրավական: Երևան, «Հայրապետ» հրատ., 2019, էջ 49-55:

1(109)2023  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
 ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՈՒՄ

կանին զուգահեռ ծագեցին նաև սահմանադրական վերահսկողության ոչ դատական մարմիններ): Զարգացած սահմանադրականության պետություն, որում նախատեսված չէ հատուկ սահմանադրական վերահսկողություն, համարվում է Մեծ Բրիտանիան: Ընդ որում, XX դարի վերջում - XXI դարի սկզբում Մեծ Բրիտանիայում պարբերաբար իրականացվում են մասշտաբային բարեփոխումներ, որոնց արդյունքում հնարավոր է նաև ստեղծվի մարմին, որը հատուկ լիազորված կլինի սահմանադրական վերահսկողության իրավասություններով: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում Սահմանադրական դատարանը XXI դարի սկզբներից էական ներդրում ունեցավ Սահմանադրության արժեքի ամրապնդման մեջ:

Սահմանադրության արժեքի զարգացման ուղղություններից մեկը հանդիսանում է մարդու կարգավիճակի ապահովման մեխանիզմի կատարելագործումը<sup>1</sup>: Միևնույն ժամանակ, սահմանադրությունը չի սահմանափակվում մարդու իրավական կարգավիճակի ապահովմամբ, այլ նաև ամրագրում է պետական մարմինների համակարգը և հանրային իշխանության իրականացման կարգը, ինչպես նաև հաստատում հասարակության և պետության կենսագործության իրավաբանական հիմքերը, արդյունքում՝ սահմանադրությունում տեղակայված է իրավունքի բոլոր ոլորտների հիմքը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սահմանադրական արժեքանության և դրա միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու փիլիսոփայությունը ենթադրում է, որ ամեն մի երկրի սահմանադրության ընդունման հիմք պետք է լինի սահմանադրական մշակույթը, ինչը ենթադրում է հասարակական պրակտիկայում և պետական քաղաքականության մակարդակում սահմանադրական արժեքների առկայության որոշակի աստիճան: Այդ արժեքները պետք է ամրագրվեն երկրի Հիմնական օրենքում, որոնք իշխանությունների ու հասարակության կողմից ներդաշնակ ընկալվելուց հետո պետք է իրացվեն առօրյա կյանքում: Իսկ իրականացման արդյունքը կլինի երկրում սահմանադրականության հաստատումը:

<sup>1</sup> Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 75-128:

## Եզրակացություն

Ամփոփելով սույն գիտական հոդվածում կատարված ուսումնասիրությունները՝ կարող ենք կատարել ներքոնշյալ եզրահանգումները.

1. Սահմանադրական արժեքանությունը գիտական ուղղություն է, որի նպատակն է բացահայտել սահմանադրության մեջ բովանդակվող արժեքները և սահմանել օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով իրավակիրառ պրակտիկայում դրանք իրացնելու, մարդկանց կենսագործունեության անբաժանելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրականացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները:

2. Սահմանադրական արժեքանությունը կոչված է հետազոտելու սահմանադրականության հիմնահարցերը և նպաստելու երկրում սահմանադրականության հաստատմանը:

3. Կարծում ենք, որ սահմանադրական արժեքանության գլխավոր առաքելությունը երկրում սահմանադրականության հաստատումն ու դրա հետագա զարգացումն է:

## Օգտագործված գրականության ցանկ

1. **Հարությունյան Գ.Գ.**, Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, էջ 43:
2. **Հարությունյան Գ.Գ.**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 75-128:
3. **Մանասյան Ա.**, Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության գրավական: Երևան, «Հայրապետ» հրատ., 2019, էջ 49-55:
4. **Манхейм К.** Идеология и утопия // *Манхейм К.* Диагноз нашего времени. - М., 1994. - С. 23.
5. Конституционные ценности. Содержание и проблемы реализации // Материалы междунароод. науч.-теор. конфер. (Москва, 4-6 декабря 2008 г.). - М., 2010. Т. 1-2.
6. Ценностей теория, аксиология // Философский энциклопедический словарь / Гл. редакция Г.Ф. Ильичев, П.Н. Федосеев, С.М. Ковалев, В.Г. Панов. - М.: Сов. Энциклопедия, 1983. - С. 664:

7. **Кант И.** Критика чистого разума. - М., 1994. - С. 347.
8. **Лучин В.О.** Конституционные нормы и правоотношения. - М., 1997. - С. 42.
9. Garcia et Enterria E. La Constutution Espanola de 1978 coto pactosocial y coto norma juridico Boletin Mexicano de derecho comprarado. Vol 123. №5. P. 371-398.

## ПОНЯТИЕ КОНСТИТУЦИОННОЙ АКСИОЛОГИИ

### Аннотация

**Статья посвящена** раскрытию и решению вопросов в связи с понятием конституционной аксиологии и ее значением посредством всестороннего, в частности сравнительно-правового анализа. В современных конституционных развитиях особая важность придается раскрытию содержания, восприятию Конституции и закрепленных в ней основополагающих конституционных ценностей и принципов, а также их превращению в правило реальной жизни, что в конечном итоге должно способствовать утверждению и становлению конституционализма в стране. В последние десятилетия конституционная аксиология занимает особое место в повестках ряда международных конференций, стала предметом научного исследования, посвященные ей труды изданы в виде книг, журналов и сборников научных статей.

**Предметом исследования** стали сущность и содержание Конституции. В юриспруденции аксиология формировалась и развивалась как юридическая аксиология, предметной областью и основной темой которой являются проблемы восприятия и толкования права как ценности. Квалификация Конституции и содержащихся в ней основополагающих принципов как ценности стала основой для того, чтобы в рамках науки конституционного права, как самостоятельного научного направления, сформировалась **конституционная аксиология**.

Несмотря на то обстоятельство, что конституционная аксиология - молодое, самостоятельное научное направление и, следовательно, должны проводиться многочисленные фундаментальные исследования относительно нее как новой и имеющей большие масштабы

исследования сферы, между тем в основном в рамках кандидатских диссертаций и научных статей затрагиваются различные правовые и конституционные ценности, однако не конкретизируются содержание и отдельные элементы конституционной аксиологии. В этом аспекте нужно констатировать, что интерес к конституционным ценностям не исчерпан, а из года в год все более растет, что и **обосновывает актуальность статьи.**

**Ключевые слова:** конституционная ценность, благо, конституционная аксиология, конституционализм, юридическая дисциплина, правовая система, верховенство права.

## THE CONCEPT OF CONSTITUTIONAL AXIOLOGY

### Annotation

**The article is devoted to** the disclosure and resolution of issues related to the concept of constitutional axiology through a comprehensive, in particular, comparative legal analysis. In modern constitutional developments, particular importance is attached to the disclosure of the content and perception of the Constitution, as well as the fundamental constitutional values and principles prescribed therein, as well as their transformation into a rule of real life, which ultimately should contribute to the establishment and formation of constitutionalism in the country. In recent decades, constitutional axiology has had a special place in the agendas of a number of international conferences, and it has become the subject of scientific research, and the works devoted to it have been published in the form of books, journals and collections of scientific articles.

**The subject of the study** was the essence and content of the Constitution. In jurisprudence, axiology was formed and developed as a legal axiology, the subject area and main topic of which are the issues of perception and interpretation of law as a value. The qualification of the Constitution and the fundamental principles contained therein as values became the basis for the formation of **constitutional axiology** within the framework of the science of constitutional law as an independent scientific direction.

Despite the circumstance, that constitutional axiology is a young and independent scientific direction, and therefore, numerous fundamental studies should be conducted regarding it as a new and large-scale field of

research; meanwhile, various legal and constitutional values are touched upon mainly within the framework of candidate dissertations and scientific articles, however, the content and certain elements of the constitutional axiology are not specified. In this regard, it should be stated that the existing interest in constitutional values is not exhausted, but increases from year to year, which **justifies the relevance of this article.**

**Keywords:** constitutional value, boon, constitutional axiology, constitutionalism, legal discipline, legal system, rule of law.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 07.03.2023, փրվել է գրախոսության 09.03.2023, ընդունվել է փրագրության 25.03.2023:*





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ 1(109)2023

Քաղ. Երևան

17 հունվարի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի,  
Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-  
տանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածք-  
ների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանի,  
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ  
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2021 թվականի մայիսի  
14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության  
կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարու-  
թյան միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 17-ի N 160-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի մայիսի 14-ին Երևանում՝ երկու պետությունների համապատասխան տարածքների միջև օդային հաղորդակցություններ հաստատելու և նման հաղորդակցությունների հետ կապված միջազգային համագործակցությունը հնարավորինս խթանելու նպատակով:

Համաձայնագրի անբաժան մասն է կազմում հավելվածը, որը սահմանում է երթուղիների աղյուսակը:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի դրույթները ենթակա են Չիկագոյի կոնվենցիայի դրույթներին այնքանով, որքանով այդ դրույթները կիրառելի են միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ:

Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների համաձայն՝ Պայմանավորվող կողմերը վերահաստատում են, որ քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ անօրինական միջամտության գործողություններից պաշտպանելու միմյանց հանդեպ իրենց պարտավորությունը կազմում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ 1(109)2023

2. Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցվում է 1995 թվականի ապրիլի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարության միջև օդային հաղորդակցության մասին» համաձայնագրի գործողությունը (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի սեպտեմբերի 12-ին՝ ԱԺ Ն-200-2 որոշմամբ (ՍԴՈ-312)):

3. Կողմերը համաձայնում են համագործակցել օդային հաղորդակցությունների ոլորտում՝ Համաձայնագրին, ինչպես նաև իրենց պետությունների ազգային օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան: Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. սիրիական կողմին միջազգային օդային հաղորդակցությունների առնչությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքի վրայով առանց վայրէջքի թռիչք կատարելու իրավունք և Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ առևտրային նպատակներով կանգառներ կատարելու իրավունք (Հոդված 4, կետ 1),

3.2. եթե գինված հակամարտության, քաղաքական հուզումների կամ զարգացումների կամ արտակարգ և անսովոր հանգամանքների պատճառով սիրիական կողմի նշանակված ավիաընկերությունը չի կարող շահագործել հաղորդակցությունն իր սովորական երթուղով, ապա գործադրել առավելագույն ջանքեր՝ ապահովելու համար այդպիսի հաղորդակցության շարունակական շահագործումը երթուղիների համապատասխան ժամանակավոր վերադասավորման միջոցով (ներառյալ նման ժամանակահատվածի համար իրավունքների տրամադրումն այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ կլինի հաղորդակցությունների շահագործման համար), որոնք կորոշվեն հայկական և սիրիական կողմերի փոխադարձ համաձայնությամբ (Հոդված 4, կետ 5),

3.3. երաշխավորել յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության առանց որևէ խտրականության Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրած բոլոր օդային ուղիներից, օդանավակայաններից և այլ սարքավորումներից օգտվելու իրավունքը (Հոդված 4, կետ 6),

3.4. սիրիական կողմից, սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման նպատակով մեկ կամ մի քանի ավիաընկերությունների նշանակման մասին տեղեկատվություն ստանալով, Համաձայնագրի 5-րդ Հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն նշանակված ավիաընկերությանը կամ ավիաընկերություններին անհապաղ տրամադրել համապատասխան շահագործման լիազորություններ (Հոդված 5, կետեր 1 և 3),

3.5. ապահովել սիրիական կողմի նշանակված ավիաընկերությունների համար արդար և հավասար հնարավորություն՝ շահագործելու համաձայնեցված հաղորդակցությունները Համաձայնագրի Հավելվածում նշված սահմանված երթուղիներով (Հոդված 7, կետ 1),

3.6. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության տարածք/տարածքից/տարածքով միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ կիրառվող սակագները նշանակված ավիաընկերությունների կողմից սահմանվեն ողջամիտ մակարդակով՝ պատշաճ ուշադրություն դարձնելով բոլոր համապատասխան գործոնների՝ ներառյալ շահագործման ծախսերի, հիմնավոր շահույթի և այլ ավիաընկերությունների սակագների վրա (Հոդված 8, կետ 1),

3.7. սիրիական կողմի նշանակված ավիաընկերության (ավիաընկերությունների) կողմից միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավը, ինչպես նաև այդպիսի օդանավում գտնվող դրանց հիմնական սարքավորումները, պահեստամասերը, վառելիքի և քսայուղերի պաշարներն ու օդանավում առկա պաշարները (ներառյալ սննդամթերքը, ըմպելիքները և ծխախոտը) Հայաստանի Հանրապետության տարածքում ազատել բոլոր մաքսատուրքերից, տեսչական հարկերից և այլ գանձումներից կամ հարկերից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և պաշարները մնան օդանավում մինչև դրանց վերարտահանումը (Հոդված 9, կետ 1),

3.8. խնդրանքի դեպքում՝ սիրիական կողմին տրամադրել անհրաժեշտ օժանդակությունը՝ կանխելու համար քաղաքացիական օդանավերի ապօրինի զավթման գործողությունները և նման օդանավերի, դրանց ուղևորների և անձնակազմերի, օդանավակայանների և աերոնավիգացիոն միջոցների անվտանգության դեմ ուղղված ապօրինի այլ գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ցանկացած այլ սպառնալիք (Հոդված 10, կետ 2),

3.9. սիրիական կողմի հետ հարաբերություններում գործել ավիացիոն անվտանգության չափորոշիչներին, և այնքանով, որքանով դրանք կիրառելի են Պայմանավորվող կողմերի նկատմամբ, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության կողմից հաստատված և Կոնվենցիայի հավելվածներ հանդիսացող «Առաջարկվող գործելակերպին» համապատասխան, և պահանջել, որ հայկական կողմի գրանցամատյանում ընդգրկված օդանավ շահագործողները, այն շահագործողները, որոնց գործունեության հիմնական վայրը կամ մշտապես գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է, և Հայաստանի Հանրապետության տարածքում օդանավակայան շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին համապատասխան (Հոդված 10, կետ 3),

3.10. Հայաստանի Հանրապետության այն օրենքները և կանոնակարգերը, որոնք կարգավորում են միջազգային օդային հաղորդակցություններ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
 ◆ 1(109)2023

իրականացնող օդանավերի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու կամ պետության տարածքից մեկնելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդպիսի օդանավի շահագործման և նավի-գացիայի հետ կապված հարցերը, կիրառել նաև սիրիական կողմի ավիա-ընկերության կամ ավիաընկերությունների նկատմամբ (Հոդված 12, կետ 1),

3.11. սիրիական կողմի նշանակված ավիաընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում ազատել համաձայնեցված հաղորդակցությունների շահագործումից գոյացած եկամուտների կամ շահույթի հարկից կամ այլ համանման հարկերից (Հոդված 14, կետ 1),

3.12. սիրիական կողմի նշանակված ավիաընկերությունը կամ ավիա-ընկերությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության՝ մուտք գործելուն, կացությանը և զբաղվածությանը վերաբերող օրենքների և կանոնակարգումների, իրավունք կունենան Հայաստանի Հանրապետության տարածք բերելու և այնտեղ պահելու իրենց սեփական՝ վարչական, տեխնիկական, շահագործումների գծով և այլ մասնագետներից բաղկացած անձնակազմը, որն անհրաժեշտ է օդային հաղորդակցությունների շահագործման համար (Հոդված 15, կետ 1),

3.13. սիրիական կողմի նշանակված ավիաընկերությունների նկատմամբ չսահմանել կամ չթույլատրել սահմանել ավելի բարձր գանձումներ, քան այն գանձումները, որոնք սահմանված են նմանատիպ միջազգային օդային հաղորդակցություններ իրականացնող այլ ավիաընկերությունների նկատմամբ (Հոդված 16, կետ 1),

3.14. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության նշանակված ավիա-ընկերությունը կամ ավիաընկերությունները շահագործումն սկսելուց առնվազն երեսուն (30) օր առաջ սիրիական կողմի ավիացիոն իշխանություններին հաստատման համար ներկայացնեն իրենց կամ իրենց փոխադրումների ծրագրերը (երթնեկության ամառային և ձմեռային ժամանակաշրջանների համար) (Հոդված 17, կետ 1),

3.15. Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ վեճերը լուծել Համաձայնագրի 20-րդ հոդվածով սահմանված կարգով (Հոդված 20):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մա-

սերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2021 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունվարի 2023 թվականի  
ՍԴՈ-1676

1(109)2023

◆ ՍԵՂՈՒԿԻ

◆ ՏԵՂԵԳՅԱՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1676 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1676 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1676 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1 (109)2023

նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1676 որոշմամբ 2021 թվականի մայիսի 14-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ



սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն

էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ,

և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական

**ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում են, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնելին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև**


**կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝** **Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**  
**«17» հունվարի 2023թ.**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1(109)2023



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 թվականի մարտի 31-ին ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2018 թվականի ՀՈՒՆԻՍԻ 28-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 թվականի մաՅԻՍԻ 29-ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 5.7 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 հունվարի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

1(109)2023  
◆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
167



Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի մարտի 31-ին Հանդում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 3 N 1687-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի մարտի 31-ին Հանդում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ արձանագրությունում (այսուհետ՝ Արձանագրություն) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ արձանագրությունը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Արձանագրությունն ստորագրվել է 2022 թվականի մարտի 31-ին Հանդում՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Ղրղզական Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայության, Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարության միջև:

Արձանագրության ստորագրմանը նախորդել է «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ին համաձայնագրի (ՍԴՈ-1277՝ ընդունված 2016 թվականի հունիսի 3-ին, ՀՀ կողմից վավերացվել է 2016 թվականի հունիսի 17-ին Ազգային ժողովի ԱԺՈ-223-Ն որոշմամբ) և «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7-րդ հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» 2018 թվականի հունիսի 28-ին արձանագրության (ՍԴՈ-1484՝ ընդունված 2019 թվականի հոկտեմբերի 22-ին, ՀՀ կողմից վավերացվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՕ-291-Ն օրենքով) ստորագրումը: Այս արձանագրությունն ունի անբաժանելի մաս կազմող երեք Հավելված:

Վերը նշված համաձայնագրի 5.7-րդ հոդվածը նախատեսում է ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև էլեկտրոնային տեղեկատվության կանոնավոր կերպով փոխանակում, իսկ վերը նշված արձանագրության նորմերը նախատեսում են էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման փուլային ներդրում՝ ինտեգրացիոն տեղեկատվական համակարգի միջոցով: Սկզբնական շրջանում այն վերաբերվել է կոնկրետ ապրանքներին, որից հետո տեղեկատվության փոխանակման իրագործումը նախատեսվում է տարածել բոլոր ապրանքների վրա:

Արձանագրությունը մշակվել է տեղեկատվության փոխանակման երկրորդ փուլի իրականացման նախապատրաստման նպատակով և ներառում է այն ապրանքների ցանկը, որոնց մասին տեղեկատվության փոխանակումը նախատեսվում է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության երկրորդ փուլի շրջանակներում:

Արձանագրությամբ նախատեսվում է փոփոխություններ կատարել 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության 3-րդ հոդվածի

5-րդ կետի երրորդ պարբերությունում, Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի յոթերորդ տողում, 74-րդ տողում և 82-րդ պարբերությունում, 2-րդ Հավելվածում, ինչպես նաև ավելացվում է նոր 4-րդ Հավելվածով:

2. Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանվում է, որ Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը: Հայաստանի Հանրապետության կողմից Արձանագրությունը ստորագրվել է վերապահումով, որի համաձայն՝ այն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կողմից ուժի մեջ մտնելու համար համապատասխան ներպետական ընթացակարգերն անցնելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովին և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությանը ծանուցելու ամսաթվից:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

3.1. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի 7-րդ և 82-րդ տողերում սահմանված փոխանակման ենթակա տեղեկությունների տրամադրման նախկին կամընտրական կարգի փոխարեն կիրառել պարտադիր կարգը (հոդված 1, կետ 2),

3.2. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի արձանագրության Հավելված 1-ի Առդիր Ա-ի Աղյուսակ 2-ի 74-րդ տողում սահմանված փոխանակման ենթակա տեղեկությունների տրամադրման նախկին պարտադիր կարգի փոխարեն կիրառել կամընտրական կարգը (հոդված 1, կետ 2),

3.3. 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի սահմանած կարգով փոխանակման ենթակա տեղեկությունները տրամադրել այդ համաձայնագրի **Հավելված 2-ի նոր խմբագրությամբ սահմանված ցանկին համապատասխան** (հոդված 1, կետ 3),

3.4. Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությանը փոխանցել 4-րդ Հավելվածի 2-րդ պարբերությամբ սահմանված ապրանքային միավորների վերաբերյալ տեղեկություններ (հոդված 1, կետ 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական

ՏԵԼԵՎԻԶՈՐ ՎԵՐՆԱԿՆԵՐՈՒՄ 1(109)2023

օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի մարտի 31-ին Հանդյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունվարի 2023 թվականի  
ՍԴՈ-1677

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ՀԱՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՏՆԱՄԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 5.7 ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1677 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(109)2023

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի մարտի 31-ին Հանդյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1677 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի մարտի 31-ին Հանդյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի

29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1677 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես

ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1677 որոշմամբ 2022 թվականի մարտի 31-ին Հանդյում ստորագրված «2018 թվականի հունիսի 28-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն՝ տեղեկությունների փոխանակման իրագործման մասին» արձանագրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատա-

րանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:



- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների

հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան

դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղե-

կատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ

պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում են, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը,

ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«17» հունվարի 2023թ.**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 թվականի ադրիլի 19-ին ստորագրված «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղ. Երևան

17 հունվարի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.  
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաս-  
տանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության  
նախարար Ռ. Խաչատրյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդ-  
վածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի  
ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարու-

թյան և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1688-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի ապրիլի 19-ին Մոսկվայում՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների միջև տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցության խթանման նպատակով:

2. Համաձայնագրի կիրարկմամբ նախատեսվում է նպաստել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև փոխգործակցության ընդլայնմանը, ներառյալ՝ սպառնալիքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և դրանց համատեղ դիմակայման, տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով վստահության ամրապնդման միջոցառումների համաձայնեցմանն ու իրականացմանը, օրենսդրական



դաշտի վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը, ոլորտը կարգավորող իրավական դաշտի զարգացմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործունեության համակարգմանը:

3. Հայաստանի Հանրապետության պետական ու ծառայողական գաղտնիք և (կամ) Ռուսաստանի Դաշնության պետական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող տեղեկատվության փոխանակման կարգը, պայմանները և պաշտպանության միջոցները Համաձայնագրի գործողության ընթացքում և դրա գործողության ավարտից հետո սահմանվում են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» 2002թ. նոյեմբերի 5-ի համաձայնագրով:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում համագործակցությունն իրականացնել այնպես, որ նշված համագործակցությունը նպաստի սոցիալական և տնտեսական զարգացմանը, համատեղելի լինի միջազգային խաղաղության, անվտանգության ու կայունության պահպանման խնդիրների հետ և համապատասխանի միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև երկկողմ համագործակցության և ռուսական կողմի տեղեկատվական ռեսուրսներին չմիջամտելու սկզբունքներին (հոդված 2, մաս 1),

4.2. ունենալով ՀՀ տեղեկատվական ռեսուրսները ոչ օրինաչափ օգտագործումից և չարտոնված միջամտությունից, այդ թվում՝ դրանց վրա համակարգչային հարձակումներից պաշտպանելու հավասար իրավունքներ՝ չիրականացնել ռուսական կողմի նկատմամբ նման գործողություններ և աջակցություն ցուցաբերել ռուսական կողմին նշված իրավունքների իրականացման գործում (հոդված 2, մաս 3),

4.3. ջանքեր գործադրել, որ ՀՀ տեղեկատվական ենթակառուցվածքը և ռեսուրսները որևէ երրորդ կողմ չօգտագործի ռուսական կողմին վնաս հասցնելու համար (հոդված 2, մաս 4),

4.4. Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, դիվանագիտական ուղիներով ռուսական կողմի հետ փոխանակել

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ ◆ 1(109)2023

Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու՝ ՀՀ իրավասու մարմինների մասին տվյալները (հոդված 5, մաս 1),

4.5. Համաձայնագրի իրագործման ընթացքի ուսումնասիրության, տեղեկատվության փոխանակման, տեղեկատվական անվտանգության սպառնալիքների վերլուծության և համատեղ գնահատման, այդ սպառնալիքներին արձագանքելու համատեղ միջոցառումների սահմանման, համաձայնեցման և համակարգման նպատակով ռուսական կողմի հետ կանոնավոր կերպով անցկացնել իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ միջգերատեսչական խորհրդակցություններ, ինչպես նաև իրավասու մարմինների խորհրդակցություններ: Միջգերատեսչական խորհրդակցություններն անցկացնել ռուսական կողմի հետ համաձայնեցմամբ, տարին առնվազն մեկ անգամ՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում, իսկ իրավասու մարմինների խորհրդակցությունները՝ տվյալ մարմինների համաձայնեցմամբ (հոդված 5, մաս 3, պարբերություններ 1 և 2),

4.6. ապահովել Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում փոխանցվող կամ ստեղծվող տեղեկատվության պատշաճ պաշտպանությունը, որի հասանելիությունը սահմանափակված է ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 6, պարբերություն 1),

4.7. անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության փոխանցումը Համաձայնագրի շրջանակներում իրականացնել ՀՀ օրենսդրության համապատասխան, ընդ որում՝ ստացված անձնական տվյալները չփոխանցել երրորդ անձանց և կողմերին կամ հրապարակել՝ առանց նշված անձնական տվյալները տրամադրած ռուսական կողմի գրավոր համաձայնության (հոդված 6, պարբերություն 4),

4.8. կատարել Համաձայնագրի իրականացման նպատակով համապատասխան միջոցառումներին ՀՀ ներկայացուցիչների և փորձագետների մասնակցության հետ կապված ծախսերը (հոդված 7, մաս 1):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունվարի 2023 թվականի  
ՍԴՈ-1678



## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1678 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1678 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1678 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի

1(109)2023  
 ◆ ՏԵՂԵԿԱԿԵԻՆ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1678 որոշմամբ 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրա-

պետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն

մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:



Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները

կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար,

իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին,**

**ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սրահնալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

«17» հունվարի 2023թ.



նագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1718-Ա որոշմամբ հավանություն է տվել 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի նոյեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2021 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում՝ երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների և տեխնիկատնտեսական համագործակցության հետագա զարգացման նպատակով:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարության խնդրանքով Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը տրամադրում է հարյուր միլիոն չինական յուանի չափով անհատույց օգնություն՝ Հայաստանի Հանրային հեռուստատեսության համար հեռարձակման դահլիճի նախագծի, այդ թվում՝ փոխհամաձայնեցված այլ նախագծերի քննարկման և իրականացման համար (հոդված 1, պարբերություն 1):

Համապատասխան կոնկրետ հարցերի համար նախատեսվում է Կողմերի միջև լրացուցիչ պայմանագրերի կնքում (հոդված 1, պարբերություն 2):

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

2.1. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան՝ Չինաստանի զարգացման պետական բանկի կողմից ստացված

տեղեկատվությունն ուղարկի Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ հետագա հաստատման համար (հոդված 2, պարբերություն 2),

**2.2.** ազատել ապրանքները և ծառայությունները հարկերից և մաքսատուրքերից, ինչպես նաև Համաձայնագրի շրջանակներում կրել պարտադիր ծախսերը (հոդված 3):

**3.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

**2.** Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

17 հունվարի 2023 թվականի  
ՍԴՈ-1679

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԴԵԿՎԱԳԻՐ ◆ 1(109)2023

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1679 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1679 որոշմամբ որոշել է, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի հունվարի 17-ի ՍԴՈ-1679 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական



դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1679 որոշմամբ 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև՝ տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմում-

ները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության աղիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝

իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ավելին, սույն գործում առկա՝ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը նույնիսկ չի պարունակում նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին (հիմք՝ Սահմանադրական

դատարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի՝ փաստաթղթերի մուտքագրման դրոշմակնիք պարունակող դիմումը):

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական

դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից:

Ավելին, իմ գնահատմամբ՝ տվյալ դեպքում որևէ պարագայում հնարավոր չէր ստուգել ստորագրության իսկությունը և ներկայացված դիմումը համարել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, քանի որ սույն գործում առկա՝ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված, **Սահմանադրական դատարանի աշխատակազմի ընդհանուր բաժնում մուտքագրված դիմումի վրա (հիմք՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի՝ փաստաթղթերի մուտքագրման դրոշմակնիք պարունակող դիմումը) ոչ միայն առկա չէր ստորագրություն, այլև նույնիսկ առկա չէր նշում՝ այդ փաստաթուղթն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին:** Նման պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված



փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ փյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ փյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սպանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պեպք է տրամադրվել օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«17» հունվարի 2023թ.**

1(109)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 մարտի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի (զեկուցող), Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկար-  
յանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Միջազգային իրավական հարցերով  
ներկայացուցիչ Ե. Կիրակոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ  
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»  
սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի 1-ին  
մասի և 74-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1998 թվականի հուլիսի  
17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրու-  
թյունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը  
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունը 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2097-Ա որոշմամբ  
հավանություն է տվել «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝

1(109)2023  
◆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
209

Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու և կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավագրությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն ընդունելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունվարի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (անգլերեն բնօրինակն ու հայերեն պաշտոնական թարգմանությունը) և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1. Ստուգման ենթակա միջազգային պայմանագրերը**

1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) ընդունվել է 1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում՝ Միջազգային քրեական դատարանի հիմնադրման նպատակով ձևավորված՝ Միավորված ազգերի կազմակերպության Լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական կոնֆերանսում և ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ից:

1.1. Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունն ստորագրել է 1999 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հայտարարությամբ, համաձայն որի՝

«Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 124-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետության համար Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում չի ընդունում Դատարանի իրավագրությունը 8-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ, երբ, ինչպես ենթադրվում է, հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիների կողմից կամ իր տարածքում:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ընդունել Դատարանի կողմից դատապարտված անձանց, եթե նրանք ՀՀ քաղաքացիներ կամ ՀՀ-ում մշտական բնակություն հաստատած անձինք են»:

1.2. Կառավարությունը 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2097-Ա որոշմամբ հավանություն է տվել Կանոնադրությունը վավերացնելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությանը՝ սույն գործի շրջանակում 2023 թվականի մարտի 17-ին Սահմանադրական

դատարանին տեղեկացնելով 1999 թվականի հոկտեմբերի 1-ի՝ նախորդ կետում նշված հայտարարությունը կատարելու մտադրության բացակայության մասին:

**1.3.** Կառավարության նույն որոշմամբ հավանության արժանացած օրենքի նախագծի համաձայն՝ նախատեսվում է ընդունել Հայաստանի Հանրապետության կողմից Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունը հետադարձորեն ճանաչում է 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության» 12-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության» 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների նկատմամբ՝ 2021 թվականի մայիսի 10-ի ժամը 00:00-ից ի վեր»:

**1.4.** Կանոնադրությունում մինչ օրս կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

**ա)** 2010 թվականի հունիսի 10-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը լրացվել է xiii, xiv, xv ենթակետերով),

**բ)** 2010 թվականի հունիսի 11-ին (5-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է, 8-րդ հոդվածից հետո ավելացվել է *8bis* հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է՝ դրանում *8bis* հոդվածին հղում ավելացնելով, 15-րդ հոդվածից հետո ավելացվել են *15bis* և *15ter* հոդվածները, 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է՝ դրանում *8bis* հոդվածին հղում ավելացնելով, 25-րդ հոդվածը լրացվել է *3bis* մասով),

**գ)** 2015 թվականի նոյեմբերի 26-ի փոփոխությամբ 124-րդ հոդվածը հանվել է (փոփոխությունը դեռ ուժի մեջ չի մտել),

**դ)** 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետը լրացվել է xxvii ենթակետով, իսկ 8-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» կետը լրացվել է xvi ենթակետով),

**ե)** 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը լրացվել է xxviii ենթակետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը՝ xvii ենթակետով),

**զ)** 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը լրացվել է xxix ենթակետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը՝ xviii ենթակետով),

**է)** 2019 թվականի դեկտեմբերի 6-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը լրացվել է xix ենթակետով):

**1.5.** Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունում կատարված որևէ փոփոխության չի միացել:

1(109)2023  
 ՍԿԵՆԱՐԻՍ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1.6. Այսպիսով, Կառավարությունը Սահմանադրական դատարան է դիմել առանց փոփոխությունների Կանոնադրությամբ և Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:

**2. Սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշումը**

2.1. 2004 թվականի հուլիսի 12-ին, ղեկավարվելով 1995 թվականի Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանրապետության Նախագահը դիմել էր Սահմանադրական դատարան՝ Կանոնադրությունում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով: Սահմանադրական դատարանը 2004 թվականի օգոստոսի 13-ին «1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրել է ՍԴՈ-502 որոշումը, որի համաձայն՝

«1. 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավազորության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 և 92 հոդվածներին:

2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվածի, 55 հոդվածի 17 կետի, 81 հոդվածի 1-ին կետի պահանջներին»:

2.2. Սահմանադրական դատարանը ՍԴՈ-502 որոշման պատճառաբանական մասում, մասնավորապես, նշել էր.

«(...)

Կանոնադրությունն ամրագրում է Դատարանի իրավազորության հիմքում ընկած հիմնական սկզբունքը, այն է՝ Դատարանը, իրավազորություն իրականացնելով Կանոնադրությամբ նախատեսված ծանր հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց նկատմամբ, լրացնում է ներպետական իրավազորության մարմինները: Դատարանի

իրավագործության հիմքում ընկած այս սկզբունքի բովանդակությունը, մասնավորապես, բացահայտված է Կանոնադրության 17 հոդվածում, որի համաձայն՝ Դատարանն իրավասու է Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների նկատմամբ արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների առնչությամբ պատշաճ կերպով իրականացնել քննություն կամ քրեական հետապնդում: Նույն հոդվածը նաև հստակորեն սահմանում է այն գործոնները, որոնք օբյեկտիվ հիմք են հանդիսանում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետության կողմից քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու ցանկության բացակայությունը միջազգային իրավունքով ճանաչված համապատասխան ընթացակարգային նորմերին համապատասխան գնահատելու համար: Կանոնադրության 17 հոդվածի 3-րդ կետը սահմանում է նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետության՝ քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու անկարողության առկայության գնահատման օբյեկտիվ հիմքերը: Բացի դրանից, Կանոնադրության 19 հոդվածը տվյալ գործի նկատմամբ իրավագործություն ունեցող պետությանը հնարավորություն է տալիս վիճարկել գործի ընդունելիությունը և Դատարանի իրավագործությունն այն հիմքով, որ այդ պետությունը գործով քննություն կամ քրեական հետապնդում է իրականացնում կամ իրականացրել է: Դատարանի՝ ներպետական քրեական իրավագործության մարմիններին լրացնող բնույթը դրսևորվում է նաև նրանում, որ Կանոնադրությունը նախատեսում է նաև կոնկրետ անձանց նկատմամբ քննությունը Դատախազի կողմից իրավասու պետությանը փոխանցելու հնարավորություն, երբ այդ պետությունը Կանոնադրությամբ սահմանված ժամկետում Դատարանին տեղեկացնում է, որ ինքը քննություն է իրականացնում կամ իրականացրել է այդ անձանց նկատմամբ:

Այսուհանդերձ, Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և հոդված 1-ով նախատեսված՝ ներպետական քրեական իրավագործության մարմինների լրացման դրույթը չի բխում ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներով ամրագրված նորմերից: Արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը: Ներպետական դատական համակարգի առնչությամբ ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, այդ թվում նաև քրեական իրավագործություն իրականացնող դատարաններն են առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը:

«Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 9-րդ գլուխը, հստակորեն սահմանելով «՝ դատական իշխանության համակարգը, չի նախատեսում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել «Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրավագործության միջազգային դատական մարմնով:

15. Պետության ինքնիշխանության սկզբունքի և Դատարանի իրավագործության փոխհարաբերության հիմնախնդրին են առնչվում նաև Կանոնադրության 54 հոդվածի 2-րդ կետի, 57 հոդվածի 3-րդ կետի /դ/ ենթակետի և 99 հոդվածի 4-րդ կետի դրույթները: Այս դրույթները հնարավորություն են ընձեռում Դատախազին համապատասխան մասնակից պետության տարածքում անմիջականորեն իրականացնել առանձին քննչական գործողություններ՝ առանց այդ պետության կողմից համագործակցության համաձայնություն ստանալու կամ առանց այդ պետության իշխանությունների ներկայության:

Կանոնադրության նշված դրույթները և 54, 57 և 99 հոդվածների այլ դրույթներ, Դատախազին տրամադրելով բավականին լայն լիազորություններ, միաժամանակ նախատեսում են մի շարք երաշխիքներ, որոնք հաշվի են առնում պետության ինքնիշխանությունը և թույլ չեն տա Դատախազին չարաշահել իր իրավասությունը:

(...)

Այսպիսով, Կանոնադրության 54 հոդվածի 2-րդ կետը, 57 հոդվածի 3-րդ կետի /դ/ ենթակետը և 99 հոդվածի 4-րդ կետն ածանցյալ են Դատարանի գործունեության հիմքում ընկած փոխլրացնելիության սկզբունքից և, մեկնաբանվելով այդ սկզբունքի՝ Սահմանադրությամբ ամրագրված լինելու համատեքստում, չեն կարող վտանգել մասնակից պետության ինքնիշխանությունը:

(...)

Կանոնադրության 105 հոդվածի համաձայն՝ ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ Դատարանի դատավճիռը պարտադիր է մասնակից պետությունների համար, որոնք ոչ մի դեպքում չեն կարող փոփոխել այն: Այս դրույթը ենթադրում է, որ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործությունների համար Դատարանի կողմից դատապարտված Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձինք չեն կարող օգտվել ներում ստանալու, ինչպես նաև իրենց նկատմամբ համաներման կիրառման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրկման ժամկետի կրճատման հնարավորությունից, և, համապատասխանաբար՝ «Նախագահը չի կարող այդ անձանց առնչությամբ իրացնել «Սահմանադրության 55 հոդվածի 17 կետով նախատեսված՝ դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքը, իսկ «Ազգային ժողովը՝

ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ համաներում հայտարարելու իրավունքը:

Այն դեպքում, երբ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական իրավազորություն իրականացնում են ՀՀ ներպետական դատարանները, վերջիններիս կողմից ազատագրկման դատապարտված անձինք կարող են օգտվել ներում հայցելու հնարավորությունից և համաներման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրկման ժամկետի կրճատման հնարավորությունից: Մինչդեռ, նույն հանցագործությունների համար Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավազորության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավազորության ներքո գտնվող անձինք Կանոնադրության 105 հոդվածի պահանջներին համապատասխան զրկվում են ՀՀ Սահմանադրության 40 հոդվածով նախատեսված ներման իրավունքից, ինչպես նաև 81 հոդվածով ամրագրված համաներման հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետությունը, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 4 հոդվածով ստանձնած՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների, չի կարող ստանձնել Սահմանադրությամբ չնախատեսված՝ մարդու իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք նվազ բարենպաստ վիճակ կստեղծեն ՀՀ իրավազորության ներքո գտնվող անձանց համար՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների և ազատությունների երաշխավորման առումով:»

**2.3.** Սահմանադրական դատարանը նկատում է, որ ՍԴՈ-502 որոշմամբ ստուգման են ենթարկվել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները, և Կանոնադրության ու Կանոնադրության՝ 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշմամբ նշված անվանումների միջև առկա է տարբերություն: Սակայն հաշվի առնելով, որ նշված տարբերության պատճառը Կանոնադրության՝ 2004 թվականի (ըստ որի՝ Կանոնադրությունը նշված է՝ «1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագիր») և 2023 թվականի հայերեն թարգմանության պաշտոնական տեքստերի միջև եղած տարբերությունն է, հիշյալ անհամապատասխանությունը սույն քննության նպատակների համար իրավական տարբերություն չի ստեղծում:

**3. Կառավարության դիրքորոշումը**

**3.1.** Կառավարությունը 2023 թվականի փետրվարի 3-ի գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Կանոնադրության նպատակն է դրանում նշված առավել ծանր հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությունը

1(109)2023  
 ◆ ՏԵՂԵԿԻՎԵՐԻ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



բացառելու և դրանով իսկ այդպիսի հանցագործությունների կանխմանը նպաստելու համար ներպետական քրեական իրավազորության մարմիններին լրացնող Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը, որին ընդդատյա են ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունները՝ ներկայացնելով նաև դրա կողմից իր իրավազորությունն իրականացնելու առիթների և նախապայմանների վերաբերյալ Կանոնադրության դրույթները:

Կառավարությունը նշել է, որ Կանոնադրության՝ Սահմանադրական դատարան ներկայացված տեքստը 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված փաստաթղթի սկզբնական տարբերակն է, և Կանոնադրության դրույթների սահմանադրականության գնահատման համար դիմել է Սահմանադրական դատարան՝ հիմք ընդունելով դրա՝ 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված սկզբնական տեքստը, որն էլ, անցնելով Սահմանադրությամբ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախատեսված անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը, և Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքում ներկայացվելու է Ազգային ժողովի վավերացմանը:

Ըստ Կառավարության՝ Սահմանադրական դատարանի 2004 թվականի որոշումից հետո Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել Սահմանադրության փոփոխություններ, որոնց արդյունքում Սահմանադրությունը ենթարկվել է հիմնարար փոփոխությունների: Նշվում է, որ վերջին տասնամյակի ընթացքում տեղի ունեցած իրավական և հասարակական զարգացումները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ «(...) 2004թ. որոշմամբ Սահմանադրական դատարանի ամրագրված իրավական խոչընդոտները ներկայումս վերացել են, և ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջանում վերանայել Կանոնադրության սահմանադրականության հարցը 2015թ. խմբագրությամբ գործող Սահմանադրության լույսի ներքո»:

Անդրադառնալով Միջազգային քրեական դատարանի իրավազորությանը՝ Կառավարությունը նշում է, որ դրա հիմքում ընկած է կոմպլեմենտարության (փոխլրացման) սկզբունքը, համաձայն որի՝ Միջազգային քրեական դատարանը հանդես է գալիս որպես ածանցյալ օղակ և միջամտում է Կանոնադրությամբ սահմանված առանձնապես ծանր հանցագործությունների հիմքով քրեական գործերի քննությանը բացառապես որոշակի պայմանների առկայության պարագայում: Կառավարությունը գտնում է, որ հիշյալ սկզբունքը բխում է պետության ներքին ինքնիշխանության, իր իրավասու մարմինների նկատմամբ հարգանքի և դրանց իրավազորության առաջնահերթության անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, այն հանգամանքը, որ այդ մարմինները, տիրապետելով ապացուցողական բազային և ունենալով համապատասխան ռեսուրսներ, առավել արդյունավետ կարող են իրականացնել գործի քննությունը:

Կառավարությունը նշում է, որ Միջազգային քրեական դատարանը ներգրավվում և իրականացնում է իր գործառույթները միայն այն պարագայում, երբ պետության ազգային իրավական համակարգը չի ապահովում գործի պատշաճ քննությունը, այդ թվում՝ երբ իրականացվող քննությունը ձևական բնույթ է կրում, և պետությունը չի ցանկանում կամ չի կարող ապահովել նման պատշաճ քննությունը: Ներկայացվում է, որ կոմպլեմենտարության սկզբունքի նպատակն է պահպանել Միջազգային քրեական դատարանի իրավագործությունը ոչ պատասխանատու պետությունների նկատմամբ, որոնք հրաժարվում են քրեական պատասխանատվության ենթարկել ծանրագույն միջազգային հանցագործություններ կատարողներին: Այն հակակշռում է վերազգային իրավագործությունը՝ մի կողմից, և պետությունների՝ առանց արտաքին միջամտության սեփական քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու ինքնիշխան իրավունքները՝ մյուս կողմից:

Կառավարությունը նշում է, որ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված, պատերազմական և ագրեսիայի հանցագործություններն ընդհանուր միջազգային իրավունքի *jus cogens* նորմերով արգելված են: Նշվում է, որ այդ հանցագործությունների արգելքին, կանխարգելմանը և դրանց համար պատասխանատվությանը վերաբերող միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը պետությունների համար ստեղծում են անվերապահ պարտավորություններ, որոնք ուղղված են ողջ միջազգային հանրությանը (*erga omnes*), և պետությունները պարտավոր են միջազգային հարաբերությունների բոլոր մակարդակներում ղեկավարվել իմպերատիվ նորմերով, թույլ չտալ դրանց խախտումը, իսկ խախտման փաստի առկայության դեպքում՝ բարեխղճորեն պատասխանատվության ենթարկել դրանք կատարած անձանց:

Կառավարությունը գտնում է, որ Միջազգային քրեական դատարանը հիմնադրվել է՝ *jus cogens* նորմերի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, և կոմպլեմենտարության սկզբունքի առաջնային իմաստն այն է, որ Միջազգային քրեական դատարանը միջամտում է միայն այն պարագայում, երբ պետությունը չի ցանկանում կամ ի վիճակի չէ քրեական հետապնդում իրականացնել և պատասխանատվության ենթարկել խնդրառարկա հանցագործությունները կատարած ֆիզիկական անձանց՝ ի խախտումն *jus cogens* նորմի հիման վրա ծագած *erga omnes* պարտավորության: Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների համար քրեական հետապնդում իրականացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու միջազգային պարտավորությունը հիմնված է ոչ միայն *jus cogens* նորմերի վրա, այլ նաև ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային մի շարք պայմանագրերից:

Կառավարությունը կարծում է, որ «(...) կոմպլեմենտարության սահմանադրականության հարցը քննարկելիս անհրաժեշտ է հենց այս ելակետից մոտենալ, քանի որ ՀՀ Սահմանադրությունը չի կարող մեկնաբանվել միջազգային իրավունքից կտրված՝ վակուումի մեջ, հատկապես, երբ խոսքը գնում է ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ (*jus cogens*) նորմերի մասին»:

Կառավարությունը եզրակացնում է, որ Սահմանադրության՝ դատական իշխանության մարմինների համակարգը սահմանող դրույթները (1995 թվականի Սահմանադրության 91 և 92-րդ հոդվածներ, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 162 և 163-րդ հոդվածներ) որևէ կերպ չեն բացառում միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանների ստեղծումը, Հայաստանի Հանրապետության կողմից դրան միանալը և այդ դատարանների իրավազորության իրականացումը: Ըստ Կառավարության՝ Միջազգային քրեական դատարանը չի փոխարինում Հայաստանի Հանրապետության ներպետական դատական մարմիններին, այլ լրացնում է դրանք, ընդ որում՝ միայն այն պարագայում, երբ պետությունը, ի դեմս իր դատաիրավական համակարգի, խուսափում է իր միջազգային լրջագույն պարտավորությունների կատարումից:

Կառավարությունը, ներկայացնելով 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 17-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ նույն հարցերը կարգավորող 70, 117 և 135-րդ հոդվածները, նշում է, որ դրանք համադրելու արդյունքում կարելի է արձանագրել, որ ներման և համաներման ինստիտուտներին վերաբերող դրույթները չունեն միևնույն բովանդակությունը և ենթարկվել են որակական փոփոխությունների:

Կառավարությունը նշում է, որ ներման և համաներման հարցերին վերաբերող՝ 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 17-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին կետի և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 70, 117 և 135-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությամբ ներման և համաներման ինստիտուտների կարգավորումը ներկայումս վերապահվում է օրենքին, իսկ առավել ծանր միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ ներում կամ համաներում կիրառելն ինքնին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի *jus cogens* նորմերին, և որ այդպիսի արգելքն իր արտացոլումն է գտել նաև 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91-րդ և 92-րդ հոդվածներում:

**3.2.** Ի պատասխան Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցող դատավորի հարցման՝ Կառավարության ներկայացուցիչը, 2023 թվականի մարտի 17-ին Սահմանադրական դատարան ներկայացրած

գրությամբ անդրադառնալով Կանոնադրությունը ստորագրելիս Հայաստանի Հանրապետության՝ սույն որոշման 1.1 կետում նշված հայտարարության հարցում Կառավարության մտադրությանը, նշել է. «ՀՀ կառավարությունը չունի Կանոնադրության վերոնշյալ հոդվածներով հայտարարություն կատարելու մտադրություն»:

**4. Կանոնադրությամբ ստանձնվող պարտավորությունները**

Անդրադառնալով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների սահմանադրականության ըստ էության ստուգման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, ի թիվս այլնի, հետևյալ պարտավորությունները.

**ա)** ճանաչել Միջազգային քրեական դատարանի՝ որպես քրեական իրավազրության ազգային համակարգերը լրացնող ատյանի իրավազրությունը՝ միջազգային հանրության մտահոգությունը հարուցող և Կանոնադրության 5-րդ հոդվածով թվարկված հանցագործությունները կատարած անձանց նկատմամբ (հոդված 1՝ համակցված 12-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ).

**բ)** ճանաչել Միջազգային քրեական դատարանի՝ Կանոնադրությամբ նախատեսված կարգով իր գործառույթներն ու լիազորությունները Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելու իրավասությունը (հոդված 4, մաս 2).

**գ)** չդատել անձին Կանոնադրության 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների առնչությամբ, որոնց համար Միջազգային քրեական դատարանի կողմից նա արդեն ճանաչվել է մեղավոր կամ արդարացվել է (հոդված 20, մաս 2).

**դ)** Կանոնադրությունը հավասարապես կիրառել բոլոր անձանց նկատմամբ՝ առանց պաշտոնեական դիրքով պայմանավորված որևէ տարբերակման, ինչպես նաև երաշխավորել, որ ազգային կամ միջազգային իրավունքով նախատեսված անձեռնմխելիությունը կամ դատավարական հատուկ նորմերը, որոնք կարող են կապված լինել անձի պաշտոնեական դիրքի հետ, չխոչընդոտեն Միջազգային քրեական դատարանին՝ այդ անձանց նկատմամբ իրականացնելու իր իրավազրությունը (հոդված 27).

**ե)** երաշխավորել Հայաստանի Հանրապետության տարածքում Միջազգային քրեական դատարանի այնպիսի արտոնությունները և անձեռնմխելիությունը, ինչպիսիք անհրաժեշտ են դրա նպատակների իրականացման համար (հոդված 48, մաս 1).

**զ)** երաշխավորել, որ Միջազգային քրեական դատարանի գործունեությանը մասնակցելու ընթացքում կամ նման գործունեության առնչությամբ Միջազգային քրեական դատարանի դատավորները, դատախազը,

1(109)2023  
 ՍՄՀՄՍՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ՏԵՂԵԿԱԿԻ

դատախազի տեղակալները և քարտուղարն օգտվեն այնպիսի արտոնություններից և անձեռնմխելիությունից, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին, և որ իրենց կարգավիճակից բխող գործողությունների, արտահայտած կամ գրած խոսքի առնչությամբ նրանց դատավարական ցանկացած տեսակի անձեռնմխելիության տրամադրումը կշարունակվի նրանց լիազորությունների ժամկետը լրանալուց հետո (հոդված 48, մաս 2)։

**է)** անձի նախնական կալանավորման կամ կալանավորման և Միջազգային քրեական դատարանին փոխանցման պահանջն ստանալուց հետո անհապաղ միջոցներ ձեռնարկել նշված անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կանոնադրության 9-րդ մասի դրույթներին համապատասխան կալանավորելու համար, նրան անհապաղ ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու դատական մարմին, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պարզում է, թե արդյոք՝

- կալանավորման մասին որոշումը տրված է այդ անձի վերաբերյալ,
- այդ անձը կալանավորվել է պատշաճ ընթացակարգին համապատասխան,
- պահպանվել են այդ անձի իրավունքները (հոդված 59, մասեր 1 և 2)։

**ը)** մինչև Միջազգային քրեական դատարանին փոխանցելն իրեն ժամանակավորապես ազատ արձակելու վերաբերյալ կալանավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին տրված ցանկացած խնդրագրի մասին տեղեկացնել Միջազգային քրեական դատարանի մինչդատական վարույթի պալատին և մինչ իր որոշումը կայացնելը լիովին հաշվի առնել այդ կապակցությամբ վերջինիս բոլոր՝ ներառյալ անձի փախուստը կանխելու միջոցների վերաբերյալ հանձնարարականները (հոդված 59, մաս 5)։

**թ)** անձին Միջազգային քրեական դատարանին փոխանցելու մասին իր որոշումը կայացնելուց հետո անհապաղ նրան տեղափոխել Միջազգային քրեական դատարան (հոդված 59, մաս 7)։

**ժ)** ճանաչել Միջազգային քրեական դատարանի իրավազորությունն իր կողմից իրականացվող արդարադատության դեմ ուղղված դիտավորյալ այն հանցագործությունների նկատմամբ, որոնք թվարկված են Կանոնադրության 70-րդ հոդվածի 1-ին մասում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված այդպիսի հանցագործությունների վրա տարածել քննության անցկացման և դատավարության դեմ ուղղված հանցագործությունների համար պատիժներ նախատեսող՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը (հոդված 70, մաս 1 և մաս 4, կետ «ա»)։

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵԼԵՎԻԶՈՐ ◆ 1(109)2023

**ժա)** առանց *bona fide* երրորդ կողմի իրավունքները խախտելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ կատարել տուժողներին պատճառված կամ նրանց առնչվող վնասի հատուցման վերաբերյալ, ներառյալ՝ ռեստիտուցիան, փոխհատուցումը և ռեաբիլիտացիան, Միջազգային քրեական դատարանի՝ Կանոնադրության 75-րդ հոդվածի համաձայն ընդունած որոշումը և այդ որոշման կատարման արդյունքում ձեռք բերված գույքը փոխանցել Միջազգային քրեական դատարանին (հոդված 75, մաս 5՝ համակցված 109-րդ հոդվածի հետ)։

**ժբ)** Կանոնադրության դրույթներին համապատասխան՝ բազմակողմանիորեն համագործակցել Միջազգային քրեական դատարանի հետ՝ իրեն ընդդատյա հանցագործությունների կապակցությամբ վերջինիս կողմից իրականացվող քննության և քրեական հետապնդման հարցերում (հոդված 86)։

**ժգ)** որպես հարցվող պետություն հանդես գալու պարագայում պահպանել համագործակցության վերաբերյալ Միջազգային քրեական դատարանի դիմումի և այն հիմնավորող փաստաթղթերի գաղտնիությունը, բացառությամբ այն ծավալով, որքանով դրանց բացահայտումն անհրաժեշտ է դիմումի կատարման համար (հոդված 87, մաս 3)։

**ժդ)** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսել Կանոնադրության 9-րդ մասում նշված համագործակցության բոլոր ձևերին վերաբերող ընթացակարգեր (հոդված 88)։

**ժե)** Կանոնադրության 9-րդ մասի դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ կատարել Միջազգային քրեական դատարանի՝ անձին կալանավորելու և փոխանցելու մասին պահանջը (հոդված 89, մաս 1)։

**ժզ)** եթե փոխանցման ենթակա անձը Կանոնադրության 20-րդ հոդվածում նշված *ne bis in idem* սկզբունքի հիման վրա վիճարկում է փոխանցումը ներպետական դատարանում, ապա որպես հարցվող Պետություն անհապաղ խորհրդակցել Միջազգային քրեական դատարանի հետ՝ պարզելու, թե կա՞րդյոք գործի ընդունելիության վերաբերյալ համապատասխան որոշում, և եթե գործի ընդունելիությունը ճանաչված է, ապա ընթացք տալ պահանջի կատարմանը (հոդված 89, մաս 2)։

**ժէ)** անհետաձգելի դեպքերում՝ նախքան փոխանցման վերաբերյալ դիմումը և այն հիմնավորող՝ Կանոնադրության 91-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը, կատարել որոնվող անձին նախնական կալանքի վերցնելու մասին Միջազգային քրեական դատարանի դիմումի պահանջը (հոդված 92, մաս 1՝ համակցված 86-րդ հոդվածի հետ)։

**ժը)** Կանոնադրության 9-րդ բաժնի (մասի) դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կատարել քննություն

կամ քրեական հետապնդում իրականացնելու կապակցությամբ Միջազգային քրեական դատարանին աջակցություն ցույց տալու մասին պահանջները, որոնց ցանկը սահմանված է Կանոնադրության 93-րդ հոդվածի 1-ին մասում (հոդված 93, մաս 1)։

**ժթ)** աջակցել, երբ դա անհրաժեշտ է այն պահանջի արդյունավետ կատարման համար, որը կարող է իրականացվել առանց հարկադրանքի միջոցների, ներառյալ՝ անձի հարցաքննությունը կամ կամավոր հիմունքներով նրանից ապացույցներ ստանալը, այդ թվում՝ առանց հարցվող պետության իշխանությունների ներկայության, եթե դա էապես կարևոր է պահանջի կատարման համար, ինչպես նաև որևէ հանրային օբյեկտի կամ հանրային վայրի զննումը, ճանաչել Կանոնադրության 99-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով այդ պահանջը Միջազգային քրեական դատարանի դատախազի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջականորեն կատարելու իրավասությունը (հոդված 99, մաս 4)։

**ի)** որպես հարցվող Պետություն՝ կրել Հայաստանի Հանրապետության տարածքում դիմումների պահանջների կատարման հետ կապված սովորական ծախսերը, բացառությամբ Կանոնադրության 100-րդ հոդվածի 1-ին մասում նշված ծախսերի (հոդված 100, մաս 1)։

**5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործն ունի այն առանձնահատկությունը, որ Սահմանադրությանը համապատասխանության հարցի քննության առարկա հանդիսացող Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների առնչությամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ կայացրել է դրանց՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ ՍԴՈ-502 որոշումը։

**5.1.** Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման և 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշման գործի քննությամբ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման հանգամանքների միջև առկա է հետևյալ էական տարբերությունը։

**ա)** սույն գործով Սահմանադրական դատարանի խնդիրն է որոշել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը, մինչդեռ ՍԴՈ-502 որոշմամբ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(109)2023

ստուգումն իրականացվել է դրանց՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով, և

**բ)** 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության նախաբանը որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթ ճանաչելը հանգեցրել է Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման ընթացքում կիրառելի սահմանադրական դրույթների նոր ընկալման, ինչը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ստուգելու նպատակով Սահմանադրության դրույթները մեկնաբանելու հարցում որոշիչ կարևորություն ունի, և

**գ)** Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությանը միանում և Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարությունն ընդունում է՝ առանց Կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Միջազգային քրեական դատարանի դատապարտած անձանց պատժի կրման նպատակով ընդունելու պատրաստակամության մասին հայտարարություն կատարելու:

**5.2.** Սույն գործը քննության ընդունելու մասին 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշման մեջ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատճառաբանությունը չներառելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանը, վերը նշված «ա» և «բ» կետերում նշված էական հանգամանքները հաշվի առնելով, չի համարել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցը որպես «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով «Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարց»:

Սահմանադրական դատարանը սույն գործի հետագա քննությամբ չի պարզել որևէ հանգամանք, որը 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշման հիմքում ընկած դիրքորոշումից շեղվելու հիմք կձառայեր, և վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով չի համարվում «Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարց»:

**5.3.** Վերը նշվածը հաշվի առնելով և քննելով սույն գործը՝ որպես նախկինում որևէ դիմումով չառաջադրված հարցերին առնչվող գործ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրությամբ



ամրագրված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության վերաբերելի դրույթներին և խնդրահարույց չեն Սահմանադրության որևէ դրույթին համապատասխանության տեսանկյունից և համապատասխանում են Սահմանադրությանը:

**5.4.** Միաժամանակ, Սահմանադրական դատարանը սույն որոշման 6-7-րդ կետերում նշված պատճառներով, այն է՝ ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների առկայության դեպքում հնարավոր անորոշությունը կանխելու նպատակով, անհրաժեշտ է համարում հատուկ անդրադառնալ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով, 1-ին և 105-րդ հոդվածներով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին:

**6. Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին**

Սույն որոշման 5.4-րդ կետում նշված նկատառմամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում առանձին անդրադառնալ Կանոնադրությամբ հռչակված՝ Միջազգային քրեական դատարանի կողմից իր իրավազորության իրականացման հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքի՝ Սահմանադրության նախաբանի, 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքների և արժեքների լույսի ներքո՝ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասին և 163-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությանը համապատասխանության հարցին:

**6.1.** Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի համաձայն՝ Կանոնադրության կողմ հանդիսացող պետություններն ընդունել են, որ «Կանոնադրությամբ ստեղծվող Միջազգային քրեական դատարանը լրացնում է քրեական իրավազորության ազգային համակարգերը»:

Կանոնադրության նախաբանում արձանագրված լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքը հաջորդաբար արտացոլվել է Միջազգային քրեական դատարանի կարգավիճակին վերաբերող՝ Կանոնադրության 1-ին հոդվածում, սակայն դրա իրավական բովանդակությունը մանրամասնված է Կանոնադրության 17-րդ հոդվածում, համաձայն որի՝ Միջազգային քրեական դատարանն իրավասու չէ քննության ընդունել այնպիսի գործ՝

**ա)** որի կապակցությամբ իրականացվում է քննություն կամ հարուցված է քրեական հետապնդում այն պետության կողմից, որն իրավազորություն ունի տվյալ գործի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պետությունը չի ցանկանում կամ անկարող է պատշաճ կերպով իրականացնել քննությունը կամ քրեական հետապնդումը, կամ

**բ)** որի կապակցությամբ քննություն է իրականացվել այն պետության կողմից, որն իրավազորություն ունի տվյալ գործի նկատմամբ, և այդ

պետությունը որոշել է տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումն արդյունք է պետության՝ պատշաճ կերպով քրեական հետապնդում իրականացնելու ցանկության բացակայության կամ անկարողության, կամ

**գ)** որով համապատասխան անձի նկատմամբ արդեն իսկ անցկացվել է դատաքննություն այն արարքի համար, որը տվյալ բողոքի առարկան է, և Միջազգային քրեական դատարանի կողմից գործի քննությունը, 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, չի թույլատրվում, կամ

**դ)** որը բավարար ծանրության աստիճանի չէ, որպեսզի հիմնավորված լինեն Միջազգային քրեական դատարանի հետագա գործողությունները:

Կանոնադրության 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը նկարագրում են դրանով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունների արդյունավետ քննության հարցում համապատասխան պետության կամքի կամ կարողության բացակայության մասին եզրահանգման համար անհրաժեշտ որոշիչ հանգամանքները:

Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի և 1-ին հոդվածի՝ 17-րդ հոդվածի դրույթների հետ համակցված վերլուծությամբ ակնհայտ է դառնում, որ Կանոնադրության՝ կոնկրետ գործի ընդունելիությանը վերաբերող կանոնները Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրականացման հնարավորությունը սահմանափակում են ազգային քրեական իրավազորության արդյունավետ իրականացմամբ: Կանոնադրության հիշյալ դրույթների և Կանոնադրության նախաբանի 6-րդ մասի (համաձայն որի՝ «յուրաքանչյուր պետության պարտականությունն է իրականացնել իր քրեական իրավազորությունը միջազգային հանցագործությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ») համակցված վերլուծությունից բխում է, որ Կանոնադրության նպատակների համար Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը չունի առաջնայնություն ազգային քրեական իրավազորության նկատմամբ և չի նախատեսվել դրա համար, այլ հանդես է գալիս բացառապես որպես լրացնող իրավազորություն՝ ազգային քրեական իրավազորությունը արդյունավետորեն իրականացնելու գործում կամքի կամ կարողության բացակայության դեպքում:

**6.2.** Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-502 որոշումը հիմնված է բացառապես 1995 թվականի Սահմանադրության 91 և 92-րդ հոդվածներով Միջազգային քրեական դատարանը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնող մարմին չնախատեսելու, ինչպես նաև միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգը միջազգային դատական մարմնով լրացնելու

հնարավորության բացակայության մասին եզրահանգումների վրա (ՍԴՈ-502 որոշում, 14-րդ կետ):

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-502 որոշմամբ նշված՝ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգումն սկսել Սահմանադրության և Կանոնադրության ընդունման նպատակներին և դրանցով պաշտպանվող ընդհանուր արժեքներին անդրադարձով:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հիշեցնում է, որ սահմանադրական որևէ նորմի մեկնաբանություն շեղվում է իր արժեքանական հունից, եթե այն համատեղելի չէ Սահմանադրության նախաբանում և անփոփոխելի մյուս դրույթներում հռչակված նպատակների, արժեքների և սկզբունքների հետ: 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ «(...) Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել և զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը»՝ միաժամանակ Սահմանադրության անփոփոխելի դրույթների շարքին դասելով Սահմանադրության նախաբանը:

Սահմանադրության նախաբանում՝ Հայ ժողովուրդը, ի շարս այլ նպատակների և սկզբունքների, Սահմանադրությունն ընդունել է նաև՝ «հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Սահմանադրության նախաբանում այս հավաստիքի արձանագրումը «համամարդկային արժեքներ» սահմանադրական եզրը դարձնում է Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ:

**6.3.** Կանոնադրությունը Միջազգային քրեական դատարանի գործունեության իրավական հիմքն է, որն ընդունվել է՝ ճանաչելով և հաշվի առնելով այն իրողությունը, որ Կանոնադրությունն ընդունելուն նախորդած հարյուրամյակի ընթացքում «միլիոնավոր երեխաներ, կանայք ու տղամարդիկ զոհ են դարձել մարդկության խիղճը խորապես ցնցող աներևակայելի ոճրագործությունների» (Կանոնադրություն, նախաբան, 2-րդ մաս), և որ «նման ծանրագույն հանցագործություններն սպառնում են համընդհանուր խաղաղությանը, անվտանգությանն ու բարեկեցությանը» (Կանոնադրություն, նախաբան, 3-րդ մաս):

Կանոնադրության նախաբանից բխում է, որ այն ընդունող պետությունները հաստատակամ դիրքորոշում են ունեցել առ այն, որ «միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործություններն անպատիժ չպետք է մնան, և որ դրանց արդյունավետ քրեական հետապնդումը պետք է ապահովվի ինչպես ազգային մակարդակով միջոցներ

ձեռնարկելով, այնպես էլ միջազգային համագործակցությունն ընդլայնելով» (Կանոնադրություն, նախաբան, 4-րդ մաս): Կանոնադրության ընդունման համար շարժիչ ուժ է եղել նրանց վճռականությունը՝ «վերջ դնելու նման հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությանը և դրանով իսկ նպաստելու այդպիսի հանցագործությունների կանխարգելմանը» (Կանոնադրություն, նախաբան, 5-րդ մաս):

Վերը նշված նպատակների իրագործման համար և ի բարօրություն ներկա ու ապագա սերունդների՝ հիմնադրվել է անկախ Միջազգային քրեական դատարանը, որն օժտված է միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների նկատմամբ իրավազորությամբ (Կանոնադրություն, նախաբան, 9-րդ մաս):

**6.4.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնադրության նախաբանում ամրագրված և վերը հիշատակված արժեքները, մասնավորապես՝ համընդհանուր խաղաղությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ (Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, նախաբանի 1-2-րդ մասեր, 1-ին հոդված, մասեր 1 և 3) և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան, մաս 1) ամրագրված և պահպանվող համամարդկային արժեքներ են և անառարկելիորեն կազմում են Սահմանադրության նախաբանում արձանագրված «համամարդկային արժեքների» առանցքը: Հետևաբար՝ դրանց պաշտպանությանը և պահպանությանն ուղղված՝ Կանոնադրությամբ արձանագրված նպատակների իրագործման՝ Հայաստանի Հանրապետության հանձնառությունը լիովին համահունչ է Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի՝ համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքին:

**6.5.** Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը՝ հատկապես համընդհանուր խաղաղությանն սպառնացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարին վերաբերելի մասով՝ որպես Սահմանադրության դրույթների մեկնաբանման արժեքանական ուղենիշ դիտարկելու սահմանադրական հրամայականի հիմքում ընկած է նաև այն պատմական, էթիկական և քաղաքակրթական չափորոշիչը, որ Կանոնադրության նախաբանում շարադրված ոճրագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի կարևորությունն արդեն իսկ արձանագրված է եղել Հայաստանի անկախության գործընթացում՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին հռչակմամբ (Հայաստանի անկախության մասին հռչակագիր, կետ 11): Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին դրույթը Հայաստանի անկախության

հոչակագրում ունի ոչ միայն պատմական իրողության հետադարձորեն ճանաչման, այլև առավել ևս ապագայում նման ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանության միջազգային ջանքերին մասնակցության քաղաքակրթական բնույթի պարտավորության նշանակություն:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը, քննելով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, դրանով նախատեսված միջազգային քրեական արդարադատության համակարգի բաղադրիչների, մասնավորապես՝ Միջազգային քրեական դատարանի իրավագործության լրացնող կամ կոմպլեմենտար բնույթի սահմանադրականության ստուգումն իրականացնելու է նաև սույն կետում նշված՝ Հայ ժողովրդի՝ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության անփոփոխելի դրույթների հեղինակի քաղաքակրթական հանձնառության լույսի ներքո:

**6.6.** Կանոնադրության 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունների ցանկը ներառում է ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված, պատերազմական և ագրեսիայի հանցագործությունները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է դեռևս մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը (1991 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Գերագույն էսորիդի N Ն-0467-Վ որոշմամբ): Սույն կոնվենցիայով, որն ընդունվել էր՝ «(...) հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևում հայտարարել է, որ միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը հանցագործություն է և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն, ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և համոզված լինելով, որ մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն» («Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, նախաբան), Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ցեղասպանությունը կանխարգելելու և դրա կատարողներին պատժելու պարտավորություն («Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, հոդված 1):

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(109)2023

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն աջակցել է միջազգային հանրության մտահոգությունը հարուցող այլ հանցագործությունների դեմ պայքարին՝ միանալով այդ կապակցությամբ միջազգային համագործակցության ջանքերին վերաբերող մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես (սակայն չսահմանափակվելով միայն)՝

**ա)** «Ռեզոլուցիայի հանցագործությունների նկատմամբ և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» Ժնևի 1968 թվականի նոյեմբերի 26-ի կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի մարտի 31-ին՝ Գերագույն Խորհրդի Հ.Ն-0788-Ո որոշմամբ),

**բ)** «Բռնագաղթված անձանց, ազգային փոքրամասնությունների և ժողովուրդների իրավունքների վերականգնման հետ կապված հարցերի մասին» համաձայնագրին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 19-ից), ինչպես նաև վերջինիս կից արձանագրությանը՝ ստորագրված 2003 թվականի մայիսի 30-ին, վավերացվել է 2004 թվականի ապրիլի 27-ին՝ Ազգային ժողովի Ն-093-3 որոշմամբ (ՍԴՈ-474)),

**գ)** 1987 թվականի նոյեմբերի 26-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիային (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի նոյեմբերի 7-ին՝ Ազգային ժողովի Ն-216-2 որոշմամբ (ՍԴՈ-332), թիվ 1 արձանագրությունը՝ 2002 թվականի մայիսի 15-ին՝ Ազգային ժողովի Ն-280-2 որոշմամբ (ՍԴՈ-355), թիվ 2 արձանագրությունը՝ 2002 թվականի մայիսի 15-ին՝ Ազգային ժողովի Ն-281-2 որոշմամբ (ՍԴՈ-354), կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականի մայիսի 31-ին Ազգային ժողովի Ն-282-3 որոշմամբ (ՍԴՈ-618)),

**դ)** «Ապարտեիդի հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» Ժնևի 1973 թվականի միջազգային կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի մարտի 31-ին՝ Գերագույն Խորհրդի Հ.Ն-0786-Ո որոշմամբ),

**ե)** 1925 թվականի հունիսի 17-ին Ժնևում ստորագրված՝ «Ռեզոլուցիայի հանցագործությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ գազերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին» արձանագրությանը (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2017 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ՀՕ-127-Ն օրենքով (ՍԴՈ-1345)):

**6.7.** Արձանագրելով Սահմանադրության և Կանոնադրության հիմքում ընկած արժեքանական համապատասխանությունը՝ Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե որքանով է Կանոնադրությամբ

Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրականացման հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքը համատեղելի Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը միայն Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության համակարգի կողմից իրականացվելու՝ Սահմանադրությամբ ամրագրված բացառիկության սկզբունքի հետ:

**6.8.** Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը և օրենքով նախատեսված դեպքերում ստեղծված մասնագիտացված դատարանները:

Կանոնադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի կողմից որևէ գործ, հաշվի առնելով Կանոնադրության նախաբանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը, չի կարող քննության ընդունվել, եթե տվյալ գործի նկատմամբ իրավազորություն ունեցող պետությունն իրականացրել կամ իրականացնում է իր իրավազորությունը: Այս ընդհանուր կանոնից բացառություններ են այն դեպքերը, երբ տվյալ գործի նկատմամբ իրավազորություն ունեցող պետությունը չի ցանկանում կամ չի կարող իրականացնել պատշաճ քննություն և հետապնդում (Կանոնադրություն, հոդված 17, 1-ին մաս, կետեր «ա» և «բ»):

Այսինքն՝ Կանոնադրության 17-րդ հոդվածը «Դատարանը վարույթի համար գործի անընդունելիության մասին որոշում է կայացնում» (նույն հոդվածի 1-ին մաս) իմպերատիվ կանոնի ուժով ուղղակիորեն սահմանափակում է Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը կոնկրետ գործի նկատմամբ պետության ազգային իրավազորության իրականացման հիմքով՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրագործումը հնարավոր համարելով բացառապես ազգային իրավազորության արդյունավետ իրականացումը ձախողվելու (անկարողության կամ ցանկության բացակայության) դեպքերում: Այսպիսով՝ Միջազգային քրեական դատարանի կողմից իր իրավազորության իրականացումը չի փոխարինում ազգային իրավազորության համակարգերին և չի միջամտում ազգային իրավազորության շրջանակին, այլ միայն լրացնում է նրանց այնքանով, որքանով նրանք իրենց հետապնդած խնդրում ձախողում են այն:

**6.9.** Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով սույն որոշման 6.2-6.5-րդ կետերում նկարագրված՝ Սահմանադրությամբ և Կանոնադրությամբ ամրագրված հիմնարար նպատակների և արժեքների կարևո-

րություները և դրանց համընկնելը՝ միջազգային ծանրագույն հանցագործությունների հետապնդման միջոցով համընդհանուր խաղաղություն և բարօրություն ապահովելու մտադրությանը, արձանագրում է, որ Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության համակարգի, մասնավորապես՝ քրեական արդարադատության համակարգի գոյությունը, դրա կողմից Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության իրականացման համար նախատեսված պայմանների և կարգավորումների ամբողջությունը, ինչպես նաև դրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորությունն իրականացնելու հարցում բացառիկության պահանջը չեն կարող մեկնաբանվել այդպիսին ձևավորելու և սահմանելու՝ սահմանադրի նպատակներից անկախ: Սահմանադրությամբ հիմնված և երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգը կոչված է ապահովելու, ի թիվս Սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների, նաև Սահմանադրության նախաբանի իմաստով «համամարդկային արժեքների» պաշտպանությունը, որն առաջնահերթությամբ սահմանադրական հրամայական լինելուց բացի՝ նաև *jus cogens* նորմերով պարտավորություն է ցանկացած պետության համար:

Հետևաբար՝ միջազգային հանրության մտահոգությունը հարուցող ծանրագույն հանցագործությունների, ինչպիսիք են Կանոնադրության 5-8-րդ հոդվածներում նշված ցեղասպանությունը, մարդկության դեմ և պատերազմական հանցագործությունները, արդյունավետ քննելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու միջոցով համընդհանուր խաղաղության և բարօրության պաշտպանությունը ապահովելու՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգի ծախողումը որևէ պատճառով՝ անկարողության կամ ցանկության բացակայության, իր էությամբ հակասահմանադրական իրավիճակ է, և այն սահմանադրական հուն վերադարձնելուն միտված լրացնող իրավազորության իրականացումը Սահմանադրության նախաբանում արձանագրված նպատակներին համահունչ նպատակներ հետապնդող մարմնի՝ Միջազգային քրեական դատարանի կողմից չի կարող գնահատվել որպես Հայաստանի Հանրապետության քրեական ինքնիշխան իրավազորությանը հակասահմանադրական միջամտություն:

Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի, 1-ին և 17-րդ հոդվածների համակցված վերլուծությունից բխում է, որ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունն ազգային իրավազորությունը լրացնում է այնքանով, որքանով վերջինս ի վիճակի չէ կամ ցանկություն չունի իրագործել Կանոնադրությամբ ամրագրված նպատակները, որոնք, ինչպես արդեն Սահմանադրական դատարանն արձանագրել է սույն որոշման 6.2-6.4-րդ կետերում, համընկնում են, մի կողմից՝ համամարդկային արժեքներին, որոնց



իր հավատարմությունն է հավաստել Հայ ժողովուրդը՝ Սահմանադրությունն ընդունելիս, մյուս կողմից՝ արդեն իսկ հետապնդվում են *jus cogens* նորմերով:

Հետևաբար՝ Սահմանադրության նախաբանի լույսի ներքո Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի և 163-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների մեկնաբանությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված քրեական իրավազորության ազգային համակարգի նկարագրություն, չի բացառում միջազգային՝ Կանոնադրությամբ նախատեսված սահմաններով և հիմքերով Հայաստանի Հանրապետության քրեական ինքնիշխան իրավազորությունը Միջազգային քրեական դատարանի համակարգով լրացնելու հնարավորությունը:

Սահմանադրական նորմերի հակառակ մեկնաբանությունը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության նպատակի և Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի կողմից հռչակված «համամարդկային արժեքներին» հավատարմության հավաստիքի միջև անթույլատրելի հակասության, ինչը ոչ միայն սահմանադրական արժեքանության սխալ ընկալում է, այլ նաև ուղղակիորեն հակասում է Հայաստանի Հանրապետության իրավազորության բացառիկության նպատակին:

**6.10.** Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը՝

**ա)** հաշվի առնելով Սահմանադրությամբ և Կանոնադրությամբ հետապնդվող նպատակների և դրանց հիմքում ընկած արժեքանության համապատասխանությունը,

**բ)** նկատի ունենալով, որ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով նախատեսված և 17-րդ հոդվածով մանրամասնված՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորության հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքի էությունը հարգանքն է Կանոնադրության կողմ հանդիսացող պետության քրեական իրավազորության առաջնայնության նկատմամբ, և որ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը ծագում է միայն տվյալ պետության քրեական իրավազորության համակարգի՝ իր նպատակը հետապնդելիս ձախողվելու դեպքում,

**գ)** ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ Հայ ժողովրդի կողմից «համամարդկային արժեքներին» հավատարմության հավաստիքն անառարկելիորեն ներառում է միջազգային հանրության մտահոգությունը հարուցող և համընդհանուր խաղաղության ու բարօրության համար սպառնալիք հանդիսացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանությանն ուղղված միջազգային համագործակցության իր քաղաքակրթական հանձնառությունը,

գտնում է, որ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասում և 1-ին հոդվածում ամրագրված պարտավորությունները սույն որոշմամբ բերված պատճառաբանությամբ համապատասխանում են Սահմանադրությանը:

### **7. Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին**

Սահմանադրական դատարանի կողմից Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին սույն կետով առանձին անդրադարձն այնպես, ինչպես սույն որոշման 6-րդ կետում Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի և 1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի դեպքում, նույնպես պայմանավորված է Կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման պայմաններում սույն գործով կայացվելիք եզրահանգման առնչությամբ հնարավոր անորոշությունը բացառելու անհրաժեշտությամբ:

**7.1.** Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման հիմքում ընկած է այն դատողությունը, ըստ որի՝ «(...) երբ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական իրավազորություն իրականացնում են ՀՀ ներպետական դատարանները, վերջիններիս կողմից ազատազրկման դատապարտված անձինք կարող են օգտվել ներում հայցելու հնարավորությունից և համաներման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատազրկման ժամկետի կրճատման հնարավորությունից: Մինչդեռ, նույն հանցագործությունների համար Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավազորության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավազորության ներքո գտնվող անձինք Կանոնադրության 105 հոդվածի պահանջներին համապատասխան զրկվում են ՀՀ Սահմանադրության 40 հոդվածով նախատեսված ներման իրավունքից, ինչպես նաև 81 հոդվածով ամրագրված համաներման հնարավորությունից»:

Այս դատողության հիման վրա 1995 թվականի Սահմանադրության 4-րդ հոդվածը մեկնաբանելու և կիրառելու արդյունքում Սահմանադրական դատարանը Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը հակասող՝ որպես Սահմանադրությամբ չնախատեսված՝ մարդու իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք նվազ բարենպաստ վիճակ

կատեղծելին Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո գտնվող այն անձանց համար, որոնք ազատազրկման ձևով պատիժ կկրելին:

Այս առնչությամբ, մինչ Սահմանադրական դատարանի կողմից 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին կետի նորմերով կարգավորվող հարաբերությունների իրավակարգավորմանը վերաբերող գործող սահմանադրական նորմերի վերլուծությունը և այդ նորմերին Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների համապատասխանության հարցը որոշելը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորության բնույթին և դրա ծագման պայմաններին՝ պարզելու նպատակով, թե արդյոք Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսվում են Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով Կանոնադրության մեջ «ամրագրված պարտավորություններ»:

**7.2.** Կանոնադրության «Կատարումը» վերտառությամբ 10-րդ մասի (բաժնի) դրույթները կանոնակարգում են Միջազգային քրեական դատարանի դատավճռի կատարման հետ կապված, մասնավորապես՝ ազատազրկման ձևով պատիժն ի կատար ածող պետության կարգավիճակի ստանձնման (Կանոնադրություն, 103-րդ հոդված) և այդպիսի դատավճռի կատարման հարաբերությունները (Կանոնադրություն, 105-րդ հոդված):

Կանոնադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված՝ պատժի կրման նպատակով դատապարտյալին ընդունելու առնչությամբ պետության առաջադրած և Միջազգային քրեական դատարանի կողմից ընդունված պայմանների շրջանակում ազատազրկման ձևով պատժի նշանակման մասին դատավճիռը պարտադիր է Կանոնադրության կողմ հանդիսացող դատապարտյալին ընդունող պետության համար, որն այդ դատավճիռը փոփոխելու իրավասություն չունի:

Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ազատազրկման ձևով պատիժը Միջազգային քրեական դատարանի կողմից դատապարտված դատապարտյալը կրում է Միջազգային քրեական դատարանի նշանակած այն պետությունում, որը Միջազգային քրեական դատարանին նախապես հայտնել է դատապարտված անձանց ընդունելու իր պատրաստակամության մասին: Նույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատապարտյալներին ընդունելու իր պատրաստակամությունը հայտնելիս պետությունը կարող է Միջազգային քրեական դատարանի համաձայնությամբ և Կանոնադրության 10-րդ մասին (բաժնին) համապատասխան, ներկայացնել դատապարտյալի ընդունման իր պայմանները: Ավելին, Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ կոնկրետ գործով Միջազգային քրեական դատարանի կողմից

որպես դատավճռի կատարման պետություն նշանակվելուց հետո տվյալ դատապարտյալի մասով դատավճիռն ի կատար ածելու՝ 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը պետությունը ստանձնում է՝ միայն նշանակման վերաբերյալ իր համաձայնության մասին Միջազգային քրեական դատարանին տեղեկացնելով:

Իր հերթին, Միջազգային քրեական դատարանի՝ «Ընթացակարգի և ապացուցման կանոնների» 200-րդ կանոնի 2-րդ մասի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի նախագահությունը որևէ պետության չի կարող ընդգրկել Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանի դատավճռով դատապարտված անձի պատժի կրումն ապահովելու պատրաստակամություն հայտնաձ պետությունների ցանկում, եթե չի ընդունում դատապարտյալի պատժի ի կատար ածման մասին այդ պետության կողմից առաջադրված պայմանները: Նույն կանոնի 5-րդ մասի համաձայն՝ իր կողմից դատապարտված բանտարկյալների ընդունման կարգը սահմանելու նպատակով Միջազգային քրեական դատարանը պետությունների հետ կարող է երկկողմ պայմանագրեր կնքել, ինչը Միջազգային քրեական դատարանի կողմից ձևավորած պրակտիկա է<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս, մասնավորապես, Միջազգային քրեական դատարանի և պատիժներն ի կատար ածող համապատասխան պետության միջև միջազգային պայմանագրեր կնքելու պրակտիկան, օրինակ՝

(1) Ավստրիայի Դաշնային Հանրապետության հետ 2005 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված ICC-PRES/01-01-05 միջազգային պայմանագիրը (տե՛ս [https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/975246DC-383B-42EF-A78B-D0773BEB20A4/140155/ICCPRES\\_010105\\_en.pdf](https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/975246DC-383B-42EF-A78B-D0773BEB20A4/140155/ICCPRES_010105_en.pdf), հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(2) Սլովենիայի Հանրապետության հետ 2018 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված ICC-PRES/28-01-22 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-05/20220401-Agreement-on-the-Enforcement-of-Sentences-ICC-Slovenia-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(3) Կոլումբիայի Հանրապետության հետ 2011 թվականի մայիսի 17-ին կնքված ICC-PRES/29-02-22 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-10/Agreement-Republic-Colombia-ICC-Enforcement-of-Sentences-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(4) Վրաստանի հետ 2019 թվականի հունվարի 24-ին կնքված ICC-PRES/27-01-19 միջազգային պայմանագիրը (տե՛ս [https://www.icc-cpi.int/sites/default/files/items\\_Documents/190124-oj-sa-Georgia\\_ENG.pdf](https://www.icc-cpi.int/sites/default/files/items_Documents/190124-oj-sa-Georgia_ENG.pdf), հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(5) Ֆինլանդիայի Հանրապետության հետ 2010 թվականի հունիսի 1-ին կնքված ICC-PRES/07-01-11 միջազգային պայմանագիրը (տե՛ս [https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/F21AB53F-7257-45C8-A5EB-42B17D86B65B/283222/Sentencing\\_Agreementwith\\_Finland.pdf](https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/F21AB53F-7257-45C8-A5EB-42B17D86B65B/283222/Sentencing_Agreementwith_Finland.pdf), հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(6) Դանիայի Թագավորության հետ 2010 թվականի հունիսի 1-ին կնքված ICC-PRES/12-02-12 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/D9462230-4163-4747-BC7C->

7.3. Հետևաբար՝ Կանոնադրության՝ «Պատժի կատարումը» վերտա-  
նությամբ 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը, այն է՝  
Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախա-  
տեսված պայմանների շրջանակում ազատազրկման ձևով պատժի  
նշանակման վերաբերյալ դատավճի վերջնականության և անփոփոխե-  
լիության ճանաչմամբ կատարելը տարածվում է միայն այն պետության  
նկատմամբ, որը՝

ա) պատրաստակամություն է հայտնել Միջազգային քրեական  
դատարանի դատավճի ի կատար ածելու նպատակով դատապարտված  
անձ ընդունելու մասին (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին մաս, «ա»  
կետ, «Ընթացակարգի և ապացուցման կանոններ», 200-րդ կանոն, 1-2-րդ  
մասեր), և

[CB0141C5004B/284720/SentencingagreementwithDenmarkEng.pdf](#), հղմանը վերջին մուտքը՝  
2023 թվականի մարտի 24),

(7) Բելգիայի Թագավորության հետ 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ICC- PRES/  
16-03-14 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/iccdocs/oj/ICC-PRES-16-03-14-Eng.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(8) Մալիի Հանրապետության հետ 2012 թվականի հունվարի 13-ին կնքված ICC-PRES/11-  
01-12 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-10/Agreement-Republic-Mali-ICC-Enforcement-of-Sentences-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝  
2023 թվականի մարտի 24),

(9) Նորվեգիայի Թագավորության հետ 2016 թվականի հուլիսի 7-ին կնքված ICC-PRES/  
18-02-16 միջազգային պայմանագիրը (տե՛ս [https://www.icc-cpi.int/sites/default/files/iccdocs/oj/Agreement\\_on\\_the\\_enforcement\\_of\\_sentences\\_with\\_NorwayEng.pdf](https://www.icc-cpi.int/sites/default/files/iccdocs/oj/Agreement_on_the_enforcement_of_sentences_with_NorwayEng.pdf), հղմանը վերջին  
մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(10) Սերբիայի Հանրապետության հետ 2011 թվականի հունվարի 20-ին կնքված ICC-  
PRES/09-03-11 միջազգային պայմանագիրը (տե՛ս [https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/FAFDAF32-B24C-429D-855B-9918D7CF43DE/283411/Sentencing\\_AgreementwithSerbia.pdf](https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/FAFDAF32-B24C-429D-855B-9918D7CF43DE/283411/Sentencing_AgreementwithSerbia.pdf), հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(11) Շվեդիայի Թագավորության հետ 2017 թվականի ապրիլի 24-ին կնքված ICC-PRES/20-  
02-17 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/170424-oj-sa-Sweden.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(12) Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության հետ 2007  
թվականի նոյեմբերի 8-ին կնքված ICC-PRES/04-01-07 միջազգային պայմանագիրը (տե՛ս  
<https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/C540B3EF-F3FF-4AD0-93F5-DA85E96B1522/0/ICCPres040107ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի  
24),

(13) Արգենտինայի Հանրապետության հետ 2017 թվականի ապրիլի 18-ին կնքված ICC-  
PRES/19-01-17 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/170418-oj-sa-Argentina.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի  
24):

1 (109) 2023  
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆ ՏԱԳՄԱՆԱՂՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

**բ)** Միջազգային քրեական դատարանի հետ համաձայնեցրել է դատապարտված անձի պատիժն ի կատար ածելու պայմանները («Ընթացակարգի և ապացուցման կանոններ», 200-րդ կանոն, 5-րդ կետ), և

**գ)** համապատասխան դատավճռի առկայության դեպքում Միջազգային քրեական դատարանի նախագահության կողմից նշանակվել է որպես պատիժն ի կատար ածող պետություն (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր), և

**դ)** Միջազգային քրեական դատարանի նախագահության կողմից որպես պատիժն ի կատար ածող պետություն նշանակվելուն համաձայնություն է տվել (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին մաս, «գ» կետ):

Այսինքն՝ Միջազգային քրեական դատարանի կողմից ազատազրկման դատապարտված անձի պատժի կրման առնչությամբ պետության՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն անմիջականորեն չի ծագում Կանոնադրության վավերացմամբ, այլ այն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության կողմից կամընտրաբար ստանձնվող պարտավորություն է, որն ստանձնվում է վերը շարադրված «ա»-«դ» կետերում թվարկված բոլոր պայմանների առկայությամբ:

**7.4.** Սույն գործով ներկայացված դիմումի քննության և Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու՝ Սահմանադրական դատարանի լիազորությունը բխում է Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետից, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով «մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված լիազորությունից բխում է վավերացման ենթակա միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության՝ Սահմանադրական դատարանի կողմից նախնական պարտադիր ստուգման ընթացակարգը՝ հաշվի առնելով վավերացված միջազգային պայմանագրով նախատեսված իրավական նորմերի՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավական նորմերի աստիճանակարգության մեջ ունեցած դիրքը, որի ուժով՝ դրանց և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

**7.5.** Նկատի ունենալով սույն որոշման 7.3-րդ կետում նկարագրված հանգամանքներն ու ընթացակարգերը, անդրադառնալով Կառավարության դիրքորոշման մեջ ներկայացված՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով սահմանված պարտավորության՝ Սահմանադրության 70 և 117-րդ հոդվածներով նախատեսված նորմերին համապատասխանության վերաբերյալ փաստարկներին՝

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին մասով և «Ընթացակարգի և ապացուցման կանոնների» 200-րդ կանոնով նախատեսված ընթացակարգով ստանձնած լինելու դեպքում կարող է վերաբերել Սահմանադրության 70-րդ հոդվածով նախատեսված ներման խնդրանքի անհատական իրավունքին և Ազգային ժողովի՝ համաներման մասին օրենք ընդունելու՝ Սահմանադրության 117-րդ հոդվածով ամրագրված իրավասությանը:

Այդուհանդերձ, Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը չի ծագում Կանոնադրության վավերացմամբ, այլ միայն վերը նկարագրած ընթացակարգով Հայաստանի Հանրապետության կողմից դատապարտյալներին ընդունելու վերաբերյալ պատրաստակամություն հայտնած պետությունների ցանկում ներառվելու նպատակով Միջազգային քրեական դատարանի հետ համապատասխան միջազգային պայմանագրով:

**7.6.** Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ծագման և բնույթի մասին սույն որոշման վերլուծությունները կիրառելով ստուգման ենթակա միջազգային պայմանագրով՝ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծման նպատակով Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում Կառավարության ներկայացուցչի՝ Սահմանադրական դատարանի հարցմանն ի պատասխան 2023 թվականի մարտի 17-ի գրությամբ ներկայացրած պաշտոնական հավաստումն առ այն, որ Կառավարությունը չունի Կանոնադրության 103-րդ հոդվածով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանի կողմից ազատազրկման դատապարտված անձանց՝ պատիժն ի կատար ածելու նպատակով ընդունելու մասին հայտարարություն անելու մտադրություն (սույն որոշման 3.2 կետ):

**7.7.** Հետևաբար՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չեն կարող համարվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով միջազգային պայմանագրով «ամրագրված պարտավորություններ», քանի որ դրանք Հայաստանի Հանրապետության համար չեն ծագելու Կանոնադրության վավերացմամբ, այլ միայն նկարագրված ընթացակարգի արդյունքում կնքվող միջազգային պայմանագրով, որոնք սույն դիմումով քննության առարկա չեն:

**8.** Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունների մասով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ հայտարարությունը չի պարունակում Կանոնադրությամբ նախատեսված պարտավորություններից տարբերվող որևէ պարտավորություն: Ազգային ժողովին առաջարկվող այդ հայտարարության իրավական բովանդակությունը բացառապես վերաբերում

է Կանոնադրության 6-8-րդ հոդվածներով նախատեսված՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների նկատմամբ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը 2021 թվականի մայիսի 10-ի ժամը 00:00-ից ի վեր ճանաչելու արդյունքում՝ հիշյալ հանցագործությունների նկատմամբ Միջազգային քրեական դատարանի իրավազորության ճանաչմանը՝ նույն հայտարարությամբ նշված պահից:

Հետևաբար՝ վերահաստատելով սույն որոշման 5-6-րդ կետերում ներկայացված՝ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 169-րդ հոդվածի 3-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63 և 64-րդ հոդվածները, 74-րդ հոդվածի 1-5-րդ մասերը և 6-րդ մասի 1-ին կետը՝ Սահմանադրական դատարանը

1. 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում և 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

24 մարտի 2023 թվականի  
ՍԴՈ-1680



## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՈՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՄԴՈ-1680 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի մարտի 24-ի ՄԴՈ-1680 որոշմամբ որոշել է, որ 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում և 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավագրությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի մարտի 24-ի ՄԴՈ-1680 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ ԴԱՏԱՐԱՆ

նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Սույն հատուկ կարծիքի շրջանակում նախևառաջ քննարկման առարկա կդարձնեն քննարկվող միջազգային պայմանագրի սահմանադրականության հարցը՝ բովանդակային տեսանկյունից, այնուհետև նաև՝ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումը պատշաճ ներկայացված չլինելու հարցի տեսանկյունից:

## ԲԱԺԻՆ I

1. Այսպես, 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն) ընդունվել է 1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում՝ Միավորված ազգերի կազմակերպության Լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական կոնֆերանսում, և ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունը ստորագրել է 1999 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հայտարարությամբ, համաձայն որի՝ «Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 124-րդ հոդվածին համա-

պատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետության համար Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում չի ընդունում Դատարանի իրավագործությունը 8-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ, երբ, ինչպես ենթադրվում է, հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիների կողմից կամ իր տարածքում:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ընդունել Դատարանի կողմից դատապարտված անձանց, եթե նրանք ՀՀ քաղաքացիներ կամ ՀՀ-ում մշտական բնակություն հաստատած անձինք են»:

Հանրապետության Նախագահը 2004 թվականի հուլիսի 12-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ Կանոնադրությունում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով: Նշված գործի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացրած ՍԴՈ-502 որոշմամբ, ի թիվս այլնի, եկել է նաև այն եզրահանգման, որ «1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս եւ 1-ին հոդված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 և 92 հոդվածներին»:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը նշված եզրահանգման հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ «(...) Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և հոդված 1-ով նախատեսված՝ ներպետական քրեական իրավագործության մարմինների լրացման դրույթը չի բխում ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներով ամրագրված նորմերից: Արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը: (...) ՀՀ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 9-րդ գլուխը, հստակորեն սահմանելով ՀՀ դատական իշխանության համակարգը, չի նախատեսում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրավագործության միջազգային դատական մարմնով»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2097-Ա որոշմամբ հավանություն է տվել «1998 թվականի

հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու և կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան, իսկ Սահմանադրական դատարանի 2023 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-1680 որոշմամբ այն ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող:

Իմ գնահատմամբ՝ Սահմանադրական դատարանի կողմից Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ գործող Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար նախևառաջ պետք է հաղթահարվեր նշված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտված դիրքորոշումներից շեղվելու հնարավորության հարցը:

Քննարկվող դեպքում Սահմանադրական դատարանի՝ սույն գործով կայացրած ՍԴՈ-1680 որոշման պատճառաբանությունները՝ Սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴՈ-502 որոշմամբ չկաշկանդվելու վերաբերյալ, պայմանավորվել են հիմնականում հետևյալ հանգամանքներով.

- նախկինում Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը որոշվել է՝ հիմք ընդունելով 1995 թվականի Սահմանադրության դրույթները, իսկ սույն գործով քննության առարկա հարցը ենթակա է քննարկման գործող Սահմանադրության դրույթների համատեքստում,

- 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշումը հանգեցրել է Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման ընթացքում կիրառելի սահմանադրական դրույթների նոր ընկալման. Միջազգային քրեական դատարանի կողմից իր իրավազորության իրականացումը չի փոխարինում ազգային իրավազորության համակարգերին և չի միջամտում ազգային իրավազորության շրջանակին, այլ միայն լրացնում է նրանց այնքանով, որքանով նրանք իրենց հետապնդած խնդրում ձախողում են այն և ի վիճակի չեն կամ ցանկություն չունեն իրագործել Կանոնադրությամբ ամրագրված նպատակները:

Իմ գնահատմամբ՝ տվյալ դեպքում որպեսզի հնարավոր լիներ պարզել, թե արդյոք Սահմանադրության գործող կարգավորումները բացառում են Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին

կայացված ՍԴՈ-502 որոշմամբ վեր հանված խնդիրների առկայությունը, անհրաժեշտ էր բովանդակային առումով վերլուծել և գնահատել ինչպես նախկինում գործող Սահմանադրության այն դրույթները, որոնց հիմքով Սահմանադրական դատարանը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել էր Սահմանադրությանը չհամապատասխանող, այնպես էլ ներկայումս գործող Սահմանադրության համապատասխան դրույթները:

Այսպես, 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան (...):

1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը: Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ (...):

Վերոնշյալ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ սահմանադիրը արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավագործությամբ օժտել է բացառապես դատարաններին՝ որպես այդպիսին համարելով Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանները՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, միաժամանակ նշելով, որ գործում են նաև տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ: Այսինքն՝ սահմանադիրն ուղղակիորեն սահմանել է արդարադատություն իրականացնելու իրավագործությամբ օժտված կոնկրետ դատարանների շրջանակը:

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան (...):

2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ (...):

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ վերոնշյալ բովանդակությամբ դրույթները զետեղված են համապատասխանաբար 162-րդ և 163-րդ հոդվածներում:

Մասնավորապես՝ գործող Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրա-

կանացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքների համապատասխան:

Իսկ Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ (...):

Փաստորեն, 1995 թվականի խմբագրությամբ, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության և գործող Սահմանադրության վերոնշյալ դրույթների բովանդակությունը հանգում է նրան, որ սահմանադիրը 1995 թվականից ի վեր արտահայտել է նույն դիրքորոշումն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնող միակ մարմինները դատարաններն են, ընդ որում՝ մասնավորեցնելով այն կոնկրետ դատարանների շրջանակը, որոնք Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան կարող են իրացնել այդ իրավագործությունը: Նշվածից հետևում է, որ 1995 թվականի խմբագրությամբ գործող Սահմանադրության 91-րդ և 92-րդ հոդվածները բովանդակային առումով (արդարադատության իրականացման իրավագործություն ունեցող մարմինների սահմանման առումով) փոփոխության չեն ենթարկվել, ինչից էլ բխում է, որ սահմանադիրը 1995 թվականից առ այսօր այս հարցի առնչությամբ ձևավորել է իր կայուն և անփոփոխ դիրքորոշումը:

Հաշվի առնելով վերոնշյալ սահմանադրական դրույթների սահմանադրաիրավական բովանդակության առ այսօր անփոփոխելի մնալու հանգամանքը, ինչպես նաև այն, որ առկա չէ թե՛ դիմողի կողմից ներկայացված, և թե՛ Սահմանադրական դատարանի կողմից նշված որևէ հիմնավոր փաստարկ նախկինում՝ Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՄԴՈ-502 որոշմամբ արտահայտված դիրքորոշումից շեղվելու համար՝ գտնում են, որ Սահմանադրական դատարանը Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցի վերաբերյալ վերոնշյալ որոշումից տարբերվող դիրքորոշում արտահայտելու հնարավորություն չուներ:

Բացի այդ, առանձնակի կարևորում են նաև հետևյալ հանգամանքը. Սահմանադրական արդարադատության իր գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի

Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում, նշված որոշումները չեն դիտարկվում միայն որպես քննության առարկա հանդիսացող հարցի վերաբերյալ սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունը հավաստող իրավական փաստաթղթեր, այլ նշված որոշումները պարունակում են իրավական դիրքորոշումներ, ըստ էության հանդիսանալով Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ, որոնք պետք է պարտադիր և կաշկանդող լինեն ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այլ նաև հենց Սահմանադրական դատարանի համար:

Նշվածից որպես բացառություն կարող են համարվել այն դեպքերը, երբ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենքով սահմանված դեպքերում ենթակա են վերանայման, ինչը փաստում է այն իրողությունը, որ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները որոշակի օբյեկտիվ հիմքերի և հիմնավոր փաստարկների առկայության դեպքում կարող են փոփոխվել:

Մասնավորապես, օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի կողմից իր իսկ որոշումների վերանայման որոշակի կարգ: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը նախատեսում է Սահմանադրական դատարանի կողմից նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա վերանայելու հնարավորություն, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը և եթե ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Սակայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի քննարկվող կարգավորումը վերաբերում է սուկ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը և բացառում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ

հողվածի 9-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով<sup>1</sup> նախատեսված որոշումների վրա հիշյալ կարգավորման տարածումը:

Հարկ են համարում նշել, որ թեև Սահմանադրական դատարանի որոշումների վերանայում օրենսդիրը նախատեսել է միայն որոշակի տեսակի գործերի քննության պարագայում<sup>2</sup>, այդուհանդերձ օրենսդրի որդեգրած մոտեցումը, ըստ էության, հանգում է բացառապես վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը: Վերոգրյալ իրավիճակից տարբերվող դեպքերում և այդ գործիքակազմի կիրառման հնարավորություն չնախատեսող վարույթներով, իմ կարծիքով, բացակայում է Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից տարբերվող այլ որոշում կայացնելու օրենսդրական հնարավորությունը, եթե իհարկե չի փոխվել Սահմանադրությունն ամբողջությամբ կամ սահմանադրական նորմը բովանդակային առումով:

Սահմանադրի և օրենսդրի վերոնշյալ մոտեցման համատեքստում քննարկման առարկա դարձնելով սույն գործով առաջացած իրավիճակը՝ արդյունքում արձանագրում են, որ՝

- 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության դրույթները՝ արդարադատության իրականացման բացառիկ իրավազորություն ունեցող մարմինների (դատարանների) և դրանց շրջանակի սահմանման առումով, և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության դրույթները՝ նույն հարցի սահմանման առումով ունեն բովանդակային միևնույն հենքը, և սահմանադրի կողմից որևէ բովանդակային փոփոխության չեն ենթարկվել,

- ի հայտ չի եկել արդարադատության իրականացման բացառիկ իրավազորություն ունեցող մարմինների (դատարանների) և դրանց շրջանակը սահմանող սահմանադրական դրույթի այնպիսի նոր ընկալում, որի

<sup>1</sup> «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսվել է, որ նույն հոդվածի 1-ին մասում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է, ի թիվս այլնի, ընդունել նաև հետևյալ որոշումներից մեկը. վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին և վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին:

<sup>2</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը, 69-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ մասերը, 70-րդ հոդվածի 6-րդ մասը, 71-րդ հոդվածի 10-րդ մասը, 72-րդ հոդվածի 6-րդ մասը, 73-րդ հոդվածի 7-րդ մասը:

1(109)2023  
 ◆ ՏԵՂԵԳՐԱԿ  
 ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



առկայությամբ հնարավոր էր կայացնել Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴՈ-502 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումներից տարբերվող որոշում, առավել ևս, որ նման գործիքակազմի կիրառումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ նախկինում կայացված որոշումներով Սահմանադրական դատարանը նորմը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող, ուստի այն չի կարող կիրառելի լինել հակասահմանադրական ճանաչված ակտերի պարագայում: Ավելին՝ իր արտահայտած դիրքորոշումների վերանայման գործիքակազմն էլ կիրառելի է Սահմանադրական դատարանում իրականացվող ոչ բոլոր վարույթների նկատմամբ,

- Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցի վերաբերյալ փաստորեն առկա է Սահմանադրական դատարանի հակադիր բովանդակությամբ երկու որոշում՝

ա) Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴՈ-502 որոշում, որով Կանոնադրությունում ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի՝ Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները, չի համապատասխանում 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» դրույթին,

բ) Սահմանադրական դատարանի կողմից 2023 թվականի մարտի 24-ին կայացված ՍԴՈ-1680 որոշում, որով Կանոնադրությունում ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի՝ Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները, համապատասխանում է Սահմանադրության՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» դրույթին:

Հատկանշական է նաև հետևյալ հանգամանքը. 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում էր, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Ավելին՝ Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները, 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴՈ-502 որոշմամբ արձանագրել է հետևյալը. «ՀՀ սահմանադրական դատարանը՝ ելնելով նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայից, հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության

այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավազորությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»:

Մինչդեռ 2015 թվականի փոփոխություններով և ներկայումս գործող Սահմանադրությունն այլևս նման դրույթ չի նախատեսում, այլ՝ Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն սահմանում է, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Այսինքն՝ գործող Սահմանադրությունն ուղղակիորեն արգելում է Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերի վավերացումը:

Փաստորեն, սույն գործով կայացված՝ ՍԴԴ-1680 որոշումն ուղղակիորեն հակասում է ներկայումս գործող Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասին, քանի որ Սահմանադրական դատարանի կողմից 2004 թվականի օգոստոսի 13-ին կայացված ՍԴԴ-502 որոշման գոյության պարագայում, այն պայմաններում, երբ դրանով արձանագրվել է Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության՝ արդարադատության իրականացման բացառիկ իրավազորություն ունեցող մարմինները և դրանց շրջանակը սահմանող սահմանադրական դրույթին չհամապատասխանող, և երբ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավազորություն ունեցող մարմինները և դրանց շրջանակը սահմանելու մասին սահմանադրական դրույթն ունի միևնույն բովանդակային հենքը՝ չենթարկվելով սահմանադրի կողմից որևէ բովանդակային փոփոխության, սույն գործով կայացված վերջնական ակտով Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել մի միջազգային պայմանագիր, որի վերաբերյալ առկա է դրա՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ վերջնական դատական ակտ՝ Սահմանադրական դատարանի որոշման տեսքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ եթե սահմանադիրը կարևորեր քննարկման առարկա հանդիսացող Կանոնադրության վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից, ապա վավերացման միակ և հնարավոր ելքը կարող էր լինել նոր Սահմանադրության ընդունումը կամ Սահմանադրության մեջ սահմանադրի կողմից համապատասխան փոփոխությունների կատարումը: Ընդ որում, Սահմանադրության համապատասխան դրույթների՝ 162-րդ և 163-րդ հոդվածների Սահմանադրության 7-րդ գլխում զետեղված լինելու պարագայում դրանց վերաբերյալ փոփոխությունները կարող էին տեղի ունենալ միայն հանրաքվեի միջոցով (Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մաս): Միաժամանակ հաշվի առնելով Սահմա-

նադրության վերոնշյալ դրույթների կապակցությամբ սահմանադրական համապատասխան փոփոխությունների բացակայությունը և հիմք ընդունելով Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասը՝ գտնում են, որ սույն գործով քննության առարկա հանդիսացող Կանոնադրությունը չէր կարող գնահատվել որպես մի միջազգային պայմանագիր, որում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

## ԲԱԺԻՆ II

2. Միաժամանակ հարկ են համարում անդրադառնալ սույն գործի հարուցման հիմք հանդիսացած դիմումի պատշաճ ներկայացված չլինելու հանգամանքին:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(109)2023

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան

ՍԱԴՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏՎՈՐԱՆ 1(109)2023

էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են

տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում են, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող

իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

1(109)2023  
 ◆ ՄԻԿՐՈՎԵԿԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵԼԵԿՎԵԿԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



Սույն հատուկ կարծիքի 2-րդ բաժնի՝ վերոգրյալ դիրքորոշումների լույսի ներքո կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«29» մարտի 2023թ.**



**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ**  
**24-Ի «1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**  
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՈՈՄԻ**  
**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ**  
**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»**  
**ԳՈՐԾՈՎ ՍԴՈ-1680 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետև՝ Օրենք) 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք՝ Սահմանադրական դատարանի 2023 թվականի մարտի 24-ի «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՍԴՈ-1680 որոշման (այսուհետ նաև՝ ՍԴՈ-1680 որոշում) վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում են ինչպես արդարադատություն իրականացնող սուբյեկտային կազմը՝ սահմանադրական մարմինները, այնպես էլ վերջիններիս սահմանադրական առաքելության սահմանադրաիրավական հիմքերը և շրջանակները (Սահմանադրության 162-163-րդ, 167-172-րդ հոդվածներ, 175-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մասնավորապես՝ **Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը՝ Օրենքով:

Սահմանադրական դատարանը նախևառաջ պետք է ունենա իրավասություն՝ քննության առարկա դարձնելու ներկայացված հարցը, իսկ բազմակողմանի և լրիվ քննության արդյունքում պետք է կայացնի օբյեկտիվ որոշում՝ հիմնված վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական պատշաճ վերլուծության վրա, որը, մասնավորապես, պետք է զերծ լինի ներքին հակասություններից և երկիմաստ դիրքորոշումներից:

Սահմանադրական դատարանի ձևավորած իրավակիրառ պրակտիկան պետք է լինի միասնական: Այդ պրակտիկայի փոփոխությունն ընկալելի, ընդունելի և իրավաչափ է, եթե այն արդյունք է սահմանադրական փոփոխությունների իրացման կամ գործող Սահմանադրության նորմերի այնպիսի վերաիմաստավորման, երբ Սահմանադրական դատարանի կողմից հիմնա-

1(109)2023  
◆ ՍԵՂՈՒԿԻ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վորվում է իր պրակտիկայի փոփոխությունը: Հակառակը կարող է հանգեցնել Սահմանադրական դատարանի օբյեկտիվ գործունեության նկատմամբ ողջամիտ կասկածների և նրա նկատմամբ հանրային վստահության անկման:

**Գտնում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավունք չունի, առանց սահմանադրական համապատասխան փոփոխությունների, քննության առարկա դարձնելու այն միջազգային պայմանագիրը, որում ամրագրված պարտավորությունները Սահմանադրական դատարանն արդեն իսկ ճանաչել է Սահմանադրությանը հակասող:**

Այսպես, 2004 թվականի հուլիսի 12-ին Հանրապետության Նախագահը դիմել էր Սահմանադրական դատարան՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով:

Սահմանադրական դատարանը 2004 թվականի օգոստոսի 13-ին «1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրել է ՍԴՈ-502 որոշումը (այսուհետև՝ ՍԴՈ-502 որոշում), որի եզրափակիչ մասում նշվում է. «1. 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 և 92 հոդվածներին:

2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվածի, 55 հոդվածի 17 կետի, 81 հոդվածի 1-ին կետի պահանջներին»:

Օրենքի վերլուծությունը վկայում է, որ Սահմանադրական դատարանի կողմից Օրենքի 68-րդ հոդվածով սահմանված կարգով վերանայման ենթակա են միայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ակտերը՝ օրենքներ, Ազգային ժողովի որոշումներ, Հանրապետության նախագահի հրամանագրեր և կարգադրություններ, Կառավարության և վարչապետի որոշումներ, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (այդ թվում՝ Օրենքի 72, 73-րդ հոդվածներով սահմանված ընթացակարգերով ընդունված օրենքները):

Ընդ որում՝ Օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը կարող է վերանայել բացառապես նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները՝ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին: Այլ կերպ՝ Սահմանադրական դատարանի քննության առարկա չեն կարող դառնալ այն նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցերը, որոնք նախկինում ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Միջազգային պայմանագրերի պարագայում (Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ մաս, Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մաս) Սահմանադրական դատարանը ոչ Սահմանադրությամբ և ոչ էլ Օրենքով դրանցում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը ստուգելու համար դրանց վերանայման իրավասություն չունի: Նման վերանայումը կարող է հնարավոր լինել միայն Սահմանադրությունում և Օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու պարագայում:

Հարկ է նշել, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների նախագիծը մշակելիս Հայաստանի Հանրապետության նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն հրամանագրով ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի (այսուհետև՝ Մասնագիտական հանձնաժողով) մշակած մի քանի տարբերակներում ուղղակիորեն սահմանված էր, որ այն պայմանագրերը, որոնցում ամրագրված պարտավորությունները ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող են ճանաչվել, կարող են վավերացվել միայն Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, ինչպես ամրագրված էր 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 6-րդ մասում: Վերջնական տարբերակում նշվածը տեղ չգտավ այն պատճառաբանությամբ, որ դա ինքնին ենթադրելի է, և նման հատուկ նորմի կարիք չկա:

Տվյալ դեպքում՝ ՄԴՈ-502 որոշման առկայության, ինչպես նաև այդ որոշման հիմքում դրված սահմանադրական դրույթի՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունում բովանդակային առումով չփոփոխվելու պարագայում, միակ սահմանադրական ճանապարհը, որով Հայաստանի Հանրապետությունը կարող էր վավերացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (այսուհետև նաև՝ Կանոնադրություն), Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխությունն է:

Կանոնադրությունը վավերացնելու համար սահմանադրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը արձանագրել է նաև Մասնագիտական հանձնաժողովը:

Մասնավորապես՝ Մասնագիտացված հանձնաժողովի կողմից մշակված՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի<sup>1</sup> 2.6.4 կետում նշված է. «Սահմանադրական բարեփոխումները պետք է նախադրյալներ ստեղծեն նաև Հայաստանի Հանրապետության կողմից 1998թ. հուլիսի 18-ին Հռոմում ստորագրված՝ «Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին» համաձայնագրի վավերացման համար՝ նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2004թ. օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշմամբ հիշյալ համաձայնագրով ստանձնած որոշ պարտավորություններ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող»:

Որպես Մասնագիտացված հանձնաժողովի անդամ՝ հաստատում եմ, որ հանձնաժողովը որոշել է ձեռնպահ մնալ սահմանադրական այնպիսի փոփոխություններ կատարելուց, որոնք հնարավորություն կտային վավերացնելու Կանոնադրությունը, որի արդյունքում էլ Սահմանադրության այն հոդվածները, որոնցից ելնելով՝ ՍԴՈ-502 որոշմամբ Սահմանադրությանը հակասող էին ճանաչվել Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունները, փոփոխության չեն ենթարկվել: Մասնավորապես՝ 2005թ. փոփոխություններով Սահմանադրության 91-րդ հոդվածում ամրագրված դրույթները նույնությամբ ամրագրվել են 2015թ. փոփոխություններով գործող Սահմանադրության 162-րդ հոդվածում:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՍԴՈ-1680 և ՍԴՈ-502 որոշումների առարկան նույնն է, իսկ Սահմանադրության վերաբերելի դրույթը բովանդակային առումով չի ենթարկվել փոփոխության, ինչպես նաև նկատի ունենալով սույն գործով Սահմանադրական դատարանի մոտեցումներն ու եզրահանգումները՝ ՍԴՈ-1680 որոշումը հիմնավոր, հետևաբար՝ ընդունելի չեմ համարում:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1680 որոշումը կայացնելու փաստով դուրս է եկել Սահմանադրությամբ և Օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակից:

Հարկ է նշել, որ Կանոնադրությունը վավերացնելու նպատակով սահմանադրական փոփոխությունների ճանապարհով են գնացել բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Ֆրանսիան, Իռլանդիան, Բրազիլիան՝ Սահմանադրությամբ ուղղակիորեն ամրագրելով Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը կամ Կանոնադրությանը միանալու հնարավորությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես՝ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

<sup>2</sup> Տես՝ [https://www.venice.coe.int/WebForms/pages/?p=01\\_CODICES\\_constitutions&lang=EN](https://www.venice.coe.int/WebForms/pages/?p=01_CODICES_constitutions&lang=EN)

Ինչ վերաբերում է ՍԴՈ-1680 որոշման պատճառաբանական մասին, ապա գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի կողմից նշված հարցը քննարկելու իրավասության բացակայության պայմաններում անիմաստ է նաև որոշման բովանդակությանն անդրադառնալը: Այդուհանդերձ, հարկ եմ համարում նշել, որ դրանք հիմնավոր չեն և հակասում են ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, որոնց հետ գրեթե ամբողջությամբ համակարծիք եմ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԴԱՏԱՎՈՐ**

**ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

3 ապրիլի 2023թ.

1(109)2023

◆ ՍԵՂՈՒԿՅԱՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

## «1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՌՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1680 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի մարտի 24-ին Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում (այսուհետ՝ Կանոնադրություն) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, ՍԴՈ-1680 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) եզրահանգել է.

«1. 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում և 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը»:

Համաձայն չլինելով Որոշման եզրափակիչ մասի և պատճառաբանական մասում արտահայտված որոշ եզրահանգումների հետ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ հատուկ կարծիք հիշյալ Որոշման վերաբերյալ:

Սահմանադրական դատարանը դեռևս 2004 թվականի օգոստոսի 13-ին «1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրել էր ՍԴՈ-502 որոշումը, որի համաձայն՝

1. 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավազորության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ 1(109)2023

հողված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 և 92 հոդվածներին:

2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվածի, 55 հոդվածի 17 կետի, 81 հոդվածի 1-ին կետի պահանջներին»:

Միաժամանակ, որոշման պատճառաբանական մասում Սահմանադրական դատարանը, ելնելով միջազգային իրավակիրառական պրակտիկայից, հնարավոր էր համարել «(...) ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավազորությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»:

2023 թվականի մարտի 24-ի Որոշմամբ Սահմանադրական դատարանը, գտնելով, որ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը, արձանագրել է. «(...) Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման և 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշման գործի քննությամբ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման հանգամանքների միջև առկա է հետևյալ էական տարբերությունը.

**ա)** սույն գործով Սահմանադրական դատարանի խնդիրն է որոշել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը, մինչդեռ ՍԴՈ-502 որոշմամբ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների ստուգումն իրականացվել է դրանց՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով, և

**բ)** 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության նախաբանը որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթ ճանաչելը հանգեցրել է Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման ընթացքում կիրառելի սահմանադրական դրույթների նոր ընկալման, ինչը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ստուգելու նպատակով Սահմանադրության դրույթները մեկնաբանելու հարցում որոշիչ կարևորություն ունի, և



գ) Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությանը միանում և Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարությունն ընդունում է՝ առանց Կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Միջազգային քրեական դատարանի դատապարտած անձանց պատժի կրման նպատակով ընդունելու պատրաստակամության մասին հայտարարություն կատարելու»:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

նախ՝ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-502 որոշման մեջ նշել էր, որ ՀՀ դատական իշխանության համակարգը չի նախատեսում որևէ դրույթ, «(...) որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավազորություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրավազորության միջազգային դատական մարմնով»:

Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության վերաբերելի դրույթները բովանդակային առումով փոփոխության չեն ենթարկվել, մասնավորապես՝ 2015 թվականի խմբագրությամբ սահմանադրական նորմերում չեն իրացվել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտված դիրքորոշումները: Միաժամանակ կարևոր է շեշտել, որ քրեական իրավազորություն իրականացնող դատական մարմինները չեն կարող նույնացվել միջազգային պայմանագրերի հիման վրա գործող այլ դատարանների հետ:

Երկրորդ՝ հիմնավորելով Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը՝ Սահմանադրական դատարանը Որոշման մեջ նշել է. «(...) Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգը կոչված է ապահովելու, ի թիվս Սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների, նաև Սահմանադրության նախաբանի իմաստով «համամարդկային արժեքների» պաշտպանությունը, որն առաջնահերթությամբ սահմանադրական հրամայական լինելուց բացի՝ նաև *jus cogens* նորմերով պարտավորություն է ցանկացած պետության համար»:

Լիովին համաձայն լինելով այն դիրքորոշմանը, որ Սահմանադրության նախաբանը դասվում է Սահմանադրության անփոփոխելի դրույթների շարքը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման ընթացքում կիրառելի սահմանադրական դրույթների նոր ընկալման համար:

Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արդեն իսկ վկայակոչվել է Սահմանադրության նախաբանը, այդ թվում նաև ՍԴՈ-502 որոշման 14-րդ կետում, որտեղ նշել է. «ՀՀ Սահմանադրությունն իր նախա-

բանում հավաստում է հայ ժողովրդի հավատարմությունը համամարդկային արժեքներին»:

Բացի դրանից, հարկ է արձանագրել, որ համամարդկային արժեքների լույսի ներքո դիտարկվել է ոչ միայն ՍԴՈ-502 որոշումը, այլ նաև Սահմանադրական դատարանի բազմաթիվ այլ որոշումներ:

Երրորդ՝ Սահմանադրական դատարանն իր Որոշման մեջ նշում է, որ «(...) Միջազգային քրեական դատարանի կողմից ազատագրվման դատապարտված անձի պատժի կրման առնչությամբ պետության՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն անմիջականորեն չի ծագում Կանոնադրության վավերացմամբ, այլ այն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության կողմից կամընտրաբար ստանձնվող պարտավորություն է (...)»: Հետևաբար՝ ըստ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1680 որոշման՝ «(...) Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չեն կարող համարվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով միջազգային պայմանագրով «ամրագրված պարտավորություններ», քանի որ դրանք [Կանոնադրության վավերացմամբ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները] Հայաստանի Հանրապետության համար չեն ծագելու Կանոնադրության վավերացմամբ, այլ միայն նկարագրված ընթացակարգի արդյունքում կնքվող միջազգային պայմանագրով, որոնք սույն դիմումով քննության առարկա չեն»:

Մինչդեռ հարկ է նշել, որ ՍԴՈ-502 որոշմամբ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված դրույթները համարվել էին ստանձնվող միջազգային պարտավորություններ և միաժամանակ ճանաչվել էին Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող:

Անկախ այն հանգամանքից, թե Կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Միջազգային քրեական դատարանի կողմից դատապարտված անձանց պատժի կրման նպատակով ընդունելու պատրաստակամության մասին հայտարարություն արվում է, թե՛ ոչ, Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները միջազգային պայմանագրով ստանձնվող պարտավորություններ են առնվազն այն մասով, որ Կանոնադրությանը միացող կողմը համաձայնում է այդ դրույթներին, մասնավորապես՝ այն իրողությանը, որ դատապարտված իր քաղաքացիները պատիժը կկրեն Կանոնադրության դրույթներով սահմանված կարգով:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-502 որոշմամբ ճանաչելով Կանոնադրության 105-րդ հոդվածով ստանձնվող պարտավորությունները Սահմանադրությանը չհամապատասխանող, նշել էր, որ ներման, ինչպես նաև համաներման իրավունքից կարող են զրկվել «(...) Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավագործության համակարգը

լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձինք (...):»:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ **Կանոնադրության 120-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնադրության վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել**, գտնում եմ, որ Կանոնադրությունը կարող էր Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվել միայն Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԴԱՏԱՎՈՐ**

**Ա. ԹՈՒՆՅԱՆ**

**«3» ապրիլի 2023թ.**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2022 թվականի նոյեմբերի 17-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ»  
ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
(4-ՐԴ ՀԵՐԹ)» ՆԱԽԱԳԾԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 4  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 մարտի 2023թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող),  
Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ.  
Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
Կառավարության ներկայացուցիչ՝ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարար Գ. Սանոսյանի,  
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ  
հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»

1(109)2023  
◆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
267

սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի 1-ին մասի և 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի հունվարի 5-ի N 8-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրած պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունվարի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրասիական զարգացման բանկը 2006 թվականի հունվարի 12-ին Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև կնքված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի հիման վրա ստեղծված և գործունեություն իրականացնող միջազգային կազմակերպություն է, որը հանդիսանում է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչ (այսուհետ նաև՝ Կառավարիչ) և հանդես է գալիս դրա մասնակիցների անունից և հանձնարարությամբ:

2. «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» 2015 թվականի ապրիլի 14-ին ստորագրված համաձայնագրի (այսուհետ նաև՝ Հիմնական համաձայնագիր) նպատակն է

Հայաստանի Հանրապետությունում Ազարակից դեպի Քաջարան 20,5 կմ ձգվող «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի հատվածում անցանելիության բարձրացումը և վթարների նվազեցումը:

Հիմնական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 11-ի ՍԴՈ-1219 որոշմամբ ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող, ինչից հետո Հիմնական համաձայնագիրը վավերացվել է Ազգային ժողովի 2015 թվականի հունիսի 23-ի ԱԺՈ-166-Ն որոշմամբ:

3. Ըստ «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրի (այսուհետ նաև՝ Լրացուցիչ համաձայնագիր) վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկանք-հիմնավորման՝ համաձայն Եվրասիական զարգացման բանկի խորհրդի նախագահի 03.07.2017 թ. թիվ ЕФСР 17-71 գրության՝ Վարկային համաձայնագրով նախատեսված վարկային միջոցների հասանելիության ժամկետի ավարտ է սահմանվել 2022 թվականի դեկտեմբերի 31-ը, և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն իր լիազորությունների շրջանակում նպատակահարմար է գտնում վարկային միջոցների հասանելիության ժամկետի՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը երկարաձգումը:

4. Լրացուցիչ համաձայնագիրը ստորագրվել է 2022 թվականի նոյեմբերի 17-ին Հիմնական համաձայնագրի հիման վրա՝ նկատի ունենալով լրացուցիչ դրամական միջոցներ ներգրավելու անհրաժեշտությունը:

5. Լրացուցիչ համաձայնագրով սահմանված կարգով և բովանդակությամբ Հիմնական համաձայնագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները. լրացում է կատարվում Հիմնական համաձայնագրի 2.2-րդ կետում, հանվում է Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (գ) ենթակետի երկրորդ պարբերությունը, այլ խմբագրությամբ են շարադրվում Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (գ) ենթակետը, Հիմնական համաձայնագրի 4.1-ին կետի (ժ) ենթակետը, Հիմնական համաձայնագրի թիվ 2 հավելվածի «Համաձայնագրի շրջանակներում կիրառվող կանոնները և ընթացակարգերը» բաժնի առաջին պարբերությունը, Հիմնական համաձայնագրի թիվ 4-8 հավելվածները: Փոփոխության է ենթարկվում նաև Հիմնական համաձայնագրով սահմանված Ծրագրի նպատակը, մասնավորապես՝ սահմանվում է, որ այն Հայաստանի Հանրապետությունում «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի՝ Ազարակից դեպի Քաջարան մոտ 32

կիրումետր հատվածի թողունակության բարձրացումը և վթարայնության նվազեցումն է՝ նախկինում սահմանված 20.5 կիրումետրի փոխարեն:

6. Լրացուցիչ համաձայնագրով կատարվող փոփոխության արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

6.1. ներդրումային վարկի ստացման նպատակով Կենտրոնական գանձապետարանում բացել և վարել Հիմնական համաձայնագրի 4.1-ին (ժ) կետում նշված՝ Ծրագրի իրականացման խմբի անունով առանձին հաշվեհամար վարկի արժույթով՝ Կառավարչի համար բավարար պայմաններով, ներառյալ՝ ցանկացած հայցից, բռնագրավումից, կալանքից կամ ոչ նպատակային օգտագործումից հաշվի պատշաճ պաշտպանության ապահովումը (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար) և Հատուկ հաշվեհամարին ներդրումային վարկի միջոցների հաշվեգրումը և Հատուկ հաշվեհամարից միջոցների ծախսումն իրականացնել Հիմնական համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների ծախսման ընթացակարգերին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 2-րդ կետ),

6.2. ապահովել Ծրագրի ծախսերի ֆինանսավորման համար սեփական բյուջեից բավարար ծավալով հատկացումների ամենամյա տրամադրումը (համաֆինանսավորում)՝ Հիմնական համաձայնագրի թիվ 4 հավելվածին համապատասխան ծախսերի՝ ըստ «Ստացողի բյուջեին» դասված կատեգորիաների, Հիմնական համաձայնագրի թիվ 4 հավելվածի 5-րդ կետով նախատեսված ծախսերի, Ստանդարտ պայմանների 2.03-րդ բաժնում նշված հարկերի վճարման համար նախատեսված ծախսերի (Լրացուցիչ համաձայնագրի 4-րդ կետ),

6.3. երաշխավորել օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան Ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կամ դրա իրավահաջորդի (այսուհետ՝ **Ծրագրի իրականացման խումբ** կամ **ԾԻԽ**) ներգրավումը Հիմնական համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետին համապատասխան՝ ապահովելով Ծրագրի իրականացման գծով վերապահված գործառույթների կատարումը ԾԻԽ մասնագետների կողմից, ինչպես նաև վերապահված գործառույթների կատարման համար ԾԻԽ-ին անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը (Լրացուցիչ համաձայնագրի 5-րդ կետ),

6.4. ապահովել, որ ծախսերի (1) կատեգորիայով միջոցներն առաջին հերթին ծախսվեն ներդրումային վարկի միջոցներից, և միայն ներդրումային վարկի միջոցներն ամբողջությամբ ծախսվելուց հետո (1) կատեգորիայով միջոցները ծախսվեն Հայաստանի Հանրապետության բյուջեի միջոցներից (Լրացուցիչ համաձայնագրի 7-րդ կետ, փոփոխված 4-րդ հավելվածի 4-րդ կետ),

6.5. ֆինանսավորել Ծրագրի մասով ցանկացած այլ լրացուցիչ ծախս, որը կարող է առաջանալ դրա իրականացման ընթացքում, և ավելացնել Հիմնական համաձայնագրի շրջանակում դրա ֆինանսավորման ընդհանուր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1(109)2023

գումարը (Լրացուցիչ համաձայնագրի 7-րդ կետ, փոփոխված 4-րդ հավելվածի 5-րդ կետ),

**6.6.** ապահովել Ծրագրի իրականացումը և Հիմնական համաձայնագրի պայմանների կատարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, մասնավորապես՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել Հիմնական համաձայնագրի պայմաններին համապատասխան Ծրագրի իրականացման պատասխանատվությունը, ֆինանսների նախարարության (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել վարկի մասով վճարումներն ամբողջությամբ և ժամանակին կատարելու, Հիմնական համաձայնագրի պայմաններին համապատասխան ԾԻԽ-ի անունով Հատուկ հաշվեհամար բացելու, վարելու և դրա կարգավիճակն ապահովելու, ինչպես նաև Հիմնական համաձայնագրին համապատասխան համաֆինանսավորման համար միջոցները ժամանակին տրամադրելու պատասխանատվությունը, իսկ Ծրագրի իրականացման խմբի՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (կամ նրա իրավահաջորդի) վրա դնել Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատվությունը, ներառյալ՝ ֆինանսների կառավարումը, գնումները, հաշվառման վարումը, միջոցների նպատակային ծախսումը, արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը, ֆինանսական հաշվետվությունների և Հիմնական համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրին առնչվող այլ հաշվետվությունների ձևավորումը և տրամադրումը, արտաքին աուդիտորների ներգրավումը, բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ոլորտի և Հիմնական համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված՝ կիրառելի այլ քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջների կատարումը (Լրացուցիչ համաձայնագրի 6-րդ կետ, փոփոխված 5-րդ հավելվածի 3-րդ կետ),

**6.7.** իրականացնել Ծրագրի կատարման ու դրա նպատակների ապահովման մոնիթորինգ և գնահատում՝ Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 1-ին կետում շարադրված՝ մոնիթորինգի ցուցանիշներին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 1-ին կետ), պատրաստել և Կառավարչին ներկայացնել Ծրագրի մոնիթորինգի արդյունքների ամփոփմամբ հաշվետվությունները, որոնք ձևով և բովանդակությամբ բավարար են Կառավարչի համար, ներառյալ Հիմնական Համաձայնագրի 9-րդ կետի 2.1-ին ենթակետում շարադրված պահանջները (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 2-րդ կետ, ենթակետ 2.1),

**6.8.** ապահովել Հայաստանի Հանրապետության միջոցների հաշվին կատարված ծախսերը հաստատող առաջնային հաշվառման բոլոր փաստաթղթերի պահպանումը (ներառյալ՝ պայմանագրերը, ակտերը, հաշվետվությունները, հաշիվները, հաշիվ-վավերագրերը, ապրանքագրերը,

1 (109)2023  
 ◆ ՏԵՂԵԿԱԿԻՐ  
 ◆ ՍՏԵՂԵԿԱԿԻՐ ԴԱՏԱՐԱՆ



ստացականները և այլ փաստաթղթեր) մինչև Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետում նշված ժամկետներից այն ժամկետի լրանալը, որն ավելի ուշ է վրա հասնելու, ինչպես նաև նշված ժամկետի ընթացքում Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրել այդ հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, ենթակետ 2.2),

**6.9.** Ծրագրի ավարտից հետո պատրաստել և ներկայացնել Ծրագրի ավարտի վերաբերյալ վերջնական հաշվետվությունը՝ Ստանդարտ պայմանների 4.03-րդ բաժնի «դ» ենթակետի դրույթներին համապատասխան (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 2-րդ կետ, ենթակետ 2.2),

**6.10.** Կառավարչի հետ համատեղ ուսումնասիրել Հիմնական համաձայնագրի 6-րդ հավելվածի 2-րդ կետով սահմանված հաշվետվությունները և հետագայում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ծրագրի արդյունավետ ավարտը և դրա նպատակների իրագործումն ապահովելու համար՝ հաշվի առնելով վերը նշված հաշվետվություններում տեղ գտած եզրակացություններն ու առաջարկությունները և տվյալ հարցի վերաբերյալ Կառավարչի կարծիքները (Լրացուցիչ համաձայնագրի 9-րդ կետ, փոփոխված 6-րդ հավելվածի 3-րդ կետ),

**6.11.** անկախ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կիրառվող ուղեցույցների դրույթներից՝ աշխատանքների գնումների իրականացման ժամանակ ստացված առաջարկների գնահատման ժամանակ 5 տոկոսանոց արտոնություն տրամադրել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասնակից պետություններից գնման մասնակիցների առաջարկների համար՝ հաշվի առնելով նրանց գրանցման երկիրը, սեփականատերերի կազմը և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի մասնակից չհանդիսացող պետություններից ներգրավվող ենթակապալի ծավալը (Լրացուցիչ համաձայնագրի 10-րդ կետ, փոփոխված 7-րդ հավելվածի 7-րդ կետ),

**6.12.** միջոցների հատկացման ընթացակարգերին վերաբերող հարցերում Համաձայնագրին չհակասող մասով կիրառել Համաշխարհային բանկի հաճախորդներին միջոցների տրամադրման տեղեկագիրը (2006 թվականի մայիս)՝ հաշվի առնելով հետագա լրացումները և փոփոխությունները (Disbursement Handbook for World Bank clients, May 2006), Ծրագրերի իրականացման համար Համաշխարհային բանկի կողմից միջոցների տրամադրման ուղեցույցը (2006 թվականի մայիսի 1)՝ հաշվի առնելով հետագա լրացումները և փոփոխությունները (World Bank Disbursement Guidelines for Projects, dated May 1, 2006) (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 1-ին կետ),

**6.13.** միջոցների հատկացման համապատասխան հայտով՝ որպես միջոցների նպատակային օգտագործումը հաստատող փաստաթղթեր,

ներկայացնել Հիմնական համաձայնագրի 8-րդ հավելվածի 4-րդ կետի 4.1-ին, 4.2-րդ, 4.3-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 4-րդ կետ, պարբերություն 1),

**6.14.** Կառավարչին վերադարձնել ներդրումային վարկի՝ Հատուկ հաշվեհամարին ավանսավորված միջոցները, որոնց նպատակային օգտագործումը Հայաստանի Հանրապետության կողմից փաստաթղթերով չի հաստատվել ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից հետո 4 (չորս) ամսվա ընթացքում (Լրացուցիչ համաձայնագրի 11-րդ կետ, փոփոխված 8-րդ հավելվածի 5-րդ կետ):

**7.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 169-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64-րդ հոդվածներով և 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

**2.** Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 մարտի 2023 թվականի  
ՍԴՈ-1681

1(109)2023  
◆ ՍԵՂԵԿԱՆ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
273

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ  
ՄԻՋԵՎ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4-ՐԴ ՀԵՐԹ)» ՆԱԽԱԳԾԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ  
ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԹԻՎ 4  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1681  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի թիվ 4 լրացուցիչ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի մարտի 28-ի ՍԴՈ-1681 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի մարտի 28-ի ՍԴՈ-1681 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին»

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ 1(109)2023

սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից

որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-1681 որոշմամբ 2022 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհային միջանցքի շինարարություն (4-րդ հերթ)» նախագծի ֆինանսավորման համար Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը

Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային

ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն ղիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարանն ղիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարանն ղիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարանն ղիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարանն ղիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարանն ղիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարանն ղիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական



դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

ՍԱԳՄԱՆԱՐԴՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(109)2023

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական

1(109)2023  
 ՍԵՆԵԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 281

դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվել դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր:*

Կարծում եմ, որ փվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

**ԴԱՏԱՎՈՐ**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«29» մարտի 2023թ.**



վիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2023 թվականի փետրվարի 9-ի N 149-Ա որոշմամբ հավանություն է տվել 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի փետրվարի 10-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում՝ հանրային առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետության և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև համագործակցությունը ընդլայնելու նպատակով:

2. Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի մասնակից պետություններից (այսուհետ՝ Կողմեր) մեկի պետության տարածքում անդրսահմանային տարածման պոտենցիալ ունեցող արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա առաջացման վտանգի ի հայտ գալու դեպքում տվյալ Կողմն արտակարգ իրավիճակի առաջացման փաստի մասին տեղեկացնում է մյուս Կողմերի իրավասու մարմիններին, ինչպես նաև Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ տվյալ ոլորտում համապատասխան բազային կազմակերպությանը:

3. Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ Կողմերից մեկի պետությունը, որի տարածքում առաջացել է արտակարգ իրավիճակը, օգնություն տրամադրելու հարցմամբ դիմում է մյուս Կողմի պետությանը կամ Կողմերի պետություններին, արտակարգ իրավիճակի վերացման համար կարող են ներգրավվել մյուս Կողմերի պետությունների մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները:

4. Համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը միմյանց օգնություն են ցուցաբերում իրենց հնարավորություններին համապատասխան և կամավորության հիմունքով:

Կողմերից մեկի պետության մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների մասնակցությունը մեկ այլ Կողմի պետության տարածքում արտակարգ իրավիճակի վերացման գործում իրականացվում է հայցող Կողմի օրենսդրությանը, Համաձայնագրին համապատասխան և Կողմերի պետությունների միջև կնքվող երկկողմ միջազգային պայմանագրերի հիման վրա:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորությունները, մասնավորապես՝

5.1. **իրականացնել** պետական սահմանով մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների առաջնահերթ բացթողման համար անհրաժեշտ միջոցառումները, **ապահովել** Հայաստանի Հանրապետության տարածքով դեպի արտակարգ իրավիճակի գոտի տեղաշարժվելիս նրանց ուղեկցումը, ներառյալ պաշտպանությունը, ինչպես նաև **տրամադրել** արտակարգ իրավիճակների կանխարգելման և (կամ) վերացման նպատակներով օգտագործվող սարքավորումների և գույքի՝ տրամադրող Կողմի պետության տարածք վերադարձի երաշխիքներ (հոդված 6),

5.2. **ազատել** մաքսատուրքերի, մաքսային վճարների և հարկերի վճարումից Հայաստանի Հանրապետության պետական (մաքսային) սահմաններով տեղափոխվող, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքներով տարանցիկ տեղափոխվող հանդերձանքը և ծախսանյութերը (հոդված 8, պարբերություն 2),

5.3. **նպաստել** արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման նպատակով հայցող Կողմի պետության տարածք ուղևորվող՝ տրամադրող Կողմի մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների, հանդերձանքի և ծախսանյութերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անարգել տարանցմանը (հոդված 9),

5.4. **կրել** այն ծախսերը, որոնք կապված են մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամների աշխատանքի վարձատրության, բրիգադների անձնակազմի և գույքի ապահովագրության հատուցման ծախսերի, ինչպես նաև մասնագիտացված հակահամաճարակային բրի-

գաղների՝ դեպի արտակարգ իրավիճակի գոտի և հակառակ ուղղությամբ փոխադրման հետ (հոդված 12, պարբերություն 1),

**5.5. իրականացնել** Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների՝ համաճարակաբանական աշխատանքի տեխնոլոգիային, լաբորատոր ախտորոշմանը, հակահամաճարակային միջոցառումների անցկացմանը վերաբերող գործունեություն (հոդված 15):

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

28 մարտի 2023 թվականի  
ՍԴՈ-1682



## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»**  
**ԳՈՐԾՈՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1682 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2023 թվականի մարտի 28-ի ՍԴՈ-1682 որոշմամբ որոշել է, որ 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի մարտի 28-ի ՍԴՈ-1682 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
 ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
 ◆ 1(109)2023

քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը միջազգային պայմանագրերի վավերացման գործընթացի, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նշված գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու՝ իմ՝ որպես Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով էլ պայմանավորված ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

Հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա

Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1682 որոշմամբ 2022 թվականի հոկտեմբերի 28-ին Աստանայում ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալն անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել՝ անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարան դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ՝ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարան դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու

համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարան դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը:

Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար: Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն:

Նկատի ունենալով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է միայն նշում՝ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես՝ էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները

կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչատրամաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ՝** ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար,

իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում, ինչպես նաև սույն գործի նյութերում առկա դիմումի վրա ստորագրության բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ 1(109)2023 ◆ ՏԵՂԵԿԱՆ ԿԻՐԱԿՆԵՐ



24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատություն սրանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շրկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

**ԴԱՏԱՎՈՐ**

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

**«29» մարտի 2023թ.**

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ◆ 1(109)2023



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ  
ՆԿԻՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ**



**2023 թվականի փետրվարի 6-ին** Սահմանադրական դատարանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կազմավորման 27-րդ տարեդարձին նվիրված պաշտոնական միջոցառումը, որին ներկա են եղել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԺ նախագահ Ալեն

Սիմոնյանը, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մի շարք ներկայացուցիչներ:

«Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ողջունելով հյուրերին, իր խոսքում նշել է, որ Սահմանադրական դատարանը, հիմնադրման օրից, անցել է ինստիտուցիոնալ զարգացման բավականին բարդ, սակայն, շատ կարևոր ճանապարհ՝ բախվելով տարաբնույթ մարտահրավերների ու խնդիրների: **«Այդ դժվարությունների զգալի մասը, իհարկե, բնորոշ էին նաև մեր հանրապետության պետական կառավարման համակարգին: Վերջին տարիներին՝ հատկապես ԿՈՎԻԴ-19 համավարակի, 2020 թվականի սահմանադրական փոփոխությունների, Հայաստանի և Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմի և դրան հաջորդող ժամանակահատվածում, այս դատարանի դատավորների մեծամասնության տեսչականը մշտապես եղել և մնում է անսասան՝ սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել Սահմանադրության գերակայությունը և ժողովրդավարության անշրջելիությունը Հայաստանի Հանրապետությունում»:**

Հայաստանում սահմանադրական արդարադատության հիմքերը դրվել են 1995 թվականի հուլիսի 5-ին համապետական հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրության ընդունմամբ, որն ուրվագծեց այնպիսի դատաիրավական համակարգ, որը ներառում էր նաև Սահմանադրական դատարանը: Ի կատարումն ընդունված Սահմանադրության՝ 1995 թվականի նոյեմբերի 20-ին «Ազգային ժողովն ընդունեց «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը, որն ստորագրվեց Հանրապետության Նախագահի կողմից 1995 թվականի դեկտեմբերի 6-ին և ամբողջականացրեց նորաստեղծ սահմանադրական մարմինների գործունեության օրենսդրական հիմքերը:

1996 թվականի փետրվարի 5-ին և 6-ին կատարվեցին Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամների նշանակումները, Ազգային ժողովում տեղի ունեցավ հանդիսավոր երդման արարողությունը, և Բարձր դատարանը պաշտոնապես սկսեց գործել 1996 թվականի փետրվարի 6-ից: Սահմանադրությամբ իրենց վերապահված մանդատի բերումով սահմանադրական դատարաններն աշխարհի տարբեր կետերում, այդ թվում նաև մեր հանրապետությունում, մեծ դեր ունեն հանրային-հասարակական փոխհարաբերությունների հավասարակշռման ու զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգերի առարկայացման գործում:

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**«Սահմանադրական դատարանի գործառությանն ամենաբնորոշ հատկանիշներից մեկը, որը նրան առանձնացնում է դատական իշխանության ավանդական համակարգի մյուս մարմիններից, թույլ է տալիս հասարակության մեջ առկա սուր հակադրությունների կարգավորումը քաղաքական հարթությունից տեղափոխել իրավական հարթություն և լուծում տալ՝ սահմանադրական արդարադատության միջոցով: Այլ կերպ՝ բացառապես իրավունքի հիման վրա և իրավական ընթացակարգերի կիրառմամբ լուծել քաղաքական բնույթի վեճերը, որոշակիորեն նպաստելով պետության ներսում առկա լարվածության թուլացմանն ու հասարակական համերաշխության վերականգնմանը: Դատարանների միջոցով քաղաքական ճգնաժամերի հաղթահարման ձևավորված և կայուն մշակույթի առկայությունը պետության ժողովրդավարական ինստիտուտների և կառույցների կայացվածության ևս մեկ ցուցիչ է, ինչը լրացուցիչ երաշխիքներ է ապահովում ինչպես իրավունքի գերակայության, այնպես էլ՝ առհասարակ պետության կայուն, բնականոն և անցնցում զարգացման համար»,- նշել է ՍԴ նախագահը:**

Արման Դիլանյանն ընդգծել է, որ միայն վերջին տարիների ընթացքում Սահմանադրական դատարանը հանրային և պետական կարևորության մի շարք առանցքային նշանակության գործերով ստանձնել և իրականացրել է յուրահատուկ «հավասարակշռողի» իր առաքելությունը, գործնականում քանիցս ապացուցել վերոհիշյալ գործառույթի արդյունավետությունը՝ ծանրակշիռ իրավական հենք տրամադրելով այս կամ այն լուծմամբ ներպետական խնդիրների հաղթահարման համար, ինչը, իհարկե, հավելյալ պատասխանատվություն է Բարձր դատարանի յուրաքանչյուր դատավորի և աշխատակցի համար:

Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը երախտիքի ու շնորհակալության խոսք է ուղղել Սահմանադրական դատարանի անդրանիկ կազմի անդամներին և ՍԴ առաջին նախագահ Գագիկ Հարությունյանին սահմանադրական արդարադատության ձևավորման և կայացման գործում նրանց հսկայական ավանդի համար:

Բարձր դատարանի նախագահը շնորհակալություն է հայտնել նաև ՍԴ աշխատակազմի բոլոր աշխատակիցներին իրենց ամենօրյա և պատասխանատու աշխատանքը մեծ նվիրումով և հոգատարությամբ կատարելու համար:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կազմավորման 27-րդ տարեդարձի կապակցությամբ ՍԴ մի խումբ աշխատակիցների հանձնվել են հուշանվերներ:

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ



**2023 թվականի մարտի 7-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեին:

Ողջունելով նորանշանակ դեսպանին՝ Արման Դիլանյանը

կարևորել է երկու հարևան պետությունների ջերմ, բարեկամական հարաբերությունները, ինչպես նաև իրավունքի գերակայության ու դատաիրավական համագործակցության ոլորտում արդյունավետ փոխգործակցության ակտիվացումը:

Բարձր դատարանի նախագահը նշել է, որ 2021 թվականին հյուրընկալելով վրացի գործընկերոջը՝ երկուստեք վերահաստատվել է երկկողմանի օրակարգի բոլոր հարցերով բարձր մակարդակի շփումները շարունակելու և համատեղ տարածաշրջանային ծրագրերի իրականացման հնարավորությունները դիտարկելու պատրաստակամությունը:

Դեսպան Շարվաշիձեն շնորհակալություն է հայտնել հանդիպման հնարավորության համար և նշել է, որ հայ-վրացական դարավոր բարեկամությունը պարարտ հող է ստեղծում նաև երկու երկրների սահմանադրական դատարանների միջև իրավական կապերի հետագա ամրապնդման ու խորացման համար:

1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎԳԻՐ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ  
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ**

**31 մարտի 2023թ.** Սահմանադրական դատարանը, կարևորելով հանրային ոլորտում նորարարական լուծումների և էլեկտրոնային գործիքների կիրառման խթանումը, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը, տեղեկացնում է, որ այսուհետ անհատական սահմանադրական դիմում ներկայացնելու նպատակով կարող եք այցելել էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ ([www.e-request.am](http://www.e-request.am)): Վերջինս ֆիզիկական և իրավաբանական անձանց հնարավորություն է ընձեռում, առանց Սահմանադրական դատարան այցելելու, առցանց անհատական սահմանադրական դիմումներ ուղարկելու և դրանց ընթացքին հետևելու՝ տրամադրված հսկիչ համարների միջոցով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ

### ՍԵՐՆԴԻ ՀԵՏ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ ԵՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ**



**2023 թվականի մարտի 17-ին** Սահմանադրական դատարան են այցելել Հայաստանի Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողները: Ապագա իրավագետներին ընդունել է Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացրել Բարձր դատարանի դերն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում:

Մասնակիցների խնդրանքով Արման Դիլանյանն անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանի գործառույթների առանձնահատկություններին, լիազորությունների շրջանակին: Քննարկվել են ուսանողներին հետաքրքրող մի շարք մասնագիտական հարցեր:

Ավելի վաղ, մասնագիտական կողմնորոշման ծրագրի շրջանակներում և ճանաչողական այցերով, Սահմանադրական դատարանը հյուրընկալել

1(109)2023

◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

է նաև հանրապետության տարբեր դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին:

Այցերի ընթացքում, երիտասարդներն ու պատանիները հանդիպում են ունեցել նաև ՍԴ դատավոր Արթուր Վաղարշյանի հետ:

Հյուրերը շրջայց են կատարել Սահմանադրական դատարանի վարչական շենքում:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ  
ԴԻԼԱՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱՅԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ 2023-2026ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԾՐԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ՄԻՋՑԱՈՄԱՆԸ



1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

Արտաքին գործերի նախարարության և Եվրոպայի Խորհրդի համատեղ նախաձեռնությամբ **2023 թվականի փետրվարի 16-ին** պաշտոնապես մեկնարկել է Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ 2023-2026թթ. Գործողությունների ծրագիրը: Պաշտոնական միջոցառմանը հաջորդել է Գործողությունների ծրագրի արդյունավետությանը նվիրված համաժողով և ընդունելություն:

Գործողությունների ծրագրի արդյունավետությանը նվիրված համաժողովի ընթացքում ելույթով հանդես է եկել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

Միջոցառմանը մասնակցել են Գործողությունների ծրագրի շրջանակներում ԵԽ հետ համագործակցող ՀՀ գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ԵԽ անդամ և դիտորդ երկրների դիվանագիտական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների և միջազգային ֆինանսական հաստատությունների ղեկավարներ, բարձրաստիճան ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

**ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԵՄ ԵՎ ԵՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԲԱՐԵՓՈՒՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՈՒ ԾՐԱԳՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**



**2023 թվականի փետրվարի 22-ին** Սահմանադրական դատարանի փոխնախագահ Վահե Գրիգորյանը մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2022թթ. ծրագրային ձևաչափով իրականացված միջոցառումների փակման համաժողովին և ղեկավար հանձնաժողովի ընդլայնված նիստին:

**«Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը»** ծրագրի նպատակն էր ամրապնդել Հայաստանում դատական իշխանության անկախությունը, իրավական ընթացակարգերի արդյունավետությունն ու արդարադատության մատչելիությունը՝ տրամադրելով իրավական աջակցություն արդարադատության, դատական համակարգի և կարգապահական կառուցակարգերի ոլորտների՝ սահմանադրական բարեփոխումներին հաջորդող գործընթացներին, ինչպես նաև խթանել հաշտարարության և արբիտրաժի կիրառումը Հայաստանում՝ Եվրոպայի խորհրդի հանձնարարականներին և չափորոշիչներին համահունչ:

Շնորհակալություն հայտնելով ԵԽ Ստրասբուրգի կառույցների և ԵԽ Երևանյան գրասենյակի պատասխանատու պաշտոնյաներին՝ Սահմանադրական դատարանի հանրային ներկայացվածության նպատակով պաշտոնական կայքէջի ստեղծման և գործարկման, ինչպես նաև 2022 թվականի հունիսին Երևանում կայացած «Դատական իշխանությունը որպես ժողովրդավարության երաշխավոր» խորագրով խորհրդաժողովի անցկացմանն օժանդակելու համար, ՍԴ փոխնախագահ Վահե Գրիգորյանը նշել է, որ Եվրոպայի խորհրդի և Հայաստանի միջև 2023-2026թթ. համար հաստատված գործողությունների ծրագրի շրջանակում Եվրոպայի խորհուրդը դիտարկվում է որպես Սահմանադրության 2020 թվականի հունիսի 22-ին ընդունված փոփոխություններով մեկնարկված Սահմանադրական դատարանի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրի առանցքային միջազգային գործընկեր:

Համաժողովի ընթացքում քննարկվել են ծրագրերի իրականացման արդյունավետությունը, դրանց խթանման հնարավորություններն ու համագործակցության հետագա ուղիները:

Համաժողովին մասնակցել են արդարադատության ոլորտի բարեփոխումներում ներգրավված պետական մարմինների, միջազգային, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ համապատասխան շահառու կառույցների ներկայացուցիչներ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՄԻԵԴ ՆԱԽԱԳԱՀ ՇԻՈՖՐԱ Օ՛ԼԻՐԻԻ ՀԵՏ



**Հունվարի 26-27-ը** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Շիոֆրա Օ՛Լիրիի հրավերով Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն աշխատանքային այցով մեկնել է Ստրասբուրգ՝ մասնակցելու ՄԻԵԴ դատական տարվա բացման

հանդիսավոր նիստին և «Մարդու իրավունքների պաշտպանության միջոցով ժողովրդավարությունը պահպանող դատավորները» խորագրով բարձր մակարդակի դատական սեմինարի աշխատանքներին:

Այցի շրջանակներում տեղի է ունեցել Բարձր դատարանի նախագահի երկկողմ հանդիպումը ՄԻԵԴ նախագահ Շիոֆրա Օ՛Լիրիի հետ: Արման Դիլանյանը շնորհավորել է եվրոպացի գործընկերոջը՝ բարձր պաշտոնում ընտրվելու առթիվ՝ հույս հայտնելով, որ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի միջև արդյունավետ համագործակցությունը կշարունակի անշեղորեն զարգանալ: ՄԴ նախագահին ընդգծել է նմանօրինակ միջոցառումների կարևորությունը՝ ազգային բարձր դատարանների և ՄԻԵԴ-ի միջև համագործակցության խթանման, եվրոպական մայրցամաքում իրավունքի գերակայության, հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության ավելի բարձր մակարդակի հաստատման գործում:

ՄԻԵԴ նախագահը կարևորել է հայազգի գործընկերոջ հետ նման ձևաչափերով աշխատանքային հանդիպումները և ներկայացրել է անդամ պետությունների ազգային դատարանների հետ ՄԻԵԴ երկխոսության և

համագործակցության զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է գործընկերության զարգացումը Եվրոպայի բարձր դատարանների միասնական ցանցի շրջանակներում: Անդրադարձ է կատարվել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիայի 16-րդ լրացուցիչ արձանագրության շրջանակներում ազգային բարձր դատարանների և ՄԻԵԴ-ի միջև իրականացվող համագործակցությանը:

Սահմանադրական դատարանի նախագահին աշխատանքային քննարկում է ունեցել նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Սիմոնա Գրանատա-Մենգինիի հետ: Արման Դիլանյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանում իրականացվող ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքը և առկա ծրագրերը: Սիմոնա Գրանատա-Մենգինին վերահաստատել է ԵԽ Վենետիկի հանձնաժողովի լիարժեք հանձնառությունը՝ աջակցելու Բարձր դատարանում ընթացող բարեփոխումներին, ընդգծել է երկկողմ համագործակցության դրական ավանդույթներն ամրապնդելու պատրաստակամությունը:

**ՆՈՐ ԳՐՔԵՐ**

**ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԸ**



Սահմանադրական դատարանի կազմավորման 27-րդ տարեդարձին ընդառաջ հրատարակվել է ՍԴ նախագահի խորհրդական Ալինա Փխրիկյանի, ՍԴ նախագահի օգնական Արտակ Ղազարյանի և ՍԴ փորձագիտական-վերլուծական բաժնի վարիչ Աիդա Թադևոսյանի համահեղինակությամբ կազմված ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շտեմարանը:

Շտեմարանի կազմման ընթացքում ուսումնասիրվել է Սահմանադրական դատարանի ավելի քան 3000 տարբեր տեսակի որոշում, այդ թվում նաև՝ դատական կազմերի և աշխատակարգային որոշումները, առանձնացվել դրանցում արտահայտված առանցքային կարևորություն ունեցող իրավական դիրքորոշումները:

Շտեմարանի 1-ին բաժնում առաջին անգամ համակարգված ձևով ներկայացվում են Դատարանի կողմից տարիների ընթացքում ձևավորած այն իրավական դիրքորոշումները, որոնք առնչվում են սահմանադրական վերահսկողության տարբեր ձևերով առանձին իրավասու սուբյեկտների կողմից ՍԴ ներկայացվող դիմումներին առաջարկվող պահանջներին,

որոնց հետևելով հնարավոր կլինի կազմել Սահմանադրական դատարանի համար ընդունելի, այն է՝ ընդունելիության փուլը հաղթահարող դիմում:

Ժամանակակից թվային հասարակությունում ապրող «օգտատերերի» համար Շտեմարանը մատչելի, հասանելի և «հասկանալի» դարձնելու նպատակով, առաջին անգամ հայրենական պրակտիկայում դատական ակտերի Շտեմարանը կազմվել է՝ օգտագործելով ժամանակակից թվային տեխնոլոգիաների գործիքակազմը՝ ներդնելով յուրաքանչյուր որոշմանը համապատասխանող QR կոդ, ինչը հնարավորություն կտա, առանց որոնման համակարգերի վրա լրացուցիչ ժամանակ ծախսելու, միանգամից անցում կատարել հետաքրքրող որոշման պաշտոնական տեքստի ամբողջական տարբերակին:

Տեղեկացնենք, որ Շտեմարանը նախատեսված չէ վաճառքի համար: Մասնագիտական հանրության, ՀՀ սահմանադրական իրավունք ուսումնասիրող գիտնականների, ուսանողների և հետազոտողների համար Շտեմարանը հասանելի կլինի Հանրապետության պետական մարմինների և ուսումնական հաստատությունների գրադարաններում:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 372/2-14 որոշմամբ

## Խմբագրական խորհուրդ՝

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ, Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ֆ. ԹՈՒՆՅԱՆ, Ա.  
ԹՈՒՆՅԱՆ, Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՆԱԶԱՐՅԱՆ, Է.  
ՇԱԹԻՐՅԱՆ, Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ, Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝

Ի.Գ.Թ., դոցենտ Ա. Փխրիկյան

## Խմբագիր՝

Ս. Խաչատրյան

Ստորագրված է տպագրության՝ 15.04.2023թ.

Դասիչ՝ 77754

Գրաչափը՝ 70X100 1/16

Տպաքանակը՝ 100 օրինակ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Բաղրամյան 10

Հեռախոս՝ 011-58-81-81 (189)

E-mail: armlaw@concourt.am

<http://www.concourt.am>

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(109)2023


Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(109)2023

Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(109)2023



**Խմբագրության հասցե՝**  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am  
[www.concourt.am](http://www.concourt.am)

**ISSN 8888-0000**



ABC-abc-1234

